

11703/2

947.925



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՄԲԱՏ ԱԼԲԵՐՏԻ

ՀԱՅԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

1918-1920 ԹԹ.

A105489

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ. ԱՇԽԵԱՆ
ՍԱՏԵՆԱԸԱՐ

144



ARCH. MESROB ASHJAN
BOOK SERIES

144

Sp...



ԵՐԵՎԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2016

ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3 (52)

Մ 710

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը:

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Հ. Պետրոսյան

Մինասյան Ս. Ա.

Մ 710 Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., Եր., Պատմության ինստիտուտ, 2016, 210 էջ:

Աշխատությունը նվիրված է 1918-1920 թթ. Հյուսիսային Կովկասի տեղացի և գաղթական հայության պատմությանը: Ներկայացվում է 1918թ. թուրքական արշավանքի հետևանքով Անդրկովկասից հայության գաղթը Հյուսիսային Կովկաս, նրանց թվաքանակը և դրությունը: Լուսաբանվում է երկրամասի խորհրդային և ոչ խորհրդային իշխանությունների վերաբերմունքը և քաղաքականությունը երկրամասի տեղացի, գաղթական և ռազմագերի հայերի նկատմամբ: Ուսումնասիրվել է Հյուսիսային Կովկասում և առհասարակ Ռուսաստանի հարավում իրենց գործունեությունը ծավալած ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական կառույցների, ինչպես նաև երկրամասում գործող հայկական կազմակերպությունների պատմությունը: Աշխատանքում լուսաբանվում է նաև 1919-1920 թթ. Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականների և ռազմագերիների հայրենադարձության պատմությունը:

Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3(52)

ISBN 978-9939-860-26-8

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

1918թ. թուրքական արշավանքի հետևանքով հարյուր հազարավոր հայեր դարձան գաղթական: Նրանց մի մասը հեռացավ Հյուսիսային Կովկաս և երկրամասում բնակվող տեղացի հայերի հետ միասին հայտնվեց Ռուսաստանում մոլեզնոդ քաղաքացիական պատերազմի կենտրոնում:

1918թ. նոյեմբեր-1920թ. մարտ ամիսներին, այսինքն Հյուսիսային Կովկասում ոչ խորհրդային պետական կազմավորումների գոյության շրջանում, հայ գաղթականների մի մասը երկրամասի հայկական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների աջակցությամբ վերադարձավ հայրենիք: Հայ գաղթականների հայրենադարձությանը աջակցեցին նաև Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումները: Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի ջանքերով Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների հայրենադարձությունը շարունակվեց նաև երկրամասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո:

Ժամանակագրական առումով մենագրությունն ընդգրկում է մոտ երեք տարի՝ 1918թ. փետրվարից մինչև 1920թ. դեկտեմբերը, այսինքն թուրքական արշավանքի սկզբից մինչև Հայաստանի խորհրդայնացումը: Մոտ երեք տարի ընդգրկող ժամանակաշրջանում Հյուսիսային Կովկասում քաղաքական գործընթացները եղել են բարդ ու խճճված: Դա բուցատրվում է հետազոտվող ժամանակաշրջանի բնույթով, խառն ու բարդ իրադարձություններով, գործող ուժերի շահերի հակամարտությամբ: Այդ իրողությունից ելնելով՝ հետազոտման ենթակա պատմական գործընթացը բաժանվել է առանձին ժա-

մանակահատվածների՝ նկատի ունենալով քաղաքական իրադրության փոփոխությունները և Հյուսիսային Կովկասի գաղթական ու հնաբնակ հայության առջև ծառայած խնդիրները: Միաժամանակ պահպանվել է հավասարակշռությունը պրոբլեմային և ժամանակագրական հետազոտության սկզբունքների միջև: Այդ ժամանակահատվածներն են՝ 1918թ. փետրվար-հոկտեմբեր, 1918թ. նոյեմբեր-1920թ. մարտ, 1920թ. ապրիլ-դեկտեմբեր:

Առաջին ժամանակահատվածում թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժելու հետևանքով սկսվեց Վրաստանում ապաստանած, ապա Բաքվի նահանգի հայերի հոսքը Հյուսիսային Կովկաս:

Երկրորդ ժամանակահատվածում Հյուսիսային Կովկասի հայկական ազգային կազմակերպությունների, երկրամասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների ջանքերով և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների ու Անդրկովկասում բրիտանական ուժերի հրամանատարության աջակցությամբ կազմակերպվեց Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների և ռազմագերիների հայրենադարձությունը Հայաստան, նաև տեղափոխումը մասամբ՝ Վրաստան և Ադրբեջան:

Երրորդ ժամանակահատվածում Հայաստանի կառավարության և խորհրդային իշխանության ջանքերով կազմակերպվեց Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի այլ շրջանների հայերի ներգաղթը Հայաստան, որը, սակայն, երկար չտևեց և 1920թ. թուրք-հայկական պատերազմի պատճառով դադարեց:

1918-1920 թթ. ընթացքում Հյուսիսային Կովկասի քաղաքական քարտեզի վրա ձևավորվեցին և անհետացան մոտ մեկ տասնյակ խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումներ: Դրանց

սահմանները և անվանումները հիմնականում համընկան Ռուսական կայսրության փլուզման նախօրեին Հյուսիսային Կովկասում գոյություն ունեցող վարչատարածքային միավորների սահմաններին և անվանումներին (օրինակ՝ Թերեքի, Կուբանի, Ստավրոպոլի, Չեռնոմորսկի խորհրդային հանրապետություններ և այլն): Ռուսական կայսրության փլուզման նախօրեին Հյուսիսային Կովկասը վարչատարածքային առումով կազմված էր Կուբանի, Թերեքի, Դադստանի մարզերից և Չեռնոմորսկի, Ստավրոպոլի նահանգներից:

1918-1920 թթ.-ին և դրանց նախորդած տարիներին Դոնի հայաշատ համայնքները չեն մտել Հյուսիսային Կովկասի աշխարհագրական և վարչատարածքային սահմանների մեջ, և միայն 1920-ական թթ.-ին խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասը և Դոնը ժամանակավորապես միավորեց Հյուսիսկովկասյան երկրամասի մեջ¹: Սակայն նկատի ունենալով 1918-1920 թթ. Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախների հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում Նոր Նախիջևանի և Ռոստովի հայկական համայնքների ունեցած ակտիվ դերը, մասնակի անդրադարձ է կատարվել նաև այդ համայնքների և այնտեղ գործող ազգային կազմակերպությունների պատմությանը:

Հայ պատմագրության մեջ չկա առանձին ուսումնասիրություն, որը նվիրված լինի 1918-1920 թթ. Հյուսիսային Կովկասի գաղթական և հնաբնակ հայերի պատմությանը: Մենագրությունում փորձ է արվում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված արխիվային նյութերի, տվյալ ժամանակաշրջանի մամուլի հրապարակումների,

¹ Ст'у մանրամասն Цуциев А., Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), Москва 2006, Шнайдер В., Советское нациестроительство на Северном Кавказе (1917 – конец 1950 х гг.): Закономерности и противоречия, Армавир, 2007:

Ժամանակակիցների հուշերի հիման վրա ներկայացնել 1918-1920 թթ. Հյուսիսային Կովկասի գաղթական և հնաբնակ հայերի ամբողջական պատմությունը:

Հայ պատմագրության համար նորույթ է թուրքական գորքերի 1918թ. արշավանքի հետևանքով Անդրկովկասից հայերի Հյուսիսային Կովկաս գաղթի, նրանց թվաքանակի, տեղաշարժերի և հայրենադարձության ուսումնասիրությունը:

Աշխատանքում առաջին անգամ համակողմանի և ամբողջական ներկայացվել է 1918-1920 թթ. Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի պատմությունը: Հանգամանորեն հետազոտվել է երկրամասի հայերի մասնակցությունը քաղաքացիական պատերազմին, վեր է հանվել հայկական կազմակերպությունների գործունեությունը և 1918-1919 թթ. Սոչիի շրջանի հայերի ինքնապաշտպանությունը:

Մենագրության մեջ առաջին անգամ ուսումնասիրվել է Հյուսիսային Կովկասի հայության կյանքում նշանակալի դեր ունեցած հասարակական-քաղաքական և դիվանագիտական գործիչների (Հ. Սաղաթելյան, Հ. Սառիկյան, Ա. Տոնյան, Ա. Հակոբյան և այլոք) ու նրանց ղեկավարած կառույցների գործունեությունը:

Մենագրությունը շարադրված է նորահայտ արխիվային վավերագրերի, փաստաթղթերի, վիճակագրական նյութերի, մամուլի և գրականության քննական վերլուծության և համադրման սկզբունքով: Հետազոտվող խնդիրները դիտարկվել են պատմաքննական, փաստագրական և վիճակագրական տվյալների վերհանման և վերլուծության մեթոդների կիրառմամբ: Հիմնահարցը հետազոտելիս հիմք ենք ընդունել պատմական ճշմարտությունը, օբյեկտիվությունը, անաչառությունը և անկողմնակալությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1918Թ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

1.1 Հյուսիսային Կովկասում հայերի թվաքանակը և դրությունը թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժելու նախօրեին

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում Հաստանը երկար ժամանակ գտնվել է օտար նվաճողների տիրապետության տակ: Հայրենիքում ստեղծված քաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմանները ստիպել են հայ ժողովրդի մի հատվածին արտագաղթել համեմատաբար ավելի ապահով վայրեր, այդ թվում՝ Հյուսիսային Կովկաս: Հայերի հոսքը երկրամաս սկսվել է վաղ միջնադարից², սակայն համահավաք հայկական գաղթավայրեր այնտեղ առաջացան միայն 18-րդ դարի 20-ական թթ.-ին: Այդ գաղթավայրերի առաջացման և զարգացման պատմությունը անմիջականորեն կապվում է Հյուսիսային Կովկասում Ռուսական կայսրության իրականացրած քաղաքականության հետ:

² Տե՛ս մանրամասն՝ Багдасарян Р., История армянской общины Грозного (середина XIX – 1920г.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, специальность Է.00.01 – История армянского народа, с. 14-16:

18-րդ դարի սկզբից Ռուսական կայսրության միապետները երկրի հարավում գտնվող սակավաբնակ տափաստանները բնակեցնելու ու տնտեսապես յուրացնելու նպատակով լայն առանձնաշնորհումներ էին տալիս և այդ տարածքներ էին հրավիրում թուրքահպատակ և պարսկահպատակ հայերին³: Օգտվելով ռուսական պետության ընձեռած լայն հնարավորություններից՝ հայերը թողնում էին իրենց հայրենիքը և տեղափոխվում Հյուսիսային Կովկաս: Այդ եղանակով 18-րդ դարի ընթացքում երկրամասում ձևավորվեցին Սուրբ Խաչի, Ղզլարի և Մոզդոկի հայաշատ գաղթավայրերը⁴:

19-րդ դարում հայության հոսքը Հյուսիսային Կովկաս շարունակվեց: 18-րդ դարում առաջացած հայկական գաղթավայրերի կողքին ձևավորվեցին նորերը (Արմավիրում, Եկատերինոդարում, Վլադիկավկազում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Գեորգիևսկում, Գրոզնիում, Ստավրոպոլում և այլն):

Առաջին աշխարհամարտի նախօրեին Հյուսիսային Կովկասում բնակվող հայերի թիվը հասել էր 70754-ի⁵: 1915-1917 թթ.-ին թուրքական ջարդերից մազապուրծ եղած արևմտահայերի և

³ Տե՛ս Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), էջ 11, Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920թ.), հատոր առաջին, էջ 346-374, Багдасарян Р., Торгово-экономическая деятельность армянского купечества на Тереке (XVIII – начало XX вв.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, մայիս-օգոստոս, N 2 (604), էջ 48-49:

⁴ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920թ.), հատոր առաջին, էջ 348-355:

⁵ Տե՛ս Խոջարեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, էջ 115:

պարսկահայերի գաղթի հետևանքով Հյուսիսային Կովկասի հայ բնակչության թիվը մոտ 30 հազարով ավելացավ⁶:

Փաստորեն 1918թ. թուրքական արշավանքի նախօրեին Հյուսիսային Կովկասի հայության թիվը շուրջ 100 հազար էր: Այս գանգվածը սոցիալ-տնտեսական դրությամբ և քաղաքական հայացքներով միատարր չէր: Օրինակ «Հորիզոն»-ը 1918թ.-ի նոյեմբերի 1-ի համարում, անդրադառնալով Հյուսիսային Կովկասում հայերի բաժանմանը խմբերի, գրում է. «Հյուսիսային Կովկասի գաղթականները բաժանվում են երեք խմբի՝ այնտեղ հաստատվածները, ժամանակավոր եկածներն ու մնացածները և վերջապես ամենից մեծ մասը՝ փախածները, որոնք որոշել են վերադառնալ հայրենիք»⁷: Վերը ասվածից երևում է, որ Հյուսիսային Կովկասի ողջ բնակչությունը ընկալվում էր որպես գաղթականություն, որը բաժանված էր 3 խմբի: Սակայն ճիշտ չի լինի երկրամասի հայությանը բնութագրել որպես գաղթական, քանի որ նրանց մեջ կար մի ստվար գանգված, որն արդեն մի քանի սերունդ ապրում էր Հյուսիսային Կովկասում և հեռու էր գաղթական կոչվելուց:

Ռուսաստանի հայության առանձին խմբերի դասակարգման փորձ է արել Հայաստանի առաջին Հանրապետության

⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6-րդ, էջ 645, Арутюнян А. Первая мировая война и армянские беженцы (1914-1917гг.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, с. 56, Ованесов Б., Отношение армянских общин Ставропольской губернии к Первой мировой войне (1914-1917гг.), «Լրաբեր ԽՍՀՄ-ի հայրենիքի», 2001, մայիս-օգոստոս, N 2 (604), էջ 127, Багдасарян Р., История армянской общины Грозного (середина XIX – 1920гг.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, специальность է.00.01 – История армянского народа, Ереван, 1999, с. 160:

⁷ «Հորիզոն» 1918, նոյեմբերի 1, N 224:

խորհրդարանի անդամ, 1919թ. հատուկ լիազորություններով և հանձնարարականով Հյուսիսային Կովկաս գործուղված Մարտին Հարությունյանը: Նա գրում է. «Դրանց (հայերին - Ս.Մ.) կարելի է բաժանել գլխավորաբար երեք կատեգորիայի. 1) հնաբնակ հայեր, ինչպես Ն.Նախիջևանի, Արմավիրի, մասամբ Մոսկվայի և Պետերբուրգի հայությունն է, որ առհասարակ տեղացի է, 2) հետո Անդրկովկասից կամ Թուրքահայաստանից այնտեղ պանդխտած կամ գաղթած հայեր, որոնք սակայն Ռուսաստանում բնիկներ չեն, այլ ապրում են իրենց ծննդավայրի անցազրերով, և 3) պատերազմի ժամանակ այնտեղ ապաստան գտած հայեր թե՛ Թուրքիայից և թե՛ Անդրկովկասից: Վերջին երկու կատեգորիայի հայությունը իրեն համարում է Հայաստանցի և մի շարք խնդիրներով կապված է Հայաստանի ներկայացուցիչների հետ – անցազրային, զինվորագրական, գաղթականական-խնամատարական և այլն»⁸:

Հյուսիսային Կովկասի հնաբնակ հայերին գաղթականներից տարանջատելու նպատակով երկրամասի հայ բնակչությանը ճիշտ կլինի պայմանականորեն բաժանել երեք խմբի.

1 «Հնաբնակ հայերի» խումբն ունի 3 ենթախումբ.

1.1 «Հնաբնակ հայեր» - հաստատվել են երկրամասում մինչև 19-րդ դարի կեսերը: Նրանց շարքին կարելի է դասել չերքեզահայերին և 18-րդ դարում Պարսկաստանից ու մասամբ Արևմտյան Հայաստանից գաղթած հայության սերունդներին: Հնաբնակ հայերը հիմնականում բնակվում էին Հյուսիսային Կովկասի քաղաքներում (Արմավիր, Եկատերինոդար, Մոզդոկ, Ղզլար, Սուրբ Խաչ, Դերբենտ և այլն) և զբաղվում էին գլխավորապես առևտրով ու արհեստներով, իսկ հետագայում նաև ներգրավվեցին երկրամա-

⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 333, թ. 2:

սի արդյունաբերության մեջ: Նրանք հիմնականում ապրում էին ապահով և բարեկեցիկ կյանքով: Այս ենթախմբի ներկայացուցիչները երկար ժամանակ սերտ շփման մեջ լինելով հարևան ժողովուրդների, մասնավորապես ռուսների հետ՝ 20-րդ դարի սկզբին մասամբ ձուլվել են՝ կորցնելով ազգային դիմագծի մի մասը: Միակ կապը թերևս Առաքելական եկեղեցին էր: Այդ խմբի ներկայացուցիչներին գաղթական համարել չի կարելի:

1.2 «Նորաբնակ հայեր» - հաստատվել են Հյուսիսային Կովկասում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարի 90-ական թթ.-ին: Նրանց հիմնական մասը համշենահայերն էին, մասամբ նաև՝ պարսկահայեր: Համշենահայերը հաստատվել են Հյուսիսային Կովկասի Սև ծովի առափնյա շրջաններում, իսկ հետո տարածվել են նաև Կուբանի երկրամասում: Նորաբնակ հայության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, մասնավորապես՝ ծխախոտագործությունը և այգեգործությունը: Նրանց մեծ մասն ուներ իր սեփական հողակտորը, որի արտադրանքը վաճառելով՝ ապահովում էր իր գոյությունը:

1.3 «Օտարահպատակ հայեր» - մեծ մասը 19-րդ դարի 90-ական թթ.-ից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը Հյուսիսային Կովկաս տեղափոխված հայությունն էր՝ գերազանցապես համշենահայությունը: Օտարահպատակ հայերը մեծ մասամբ հաստատվել էին Չեռնոմորսկի նահանգում⁵, մասամբ նաև Կուբանի մարզում: Ցարական իշխանության անբարյացակամ վերաբերմունքի պատճառով այս ենթախմբի ներկայացուցիչների միայն չնչին մասն է կարողացել ռուսահպատակ դառնալ և հար-

⁵ Չեռնոմորսկի նահանգը՝ Նովոռոսիյսկ կենտրոնով, ձևավորվել է 1896թ.. (տե՛ս Անանյան Զ., Խաչատրյան Բ., Армянские общины России, с. 75):

կադրված էր հողից օգտվել միայն վարձակալական իրավունքով⁹: Չնայած դրան՝ թուրքահպատակ հայերը իրենց քրտնաջան աշխատանքի շնորհիվ բավական ապահով կյանքով էին ապրում: Այդ իսկ պատճառով սխալ կլինի նրանց հավասարեցնել Առաջին աշխարհամարտի ընթացքում երկրամաս եկած անօթևան և սոված հայ գաղթականների կարգավիճակին:

2. «Գաղթական հայերի» խումբն ունի 2 ենթախումբ.

2.1 «Հին գաղթականներ» - անցել են Հյուսիսային Կովկաս 1915-1917թթ.: Մեծ մասը 1918թ. սկզբին ուներ ժամանակավոր օթևան և աշխատանք¹⁰: Սակայն, ի տարբերություն հնաբնակ հայերի, հին գաղթականության դրությունը ծանր էր. նրանք հատկապես տուժեցին քաղաքացիական պատերազմի տարիներին:

2.2 «Նոր գաղթականներ» - գաղթել են Հյուսիսային Կովկաս 1918թ. ընթացքում: Նրանք Հյուսիսային Կովկասի հայության ամենից մեծաթիվ, միևնույն ժամանակ ամենից անօգնական մասն են:

3. «Հայ ռազմիկներ»: Այս խմբի ներկայացուցիչները Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կռվել էին Արևմտյան ռազմաճակատում՝ ցարական բանակի շարքերում: Նրանց մի մասը պատերազմի տարիներին հայտնվեց ավստրիական ու գերմանական զբոսայգիների մեջ: Այս խմբի ներկայացուցիչները ցարական բանակի քայքայումից և Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հյուսիսային Կովկասով փորձում էին անցնել Անդրկովկաս:

⁹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6-րդ, էջ 647, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 470:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200 ց.1, գ.143, թ.25:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Հյուսիսային Կովկասում իրենց գործունեությունը աշխուժացրին Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները: Հատկապես մեծ ժողովրդականություն էր վայելում Դաշնակցությունը: 1917թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Հյուսիսային Կովկասի դաշնակցական կազմակերպությունների և խմբերի ժողովը, որտեղ որոշվեց ստեղծել Հյուսիսկովկասյան կենտրոնական կոմիտե, որի գաղափարակազմակերպչական կենտրոնը դարձավ Արմավիրը¹¹: Դաշնակցությունը ակտիվորեն մասնակցեց երկրամասի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Օրինակ, 1917թ. ամռանը Եկատերինոդարի քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ Դաշնակցությունը հավաքեց ձայների 1.3 տոկոսը:

Հյուսիսային Կովկասի հասարակական-քաղաքական կյանքում Դաշնակցության ակտիվ դերակատարությունը պահպանվեց նաև 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: 1918թ. գարնանը, երբ Եկատերինոդարում տեղի ունեցավ իշխանափոխություն, 1917թ.-ին դաշնակցական ղեկավարների գլխավորությամբ ստեղծված 100 հոգանոց հայկական ջոկատի ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ խուսափել արյունահեղությունից և խուճապից: 1918թ. ապրիլին, երբ ջոկատը հեռանում էր Եկատերինոդարից,

¹¹ St´u Симонян М., Армянская диаспора Северо-Западного Кавказа: формирование, конфессиональный облик, взаимоотношения с властью, общественными и религиозными объединениями (конец XVIII - конец XX века), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02, с. 62:

քաղաքի իշխանությունները շնորհակալություն հայտնեցին հայկական ջոկատին օգնության համար¹²:

Հյուսիսային Կովկասի հայերը չէին սահմանափակվում միայն ազգային կուսակցություններին անդամակցելով: Նրանց շարքերում կային անարխիստներ, բոլշևիկներ, մենշևիկներ, կադետներ, էսեռներ¹³:

Հյուսիսային Կովկասի հայ բուրժուազիայի, առևտրականների և արդյունաբերողների մեծ մասը 1917թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո համագործակցեց ժամանակավոր կառավարության հետ, իսկ 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո աջակցեց երկրամասի ոչ խորհրդային ուժերին: Երկրամասի հայ բանվորների և հողագուրկ գյուղացիների մեծ մասը աջակցեց խորհրդային իշխանությանը¹⁴:

Հյուսիսային Կովկասի առանձին շրջաններում բնակվող հայ բնակչության քաղաքական կողմնորոշման վրա մեծ ազդեցություն ուներ տեղական իշխանության վերաբերմունքը: 1917թ. ամռանը Չեռնոմորսկ նահանգի թուրքահայատակ հայերը ժամանակավոր կառավարության կողմից տեղական մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկվելու պատճառով սկսեցին աջակցել խորհրդային իշխանությանը: Դեռ 1917թ. օգոստոսին Նիժնայա Շիլովկա գյուղում Սոչիի հեղկոմը հայ կառավարներից կազմակերպեց կարմիրզվարդիական ջոկատ, որի ղեկավարը Կ. Օֆլյանն էր:

¹² Տե՛ս Համշեն և համշենայութիին (գիտաժողովի նիւթեր), Երևան, 2007, էջ 78-79, Симомян М., ..., նշվ. աշխ., ս. 64:

¹³ Տե՛ս Симомян М., ..., նշվ. աշխ., էջ 62:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

1918թ. հունվարին Սոչիում խորհրդային իշխանության հաստատումից հետո կազմավորվեցին խորհուրդներ, որտեղ ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում հայերը: Օրինակ, Սոչիի քաղաքային խորհրդի նախագահ ընտրվեց Ս. Տեր-Գրիգորյանը¹⁵:

Եթե 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանում իշխանության համար պայքարում էին բոլշևիկները և սպիտակները, ապա Ռուսաստանի հայերի շրջանում այդ պայքարն ընթանում էր հայ բոլշևիկների և դաշնակցականների միջև:

1917թ. դեկտեմբերին Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի ենթակայությամբ կազմակերպվեց Հայկական գործերի կոմիսարիատը: Հայկական գործերի կոմիսար նշանակվեց Վառլամ Ավանեսովը, իսկ նրա տեղակալ՝ Վահան Տերյանը¹⁶: Խորհրդային իշխանությունն այդ կառույցը ծառայեցրեց Ռուսաստանի տեղացի և գաղթական հայերի շրջանում խորհրդային գաղափարների տարածմանը և հակահեղափոխության դեմ՝ նրա ազգային դրսևորումներով հանդերձ, պայքարելու համար¹⁷: Հայկական գործերի կոմիսարիատը իր վրա դրված պարտավորությունները իրականացնում էր կոմիսարիատի բաժինների և խորհրդային իշխանության տարածքում գործող նրանց տեղական ներկայացուցչությունների միջոցով¹⁸: Հայկական գործերի կոմիսարիատի կողմից իրականացվող պայքարի հիմնական թիրախը Ռուսաստանում գործող հայկական ազգային

¹⁵ Տե՛ս Минасян М., Армяне Причерноморья, с 116:

¹⁶ Տե՛ս Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 27:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 25-26:

¹⁸ Տե՛ս Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921 թթ., էջ 59-61:

կազմակերպություններն էին՝ Հայոց ազգային խորհուրդները, բարեգործական, գաղթականական, հայրենիքի փրկության, ուսանողական և այլն: Մինչև 1918թ. կեսերը Հյուսիսային Կովկասում Հայկական գործերի կոմիսարիատի աշխատակիցների բացակայության շնորհիվ հայ բուլճնիկների և դաշնակցականների պայքարը սուր բնույթ չընդունեց: Երկրամասում Հայկական կոմիսարիատից անջատ գործող հայ բուլճնիկները, ի տարբերություն Մոսկվայի և Ռուսաստանի կենտրոնական շրջանների իրենց գաղափարակիցների, ավելի հանդուրժող վերաբերմունք ունեին հայկական ազգային կազմակերպությունների և Դաշնակցության հանդեպ: Նրանց ավելի շատ մտահոգում էին ոչ թե ազգային կազմակերպությունների և Դաշնակցության դեմ պայքարը, այլ 1915-1917թթ. Հյուսիսային Կովկաս եկած գաղթականներին աջակցելու և Կովկասյան ռազմաճակատի համար հայ զինվորներ ուղարկելու խնդիրները:

1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Հյուսիսային Կովկասի մեծ մասում ձևավորված խորհրդային իշխանության պահանջով երկրամասի հայոց ազգային խորհուրդները վերանվանվեցին հայ ժողովրդական հեղափոխական կոմիտեների, և նոր ընտրությունների միջոցով նրանց կազմը համալրվեց բուլճնիկ գործիչներով: Փաստորեն երկրամասի հայկական կազմակերպություններում աշխատում էին թե՛ հայ բուլճնիկները, թե՛ դաշնակցական գործիչները: Անդրադառնալով երկրամասի հայկական կազմակերպությունների դրությանը՝ Հյուսիսային Կովկասի և Դոնի հայ զինվորների ռազմական կոմիսար Սիրաք Գրիգորյանը 1918թ. հունիսի 15\28 Թիֆլիսի (հնարավոր է՝ նաև Բաքվի) Հայոց ազգային խորհրդին ուղղված զեկույցում գրում է. «Մարտի

105489

սկզբներին (1918թ. - Ս.Ս) համարյա թե ամեն տեղ էլ (Հյուսիսային Կովկասում և Դոնում - Ս.Ս) նոր ընտրություններ եղան և ազգային խորհուրդները այդպես կազմվեցին: Բացի այդ միատեսակ գործառնություն ունենալու համար այդ բոլոր կոմիտեները առանձին համագումարներ ունեցան և ընտրեցին մի գործադիր մարմին՝ «կենտրոնական կոմիտե» անունով, որը նստելով Արմավիրում ղեկավարում էր բոլոր մարմիններին և բավականին լավ գործառնություն էր սկսել»¹⁹: Փաստորեն խորհրդային իշխանության օրոք ձևավորված Արմավիրի Կենտրոնական կոմիտեն իր վրա վերցրեց Արմավիրում գործող Դաշնակցության Հյուսիս-կովկասյան կենտրոնական կոմիտեի գործառույթները:

Հյուսիսային Կովկասի հայերի մի մասը կամավոր կամ հարկադրաբար խորհրդային և ոչ խորհրդային բանակներում ծառայելով՝ դարձավ քաղաքացիական կռիվների անմիջական մասնակից: Այսպես, խորհրդային իշխանության կողմից 1918թ. ապրիլի 10-ից Հյուսիսային Կովկասում սկսված զորահավաքի հետևանքով հազարավոր հայեր զորակոչվեցին Կարմիր բանակ²⁰: Օրինակ, 1918թ. ապրիլին Արմավիրում կազմավորված հայկական ջոկատը ուղարկվեց Սուխում՝ խորհրդային իշխանությանը համակրող ապստամբներին օգնելու²¹: Եվս 500 հայ զինվոր՝ 2000 ռուս զինվորների հետ, ուղարկվեցին Բաքվին օգնության, սակայն կարողացան հասնել միայն մինչև Գեորգիևսկ²²:

¹⁹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.158, թ.36, Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., ատենախոսություն, է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, էջ 24-25:

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ.36, թ.117:

²¹ Տե՛ս М. Минасян, Армяне Причерноморья, с 117:

²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.158, թ.35:



1917թ. փետրվարյան հեղափոխությունը քայքայիչ ազդեցություն ունեցավ ոչ միայն Կովկասյան, այլև Արևմտյան ռազմաճակատի վրա, որտեղ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեմ կռվում էին մոտ 150 հազար հայ զինվորներ (որոնց մի մասը գերի էր ընկել և կարողացավ վերադառնալ միայն Համաշխարհային պատերազմի ավարտից հետո²³): Ռազմաճակատի քայքայվելուց հետո հայ զինվորների մի մասը հայրենիք անցնելու ակնկալիքով մեկնեց Հյուսիսային Կովկաս²⁴: Երկրամասի խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումները և դրանց կողմից հովանավորվող առանձին անհատներն ու կազմակերպությունները ամեն ջանք գործադրեցին հայ զինվորներին հակամարտող բանակների շարքերը ներգրավելու համար: Իրենց հերթին, երկրամասում կուտակված հայ զինվորները անբարենպաստ ճանապարհների և երկաթուղու անկանոն գործելու հետևանքով հարկադրված էին շարաթևերով և ամիսներով մնալ Հյուսիսային Կովկասում և սնունդ, հագուստ ու գումար հայթայթելու նպատակով մտնել խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների բանակների շարքերը:

Այսպիսով, արխիվային վավերագրերի, մամուլի և գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս.

1. Թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժելու նախօրեին Հյուսիսային Կովկասի հայ բնակչության թիվը մոտ 100 հազար էր:

²³ Տե՛ս նույն տեղում, գ.73 I, թ.17, գ.82, թ.9:

²⁴ Տե՛ս Դարբինեան Ռ., Կեանքիս գրքեն (փշրանքներ իմ յուշերեն), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1959, հոկտեմբեր N 10 (404), էջ 24, Ալիխանյան Ս., Հայկական գործերի կուսիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 132:

2. Երկրամասի հայությանը պայմանական խմբերի բաժանելու շնորհիվ հնարավոր եղավ տարանջատել հնաբնակ հայերին Առաջին աշխարհամարտի ընթացքում Հյուսիսային Կովկաս եկած գաղթականներից՝ նկատի ունենալով այդ խմբերից յուրաքանչյուրում եղած հայերի թվաքանակը:

3. Ռուսաստանում 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Հյուսիսային Կովկասի հայերը ակտիվորեն մասնակցեցին երկրամասի քաղաքական գործընթացներին: Հյուսիսային Կովկասի հայ բուրժուազիայի, առևտրականների և արդյունաբերողների մեծ մասը աջակցեց երկրամասի ոչ խորհրդային ուժերին, իսկ հայ բանվորների և հողագուրկ գյուղացիների ճնշող մասը՝ խորհրդային իշխանությանը:

4. Հազարավոր հայեր կամովին, թե հարկադրաբար մտան երկրամասի խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների բանակների մեջ:

5. 1918թ. առաջին ամիսներին Հյուսիսային Կովկասի խորհրդային իշխանության պահանջով երկրամասի հայոց ազգային խորհուրդները վերանվանվեցին հայ ժողովրդական հեղափոխական կոմիտեներ և նոր ընտրությունների միջոցով նրանց կազմը համալրվեց բոլշևիկ գործիչներով: Չնայած վերոհիշյալ փոփոխությանը՝ դաշնակցական գործիչները չհալածվեցին և շարունակեցին իրենց գործունեությունը նորակազմ հայկական կոմիտեներում:

1.2 1918 թ. թուրքական զորքերի արշավանքը Անդրկովկաս և հայ գաղթականների տեղաշարժը Հյուսիսային Կովկաս

1918թ. հունվարի 30-ին, խախտելով Երզնկայում կնքված զինադադարը, թուրքական զորքերը Կովկասյան ռազմաճակատի երկայնքով հարձակման անցան: Վերագրավելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքական զորքերը մայիսի վերջին գրավեցին Արևելյան Հայաստանի զգալի հատվածը:

Թուրքական զորքերի առաջխաղացման հետևանքով 600-650 հազար հայեր դարձան գաղթական: Այս քանակից 400 հազարը, խույս տալով կոտորածներից, խոնվեց թուրքական նվաճումից զերծ մնացած Սևանա լճի ավազանում, իսկ 200-250 հազարը անցավ Վրաստան²⁵:

1918թ. մայիսին թուրքական զորքերի Թիֆլիսի նահանգ ներխուժելու հետևանքով սկսվեց այնտեղ ապաստանած արևմտահայերի, արևելահայերի և Վրաստանում բնակվող հայ բնակչության փախուստը Հյուսիսային Կովկաս²⁶: Հայերը Վրաստանից Հյուսիսային Կովկաս կարող էին անցնել Ռազմավիրա-

²⁵ Տե՛ս շԱԱ, ֆ. 200, ց.1, գ.150¹, թ.142, ֆ. 275, ց.5, գ.61, թ.17, Դանիելյան Է., Եղևնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), մասնագիտությունը Հայոց պատմություն. Է.00.01. պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 38, 93-94, Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 112, Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական հիմքերը, էջ 214:

²⁶ Տե՛ս շԱԱ, ֆ. 200, ց.1, գ.291¹, թ.13, Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 121-122:

կան ճանապարհով* կամ Փոթիից՝ նավերով (Բաթումը գրավված էր թուրքերի կողմից): Վրաստանում գտնվելու ընթացքում գաղթականների մի մասը կողոպտվել էր, կամ էլ ծախսել սեփական միջոցները: Այդ գաղթականները նախընտրեցին Հյուսիսային Կովկաս անցնել համեմատաբար ավելի մատչելի Ռազմավիրական ճանապարհով: Հյուսիսային Կովկաս հեռացող այդ գաղթականների մասին Ս. Վրացյանը գրում է. «Անտանեյին, սակայն, հայ ժողովրդի, Թիֆլիսում խոնված կարսեցի, շիրակեցի, արևմտահայ բազմահազար գաղթականության վիճակն էր: Մանավանդ, շատ էին ջղայնանում արևմտահայերը, որոնք հասկանալի պատճառներով, ավելի էին սարսափում թուրքական արշավից: Նրանց դրությունը ահռելի էր: Ի՞նչ անել: Ո՞ր գնալ: Եվ ահա ծայր տվեց մի խուճապային փախուստ դեպի Հյուսիսային Կովկաս: Հազարավոր մարդիկ, ծեր ու երեխա, գյուղացի ու քաղաքացի, աշխատավոր ու մտավորական – ով ինչով կարող էր – խուժեցին դեպի Ռազմավիրական ճանապարհը: Հոսանքի մի ծայրը հասել էր արդեն Վլադիկավկազ ու Արմավիր, մինչ մյուսը դեռ նոր էր դուրս գալիս Թիֆլիսից: Օրեր անընդհատ, Թիֆլիսից շարժվում էին հազարավոր սայլեր, կառքեր, ինքնաշարժեր, գրաստներ, ֆուրգոններ՝ բեռնավորված տնային իրերով, կանանցով և երեխաներով: Շատերը իրենց ունեցվածքը չնչին գնով ծախում էին Թիֆլիսի փողոցներում՝ գորգ, կարպետ, բարձ, անկողին, վերմակ, կարասներ, ամանեղեն... Վլադիկավկազ գնացող փոխադրության միջոցների սակագինը բարձրանում էր տասնյակ ու

* Ռազմավիրական ճանապարհը բացվել է ռուսական իշխանության կողմից 1799թ.-ին: Նրա երկարությունը Վլադիկավկազից մինչև Թիֆլիս մոտ 200 վերստ է: Տե՛ս Ստեփանեան Յ., Մոտիկ անցեալէն, «Հայրենիք» ամսագիր, Բնստոն, 1964, մայիս, N 5, էջ 46:

հարյուրավոր անգամներ: Մի մարդու տեղը ֆուրգոնում արժեր մինչև 10 հազար ռուբլի: Մարդիկ վերջին կոպեկն էին տալիս, միայն թե կարողանային հեռանալ»²⁷:

1918թ. մայիսին Ռազմավիրական ճանապարհով Հյուսիսային Կովկաս մեկնեց նաև Արևմտահայ ապահովության խորհուրդը²⁸: Այդ կառույցի օրինակին հետևեցին Թիֆլիսում և հարակից շրջաններում մնացած գաղթականներից շատերը: Քննադատելով Արևմտահայ ապահովության խորհրդի քայլը՝ նշանավոր պատմաբան Ջոն Կիրակոսյանը գրում է. «Փոխանակ հայացքը հառելու դեպի մայր երկիրը, սեփական ժողովրդի պայքարի գործը կազմակերպելը, Արևմտահայ խորհուրդը շտապում էր տեղափոխվել Հյուսիսային Կովկաս, իր հետևից տանելով ահաբեկված գաղթականությանը, որի ծայրը հասել էր Վլադիկավկազ և Արմավիր»²⁹:

1918թ. մայիսին Թիֆլիսից Ռազմավիրական ճանապարհով Հյուսիսային Կովկաս ուղևորվեց 50 հազար գաղթական³⁰: Նրանց գաղթը անկազմակերպ էր. գաղթականները զրկված էին բժշկական և պարենային օգնությունից, որի հետևանքով սկսվեց սովը, և տարածվեցին տարատեսակ հիվանդություններ³¹: Ս.Վրացյանը, անդրադառնալով գաղթող հայության ծանր դրությանը, գրում է. «Մայիսի 25-ին Ազգ. խորհրդի ներկայացուցիչը հեռագրում է Դուշեթից «Հարյուր հազար սոված ու մերկ գաղթականներ հավաքվել են Մցխեթի, Դուշեթի միջև և ավելի հեռուները: Ոչ մի օգնություն և

²⁷ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 122:

²⁸ Տե՛ս Վրացեան Ս., Անկախ և միացեալ Հայաստան, Բօստօն, 1920, էջ 38:

²⁹ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916), էջ 534:

³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291¹, թ. 13:

³¹ Տե՛ս ГАРФ, ф. 1318, оп. 1, д. 413, л. 23:

ոչ մի տեղից: Փախստականների մեջ սկսվում են հիվանդություններ: Կան մահվան դեպքեր: Գիշերելու տեղ չկա, և ամենքը զիշերում են բաց երկնքի տակ, ցրտին: Չկա ո՛չ հաց, ո՛չ եռացրած ջուր, չկան սննդատու կայաններ՝ ամենքը թողնված են ճակատագրի կամքին: Բժշկական օգնություն էլ չկա: Մարդիկ հազարներով գնում են ոտքով, առանց օգնության որևէ հույսի... կացությունը հուսահատական է»³²: Իրավիճակը հատկապես բարդացավ, երբ Հյուսիսային Կովկասում գործող թուրք գործակալների հսկահայկական քարոզչությունը տվեց իր պտուղները³³: Սկզբից Ռազմավիրական ճանապարհով շարժվող գաղթականները ենթարկվեցին ինգուշական ավազակախմբերի հարձակումներին³⁴, իսկ մայիսի 23-ին ինգուշները փակեցին Նոր Լարս կայարանը՝ արգելելով գաղթականներին անցնել Վլադիկավկազ³⁵:

Ս. Վրացյանի հավաստմամբ «..., մայիսի 24-ից Թերեքի ժողովրդական կառավարությունը փակեց գաղթականների առջև Հյուսիսային Կովկասի ճանապարհը, որով հոսանքը կանգ առավ, և գաղթել ցանկացողների մեծ մասը մնաց Անդրկովկասում»³⁶: Մեզ չի հաջողվել գտնել որևիցե փաստաթուղթ կամ վկայություն, որտեղ նշվեր 1918թ. մայիսի 24-ին Թերեքի խորհրդային իշխանության կողմից գաղթականների առաջ սահմանը փակելու մասին: Արխիվային նյութերում Թերեքի խորհրդային իշխանության նման որոշման մասին տեղեկությունները վերաբերվում են 1918թ. հունիս-հուլիս ամիսներին: Ամենայն հավանականությամբ

³² Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 122:

³³ Տե՛ս ԳԱԹ, Հ. Մառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 107:

³⁴ Տե՛ս ԳԱՓՓ, ֆ. 1318, օր. 1, ժ. 413, յ. 23:

³⁵ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 122:

³⁶ Նույն տեղում, էջ 123:

Ս.Վրացյանը ինգուշների կողմից սահմանի փակումը վերագրել է խորհրդային իշխանությանը: Դարիալի կիրճը փակած ինգուշների զինված խումբը գործել է ոչ թե Թերեքի խորհրդային իշխանության կարգադրությամբ, որին քաղաքացիական պատերազմի տարիներին աջակցել էին ինգուշները³⁷, այլ Հյուսիսային Կովկասում քարոզչություն իրականացնող թուրք գործակալների թելադրանքով: Այս կապակցությամբ Հակոբ քահանա Սառիկյանը գրում է. «Մին էլ հայտնվեց Գուրգեն Հայկունին՝ 2 ընկերներով, որ լուր բերավ, թե մոտ 30.000 գաղթականներ «Կազբեկ» կայսրանում ահ ու դողով բռնված նստած են մնացել, որովհետև Լեռնային մասի ինգուշները Դարիալի կիրճը փակել, ոչ ոքի չեն թույլ տալիս դեպի Վլադիկավկազ գալ, որովհետև տաճիկ էմիսարները, որոնք արդեն յայտնվել էին Ինգուշետիայում, կարողացել էին հավաստիացնել պարզամիտ լեռնականներին, թե հայերը, այնտեղ, Տաճկաստանում անասելի բռնություններ ու պղծություններ են գործ դրել մահմեդական տաճիկների նկատմամբ..., հիմա էլ գալիս են այստեղ կոզակներին օգնելու ընդդեմ ինգուշների»³⁸:

Ինգուշների շրջանում հակահայկական տրամադրություններ սերմանողը ոչ միայն թուրք գործակալներն էին, այլև, առանձին դեպքերում, նաև հայերը: Հ. Սառիկյանը իր հուշերում անդրադառնալով 1917թ. Կովկասյան ռազմաճակատից Վլադիկավկազ եկած մի խումբ հայ զինվորների վարքագծին՝ գրում է. «Մեր քաջ հայրենակիցները», որոնք այնքան ամոթալի կերպով փախել էին տաճիկներից և հայտնի էին թալաններով՝ Շիրակում, այստեղ քաջացած, ինգուշների վրա են ընկնում՝ սրանցից վրեժ առ-

³⁷ Տե՛ս ԳԱՐՓ. ֆ.5351. օր.1. ձ.26. յ.86:

³⁸ ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 105:

նելու: Սպանում են վեց ինգուշ: Լուրը կայծակի արագութեամբ հասավ լեռները: Այս մութ գործում անսպառ եռանդ հայտնաբերեցին Վլադիկավկազաբնակ Ղարաբաղցի թուրքերը: Ինգուշը հային «արյան թշնամի» (кровник) հայտարարեց»³⁹:

Փաստորեն մայիսի 23-ից Ռազմավիթական ճանապարհով Հյուսիսային Կովկաս շարժվող գաղթականության զգալի հատվածը չկարողացավ Դարիալի կիրճն անցնել և կուտակվեց Կազբեկ կայարանում: Սակայն գաղթականությունը այնտեղ երկար չմնաց: Երբ Կազբեկում կուտակված գաղթականների աղետալի դրության մասին լուրերը հասան Վլադիկավկազ, քաղաքի հայկական կոմիտեի նախագահ Հ. Սառիկյանը⁴⁰՝ Թերեքի խորհրդային իշխանության աջակցությամբ բանակցությունների մեջ մտավ ինգուշների ներկայացուցիչների հետ: Մայիսի 27-ին Հ.Սառիկյանի դժվարին նախաձեռնությունը պսակվեց հաջողությամբ: Ինգուշները համաձայնվեցին ճանապարհը բացել և գաղթականներին թույլ տալ մտնել Վլադիկավկազ՝ պայմանով, որ վերջիններս 15-20 օրից ավել չմնան քաղաքում և չաջակցեն Թերեքի կազակներին⁴¹:

Միայն մայիսի 27-ին Վլադիկավկազ ժամանեց 18 հազար գաղթական՝ չհաշված նրանց, ովքեր քաղաքի հայկական կոմիտեի ցուցակագրման կարիքը չէին զգում⁴²: 1918թ. մայիսի վերջից մինչև հունիսի սկիզբը անընդմեջ շարունակվող գաղթականական հոսանքի հետևանքով Վլադիկավկազում և հարակից շրջան-

³⁹ Նույն տեղում, թ. 97:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 105:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, թ. 107-108:

⁴² Տե՛ս նույն տեղում, թ. 108:

ներում կուտակվեց 80-100 հազար գաղթական⁴³: Գերմանական զորքերի Վրաստան մտնելուց հետո Հյուսիսային Կովկաս մեկնող գաղթականների հոսքը նվազեց: Հ. Սառիկյանի հավաստմամբ «գաղթականները արդեն խմբերով էին գալիս Վլադիկավկազ և այնտեղից անցնում Հյուսիսային Կովկասի այլ բնակավայրեր»⁴⁴:

Վլադիկավկազում և հարակից շրջաններում ապաստանած 80-100 հազար գաղթականներից միայն 42-45 հազարն էին հայ, մնացածը՝ ռուս, հույն և ասորի գաղթականներ էին⁴⁵: Փաստորեն 1918թ. մայիսին Թիֆլիսից Ռազմավիրական ճանապարհով Հյուսիսային Կովկաս ուղևորված 50 հազար հայ գաղթականից Վլադիկավկազ էր հասել 42-45 հազարը⁴⁶: Առնվազն 5 հազար գաղթականների չի հաջողվել հասնել Հյուսիսային Կովկաս: Նրանց մի մասը մնացել է Վրաստանի հյուսիսային շրջաններում, իսկ մյուս մասը մահացել է գաղթի ճանապարհին: Մայիսի վերջին և հունիսի սկզբին Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս անցած հայ գաղթականներից 30 հազարը արևմտահայեր էին, մնացածը՝ Անդրկովկասի հայեր⁴⁷: Մայիս-հունիս ամիսներին Թիֆլիսից Վլադիկավկազ հեռացան նաև 22.000 ռուս, 11.000 հույն և 5.000 ասորի գաղթականներ⁴⁸: Անդրկովկասից եկած գաղթականներից բացի Վլադիկավկազում ապաստանել էին Արևտմյան ռազմաճակատից և Վոլգայի ափերից եկած մոտ 10 հազար ռուս, լեհ և հրեա գաղթականներ⁴⁹:

⁴³ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 205, ց.1, գ.544, թ. 3, ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 108:

⁴⁴ Տե՛ս ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 108:

⁴⁵ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 200, ց.1, գ.143, թ.187, ֆ. 205, ց. 1, գ. 544, թ. 3, ֆ. 275, ց. 4, գ. 4, թ.24:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ.291', թ.13:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 205, ց.1, գ.544, թ.3:

⁴⁹ Տե՛ս ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 109:

Վլադիկավկազի խորհրդային իշխանության և քաղաքի հա-
յության ջանքերի շնորհիվ գաղթականությունը տեղավորվեց քա-
ղաքի դպրոցներում (այդ թվում՝ հայկական դպրոցում - Ս.Ս), գո-
րանոցներում, մեծ տներում, բնակարաններում, հայկական եկե-
ղեցում և բնակության համար շատ թե քիչ պիտանի այլ վայրե-
րում⁵⁰: Քաղաքում ապաստանած հայ գաղթականներին բժշկա-
կան օգնություն էր ցույց տալիս 7 հոգուց բաղկացած բժշկա-
սանիտարական խումբը: Քաղաքի հայ կանանց խմբակը գաղթա-
կաններին տրամադրում էր հագուստ և մթերք⁵¹: Խորհրդային իշ-
խանությունը գաղթականներին աջակցեց նաև պարենով և դեղո-
րայքով⁵²: «Այստեղ (Վլադիկավկազում – Ս.Ս) բացվեց նաև Ամե-
րիկյան կոմիտեի ճյուղը,- գրում է Հ. Սառիկյանը,- որ նույնպես
աջակցեց ու նեցուկ դարձավ բնավեր և տնավեր ժողովրդին:
Այդտեղ աշխատողները բացառապես վանեցի հայեր էին»⁵³: Վլա-
դիկավկազի գաղթականությանը աջակցելու նպատակով Թիֆլի-
սի Հայոց ազգային խորհուրդը ուղարկեց իր ներկայացուցիչնե-
րին՝ Պարույր Լևոնյանին, ապա՝ Արամ Իվանյանին⁵⁴:

Չնայած Վլադիկավկազում կուտակված հայ գաղթականնե-
րին աջակցելու նպատակով ձեռնարկված միջոցներին՝
այնուամենայնիվ հնարավոր չեղավ խուսափել մարդկային կո-
րուստներից: «Կավկազակոյե սլովո» թերթը նոյեմբերի 21-ի համա-
րում գրում է. «Թիֆլիսի խուճապի ժամանակ Վլադիկավկազից

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 105, 108:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, թ. 105:

⁵² Տե՛ս նույն տեղում, թ. 108:

⁵³ Նույն տեղում, թ. 108-109:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 109:

անցան 42 հազար գաղթականներ, որոնցից 1000 մահացան»⁵⁵: Ամենայն հավանականությամբ գաղթականները մահացել են հենց Վլադիկավկազում եղած ժամանակ:

Գաղթականական զանգվածը Վլադիկավկազում և նրա շրջակայքում երկար չէր կարող մնալ, առավել ևս որ 1918թ. մայիսի 27-ի «հայ-ինգուշական պայմանավորվածության» համաձայն գաղթականները 15-20 օրից պետք է հեռանային քաղաքից: Հայերի տեղափոխությունը Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի այլ շրջաններ իրականացվեց հատկապես Վլադիկավկազի և ընդհանրապես Հյուսիսային Կովկասի հայաշատ վայրերում գործող հայկական կազմակերպությունների գործուն մասնակցությամբ: Տեղափոխությանը զգալիորեն աջակցեց Թերեքի խորհրդային իշխանությունը: Վլադիկավկազը գաղթականներից օր առաջ դատարկելու նպատակով խորհրդային իշխանությունը քաղաքի հայկական կոմիտեին տրամադրեց անհրաժեշտ քանակությամբ երկաթուղային արտահերթ զնացքներ: «Օր չէր անցնում, որ 8-10 էշելոն չուղարկեինք դեպի Եկատերինոդար, Արմավիր, Ստավրոպոլ, Մայկոպ, Ս. խաչ, Գեորգիևսկ, Հանքային ջրեր ու Մոզդոկ», գրում է Հ. Սառիկյանը⁵⁶: Գաղթականներին Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի այլ շրջաններ զնացքներով տեղափոխելու գործը ղեկավարում էր Սկրտիչ Լևոնյանը⁵⁷: Վլադիկավկազի հայկական կոմիտեին հաջողվեց ապահովել նաև Թերեքի տարածքով շարժվող գաղթականության անվտանգության խնդիրը: Հայ գաղթականներով բեռնված շարասյունները Վլադիկավկազից մինչև

⁵⁵ «Кавказское Слово», 1918, նոյեմբերի 21, N252, ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.143, թ.187:

⁵⁶ ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 109 :

⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

«Պրոխլադնայա» կայարանը ուղեկցում էր «Ինտերնացիոնալ» գրահագնացքը, որի ողջ անձնակազմը հայեր էին, իսկ հրամանատարը՝ Գրիգոր Միրունյանը⁵⁸: «Բրոնեզնացքն իրեն դրել էր մեր ազգային կոմիտեի (Վլադիկավկազի Ս.Ս.) տրամադրության տակ և գործում էր կոմիտեի ցուցումներով»⁵⁹, - գրում է Հ. Սառիկյանը:

1918թ. հունիսի 11-ի դրությամբ Վլադիկավկազում մնացել էր 10.000 հայ գաղթական⁶⁰: Այսինքն 1918թ մայիսի վերջին և հունիսի սկզբին Վլադիկավկազ եկած գաղթականների հիմնական մասը արդեն հեռացել էր քաղաքից: Չնայած դրան՝ տեղական իշխանությունները Վլադիկավկազում գաղթականների ներհոսքի հետևանքով ի հայտ եկած պարենային ճգնաժամը և հակահիզիենիկ դրությունը թեթևացնելու համար պահանջում էին մնացած գաղթականներին ևս հեռացնել քաղաքից⁶¹: Սակայն Վլադիկավկազում մնացած հայ գաղթականների տեղափոխությունը 1918թ. հունիսից Թերեքի տարածքում կազակների և բուլշևիկների միջև սկսված արյունահեղ կռիվների պատճառով երկար ժամանակ անհնար դարձավ: Երկրամասում սկսված քաղաքացիական կռիվները առավել ծանր կացություն ստեղծեցին Վլադիկավկազից հեռացած և ճանապարհներին գտնվող գաղթականների համար: Նրանց տեղափոխող զնացքները օրերով, շաբաթներով և նույնիսկ ամիսներով մնում էին կայարաններում կանգնած⁶²:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 109, 111:

⁵⁹ Նույն տեղում, թ. 111:

⁶⁰ Տե՛ս ֆ. 201, ց.1, գ. 36, թ. 142:

⁶¹ Տե՛ս նույն տեղում:

⁶² Տե՛ս Մինասյան Ս., Հայության գաղթը Հյուսիսային Կովկաս, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2009, N 10, էջ 240:

1918թ. հունիսի 15(28)-ին Հյուսիսային Կովկասի և Դոնի հանրապետության հայ ռազմիկների ռազմական կոմիսար Ս. Գրիգորյանի Բաքվի հայոց խորհրդին՝ ուղղած նամակը մեկն է այն բազմաթիվ վավերագրերից, որտեղ ներկայացված է Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի այլ շրջաններ ուղևորվող հայ գաղթականների ծանր կացությունը. «Չափից դուրս վատ վիճակի մէջ են գտնուում գաղթականները: Ոչ մի տարբերութիւն չկայ Վանի գաղթի և Թիֆլիսի գաղթի մէջ: Շէնքերի բացակայութիւն, հացի, ջրի պակասը, լաւ կազմակերպողներ չլինելը և մանաւանդ տեղական իշխանութիւնների և ռուս ժողովրդի անբարեհաճ վերաբերմունքը ստեղծում են սոսկալի ծանր վիճակ հայ գաղթականների համար: Շատ յաճախ հազարաւոր մարդիկ թափված են մնում որևէ երկրորդական կայարանում, ուր ոչ հաց է գտնուում, ոչ ջուր և տեղական իշխանութիւնը չի թողնում նրանց գնալու իրենց նշանակւած տեղը:

Մի շաբաթ առաջ Վլադիկավկազից 5000 հոգու ուղարկում են էշելոններով դեպի Ստաւրոպոլ և Եկատերինոդար: Սակայն Վինագրադնայե կայարանում նրանց պահում են երկար ժամանակ: Տեղի են ունենում սովամահութեան դեպքեր, դրանց մի մասը մինչև օրս թափւած են մնում Նևինոմիսկայա կայարանում: Չորս օր առաջ մի խումբ գաղթականներ Միներալնում չեն թողնում առաջ գնան. պահում են բաց երկնքի տակ: Նրանք պատուպարում են արևից պաշտպանւելու համար վագօնների տակ: Այդ ժամանակ առանց իմաց տալու շոգեմեքենան կայցնում են վագօն-

Փաստաթղթի վերնագրում նշվում է Բաքու բառը, որը ջնջվել և տեղը ավելացվել է Թիֆլիս բառը: Փաստաթղթի ուսումնասիրությունից պարզվեց, որ Ս. Գրիգորյանը գեկուցում է Բաքվի Հայոց ազգային խորհրդին:

ներին և տակով տալիս գաղթականներին: 27 հոգի սպանում են և շատերն էլ ծանր վիրատուրվում»⁶³:

Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններ տեղափոխված գաղթականների թիվը այնքան մեծ էր, որ տեղական իշխանությունները պարենային ճգնաժամից և համաճարակներից խուսափելու համար ստիպված եղան արգելել նոր գաղթականների մուտքը քաղաքներ: Օրինակ, Արմավիրում ապաստանած գաղթականների թիվը հասել էր 18 հազարի, իսկ Եկատերինոդարում՝ 8 հազարի⁶⁴: Արդեն հունիսի 11-ի դրությամբ Արմավիրը, Սուրբ Խաչը, Մոզդոկը, Գեորգիսկը և այլ քաղաքներ հրաժարվեցին ընդունել նոր գաղթականներ⁶⁵: Հազարավոր գաղթականներ մնացին ճանապարհներին և երկաթուղային կայարաններում: Նրանցից շատերը սովամահ եղան: Հաշվի առնելով Հյուսիսային Կովկասում գաղթականների համար ստեղծված անբարենպաստ պայմանները, հունիսի 11-ից երկրամասի հայկական կազմակերպությունները և առանձին գործիչներ դիմեցին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին Հյուսիսային Կովկաս գաղթող հայերի հոսքը առժամանակ դադարեցնելու խնդրանքով⁶⁶:

Հյուսիսային Կովկասում գաղթականության խնդիրը այնքան հրատապ էր դարձել, որ այն քննարկելու նպատակով հունիսի 15-ին Միներալնիե վոդիում (Հանքային ջրերում) պետք է կա-

⁶³ ՀԱԱ, ֆ 200, ց.1, գ. 158, թ. 40-41, Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 62-63:

⁶⁴ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 62:

⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 36, թ. 142:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 59, 136, 142-143, 145:

յանար Թերեքի, Կուբանի և Ստավրոպոլի (խորհրդային) հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդածողովը⁶⁷: Արխիվային նյութերում խորհրդածողովի անցկացման կամ արդյունքների վերաբերյալ տեղեկությունները բացակայում են: Կարծում ենք երկրամասում ընթացող քաղաքացիական կռիվները խանգարեցին խորհրդածողովի անցկացմանը:

1918թ. հունիսին Թերեքում ինգուշական զինված խմբերի և Գեորգի Բիչերախովի զորքերի միջև սկսված կռիվների պատճառով Ռազմավիրական ճանապարհը անանցանելի դարձավ⁶⁸: Գաղթականները, որ փորձում էին Կազբեկից Վլադիկավկազ անցնել, ենթարկվում էին ինգուշների հարձակումներին⁶⁹:

1918թ. հունիսի 20-ից Վլադիկավկազի խորհրդային իշխանությունը ռուս գաղթականներից բացի մնացածի մուտքը քաղաք արգելեց⁷⁰: Նման որոշման հիմնական պատճառը Վլադիկավկազում առաջացած պարենային ճգնաժամը և քաղաքացիական կռիվների հետևանքով քաղաքից հյուսիս տանող ճանապարհների անանցանելիությունն էր:

1918թ. օգոստոսի սկզբից Թերեքի խորհրդային իշխանությունը արգելեց Անդրկովկասից եկող գաղթականներին անցնել սահմանը⁷¹: 1918թ. թուրքական զորքերի՝ Անդրկովկաս ներխուժելու պատճառով հայերի մի մասը Վրաստանից Հյուսիսային Կովկաս հեռացավ ծովային ճանապարհով, Փոթիից՝ նավերով: Փոթիից հեռանալու համար հայերը հիմնականում օգտվեցին գեր-

⁶⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 143:

⁶⁸ Տե՛ս ԴԱՔՓ. ֆ.5351. օղ.1. ձ. 26. լ. 94, ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 115:

⁶⁹ Տե՛ս ԴԱՔՓ, ֆ. 1318, օղ. 1, ձ. 413, լ. 23:

⁷⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 36, թ. 114:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 14, թ. 42, «Հորիզոն» 1918, օգոստոսի 16, N 161:

մանական նավերից, որոնք, մասնավոր նավերի համեմատ, ավելի մատչելի էին⁷²: 1918թ. մայիս-հուլիս ամիսներին Փոթիից Հյուսիսային Կովկաս հեռացան 40 հազար հայ գաղթականներ⁷³: Նրանք ապաստանեցին Նովոռոսիյսկ, Տուապսե, Անապա, Եյսկ և Սև ծովի ափին գտնվող այլ նավահանգստային քաղաքներում⁷⁴:

1918թ. հուլիսի վերջին կամ օգոստոսի սկզբին Հյուսիսային Կովկասի արևմտյան հատվածում մոլեզնոդ քաղաքացիական կոռիվների հետևանքով Փոթիից Հյուսիսային Կովկաս ուղևորվող գաղթականների հոսքը դադարեց⁷⁵:

Անդրկովկասյան Սեյմի գոյության վերջին շրջանում Հյուսիսային Կովկաս են գաղթել նաև Աբխազիայի հայերը: Կողորում և Գուդաուտայում բնակվող մոտ 400 հայ ընտանիքներ, աբխազներից հալածվելով, հեռացան Կուբան⁷⁶: Աբխազահայերի հոսքը Կուբան շարունակվեց նաև 1918թ. հունիս-հուլիս ամիսներին, երբ Սուխումը գտնվում էր թուրքական զորքերի իշխանության տակ⁷⁶:

Արխիվային նյութերում, մամուլում և գրականության մեջ պահպանվել են 1918թ.-ին Վրաստանից Հյուսիսային Կովկաս հեռացած հայ գաղթականների տեղաբաշխման և թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները: Դրանց ուսումնասիրությունից պարզվել է, որ 1918թ. մայիս-հուլիս ամիսներին Ռազմավիրական

⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 82, թ. 9, 11, ֆ. 275, ց. 5, գ. 46, թ. 18:

* Նման եզրահանգման հիմք են հանդիսացել 1918-1920 թթ. ընթացքում Հյուսիսային Կովկասից հայրենիք վերադարձած և այնտեղ մնացած հայերի վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները, տե՛ս մանրամասն սույն սշխատության երկրորդ և երրորդ գլուխներում:

⁷³ Տե՛ս «Հորիզոն», 1918, սեպտեմբերի 29, N 197:

⁷⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 7, թ. 44, «Յօրեճա», 1918, օգոստոսի 4, N 135:

⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 409, թ. 61:

⁷⁶ Տե՛ս Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, 1964, էջ 466:

ճանապարհով Հյուսիսային Կովկաս անցած գաղթականներից մոտ 10.000-ը մնացել է Վլադիկավկազում⁷⁷: Մի քանի հազար գաղթականներ ապաստանեցին Թերեքի կազակների ստանիցաներում, մասնավորապես՝ Ջմեյսկայա, Ալեքսանդրովսկայա և Գոստոդարսովենայա: Այստեղ գաղթականների առաջին խմբերին խորհրդային իշխանությունը հողային ֆոնդից տրամադրեց հողակտորներ, որոնք առաջացել էին կալվածատիրական հողերի բռնագրավումից⁷⁸: Հազարավոր գաղթականներ ապաստան գտան Թերեքի քաղաքներում՝ Կիսլովոդսկ, Պյատիգորսկ, Գեորգիևսկ, Մոզդոկ, Գրոզնի, Ղզլար և այլն:

Կուրբան անցած գաղթականների հիմնական մասը ապաստանեց Արմավիր, Եկատերինոդար, Մայկոպ, Եյսկ, Անապա քաղաքներում, իսկ մյուս մասը՝ շրջանի բազմաթիվ գյուղերում և կազակների ստանիցաներում:

1918թ. հունիս-հուլիս ամիսներին միայն Արմավիրում կուտակվել էին 18 հազար Արևմտյան Հայաստանի և Կարսի մարզի գաղթականներ⁷⁹: Կուրբանի գյուղերում և կազակների ստանիցաներում ապաստանած հայերի մի հատվածին խորհրդային իշխանությունը ապահովեց հողակտորներով⁸⁰:

⁷⁷ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 62:

⁷⁸ Տե՛ս «Борьба», 1918թ. օգոստոսի 13, N 142:

⁷⁹ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 62, Анаян Ж., Хачатурян В., Армянские Общины России, с. 67:

⁸⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 66:

Ստավրոպոլ անցած Կարսի և Ալեքսանդրապոլի հայ գաղթականների թիվը 10,000-ից անցնում էր⁸¹: Նրանց մի հատվածը ապաստանել էր Վորոնցովո-Ալեքսանդրովսկ գյուղում, իսկ մնացածը՝ գերազանցապես Ստավրոպոլ և Սուրբ Խաչ քաղաքներում⁸²:

Փոթիից Հյուսիսային Կովկաս եկած գաղթականների մեծ մասը ապաստանեց Չեռնոմորսկ նահանգի քաղաքներում և հայկական գյուղերում:

1918թ. մայիս-հուլիս ամիսներին Հյուսիսային Կովկաս անցած գաղթականության մի մասը հետագա ամիսների ընթացքում հեռացավ Դոն, Աստրախան, Սարատով և Ռուսաստանի այլ շրջաններ:

Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի միևնույն բնակավայրից Հյուսիսային Կովկաս անցած հայությունը փորձում էր չբաժանվել միմյանցից՝ բնակություն հաստատելով երկրամասի միևնույն քաղաքում կամ բնակավայրում: Հ. Սադիկյանը այս կապակցությամբ գրում է. «... Սասունցիք – թվով շուրջ 1500 հոգի, տեղաւորւած էին Ստավրոպոլում, Ղարսեցիների ու Էրզրումցիների որոշ մասը՝ Եկատերինոպոլում, Արմավիրում. Գիւղացի ազգաբնակչությունը տեղաւորվեց ավելի գիւղական շրջաններում – Եդեսիայում (Ղուրայ կամ Ղուբայ), Կավկազսկիյում, Եկատերինոպոլի շրջակայ հայ գիւղերում ու Գրոզնայի մօտակայ ստանիցաներում, Երևանի նահանգից եկածնիրը-յատկապես Նախիջևանցիք – Հանքային ջրերի շրջանում ու Ռօստովում, Տրապի-

⁸¹ Տե՛ս նույն տեղում, գ. 594, թ. 6:

⁸² Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 66:

գօնի նահանգից եկածնիրը Մայկոպում ու շրջակայքում, ուր նրանք սկիզբը դրին ծխախոտի մշակութեան»⁸³:

Հյուսիսային Կովկաս եկած հայ գաղթականներին առաջինը օգնեցին երկրամասի հայկական կազմակերպությունները: Այդ կառույցների գործունեությունը համակարգում և ուղղորդում էր Արմավիրի կենտրոնական կոմիտեն, սակայն այդ կոմիտեի գործունեությունը 1918թ. հունիսին Անդրկովկասից Արմավիր եկած Գուրգեն Հայկունու վարկաբեկիչ աշխատանքի պատճառով դադարեցվեց: Քաղաքի խորհրդային իշխանության աջակցությամբ Գուրգեն Հայկունին, հայկական կենտրոնական կոմիտեն հսկահեղափոխական որակեց, ցրեց և իր ուզած մարդկանցով կազմեց նորը⁸⁴: Գ. Հայկունին և իր կողմնակիցները տիրացան Հյուսիսային Կովկասի կենտրոնական և Արմավիրի հայկական կոմիտենների գույքին և մոտ 300.000ռ. գումարին, որից հետո փակվեցին շրջանի որբանոցները, հիվանդանոցները և գաղթականական կազմակերպությունները⁸⁵: Արմավիրի կենտրոնական կոմիտեի նախկին անդամները, որոնց մեջ զգալի թվով դաշնակցականներ կային, փորձեցին հակազդել Գ. Հայկունու վնասակար գործունեությանը և դիմեցին Եկատերինոդարի կենտրոնական խորհրդային իշխանությանը՝ ակնկալելով ստանալ վերջինիս աջակցությունը: Հուլիսին Կուրանի խորհրդային կառավարության միջնորդությամբ Հայկական կենտրոնական կոմիտեն ժամանակավորապես տեղափոխվեց Եկատերինոդար: Կուրանի կառավարության որոշմամբ փոխվեց այդ կոմիտեի կառուցվածքը, որը

⁸³ ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 110:

⁸⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200 ց.1, գ.158, թ.36-37:

⁸⁵ Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, 2011, էջ 25-26:

պետք է կազմվեր 3 անդամից՝ մեկ դաշնակցականից, մեկ ձախ էսեռից և մեկ մեծամասնականից, որոնք պետք է կոչվեին կոմիսարներ ու աշխատանքները բաժանեին իրար մեջ⁸⁶: Այդ սկզբունքով պետք է կազմվեին նաև այլ քաղաքներում գործող հայկական կոմիտեները: Դրանք պետք է գործեին խորհուրդներին կից և չպետք է ենթարկվեին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, ինչպես նաև չպետք է դրամ ուղարկեին նրան⁸⁷: Սակայն Կուրբանի խորհրդային իշխանության վերոհիշյալ որոշումը Կամավորական բանակի ռազմական հաջողությունների հետևանքով գրեթե չիրագործվեց:

Ռուսաստանում գործող հայկական ազգային կազմակերպությունների նկատմամբ անբարյացակամ վերաբերմունք ուներ Ռուսաստանի խորհրդային կենտրոնական իշխանությունը: 1918թ. հունիսի 12-ին ՌԽՖՍՀ ժողկոմխորը ընդունեց դեկրետ՝ «Հայկական ազգային խորհուրդները, պաշտպանության խորհուրդները, ռազմահեղափոխական կոմիտեները և հայկական բուրժուական մյուս կազմակերպությունները լուծարելու մասին»⁸⁸: Այդ որոշումից հետո Հայկական գործերի կոմիսարիատի աշխատակիցները սկսեցին փակել Խորհրդային Ռուսաստանի տարածքում գործող հայկական ազգային կազմակերպությունները: Հուլիսի վերջին այդ ալիքը Մոսկվայից հասավ Սարատով: Քաղաքի հայկական ազգային կոմիտեն լուծարվեց, իսկ 534 հազար ռուբլին բռնագրավվեց⁸⁹: Օգոստոսին մինևույն ճակատագրին արժանացան Աստրախանի հայկական կազմակերպութ-

⁸⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.7, ք. 80, գ.158, ք.47:

⁸⁷ Տե՛ս նույն տեղում, գ.158, ք. 47:

⁸⁸ Ալեքսանյան Հ., նշվ. աշխ., էջ 17:

⁸⁹ Տե՛ս ԴԱՐՓ, ֆ. 1318, օր. 1, ձ. 413, յ. 35:

յունները⁹⁰: Օգոստոսի վերջին Մոսկվայից եկած հայ բոլշևիկները հասան Հյուսիսային Կովկաս: Հիշյալ ժամանակահատվածում երկրամասի արևմտյան և արևելյան շրջանները գտնվում էին հակախորհրդային ուժերի վերահսկողության տակ, ինչը զգալիորեն սահմանափակեց հայ բոլշևիկների գործունեության ասպարեզը: Հյուսիսային Կովկասի խորհրդային իշխանության տարածքում գործող հայկական ազգային կազմակերպությունները, բացառությամբ Պյատիգորսկի կոմիտեի, մինչև հայ բոլշևիկների գալը իրենց գույքը և գումարները տեղափոխել էին ոչ խորհրդային պետական կազմավորումների իշխանության տակ գտնվող շրջաններ⁹¹: Դրա հետևանքով այդ կազմակերպությունները մնացին առանց միջոցների և մինչև հայ բոլշևիկների կողմից լուծարվելը չկարողացան օգնել գաղթականներին:

Հյուսիսային Կովկաս տեղափոխված հայ բոլշևիկները երկրամասի հնաբնակ և գաղթական հայության շրջանում խորհրդային գաղափարներ տարածելու և Դաշնակցությանը վարկաբեկելու նպատակով ակտիվ քարոզչություն սկսեցին: Այդ նպատակին ծառայեցվեցին Հյուսիսային Կովկասում բացված հայկական թերթերը («Կարմիր օրեր»՝ Պյատիգորսկում, «Բանվորի ձայն»՝ Արմավիրում և այլն)⁹²:

Հյուսիսային Կովկասում հայ բոլշևիկների սանձազերծած հակադաշնակցական հալածանքները հանգեցրին ոչ խորհրդային

⁹⁰ Տե՛ս Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 93:

⁹¹ Տե՛ս Ալեքսանյան Հ., նշվ. աշխ., էջ 25-26:

⁹² Տե՛ս մանրամասն Ալիխանյան Ս., Մովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921 թթ. Երևան, 1966, էջ 65, Ալեքսանյան Հ., նշվ. աշխ., էջ 177, *Армяне Ставрополя и Терека, под общей редакцией канд. ист. наук. В. Аконояна, Пятигорск, с. 226:*

պետական կազմավորումների կողմից վերահսկվող շրջաններում գործող և նրանց հովանավորությունը վայելող (իսկ որոշ դեպքերում նաև քաղաքական նպատակների իրականացման միջոց ծառայող) հայկական կազմակերպությունների նույնօրինակ հակազդեցությանը⁹³:

1918թ. ամռան ամիսներին Գուրգեն Հայկունու և Հայկական գործերի կոմիսարիատի աշխատակիցների ջանքերով Հյուսիսային Կովկասի խորհրդային իշխանության տարածքում գործող հայկական ազգային կազմակերպությունները (Հայոց ազգային խորհուրդները, բարեգործական, գաղթականական, հայրենիքի փրկության, ուսանողական և այլն) լուծարվեցին: Երկրամասի այն շրջաններում, որտեղ հաստատվել էր ոչ խորհրդային պետական կազմավորումների իշխանությունը, հայկական ազգային կազմակերպությունները շարունակեցին իրենց գործունեությունը և զգալիորեն աջակցեցին հայ գաղթականներին⁹⁴: Անդրադառնալով այս խնդրին Ռուսական կարմիր խաչի (ընկերության) հայկական կոմիտեի և Հյուսիսային Կովկասում Ամերիկյան գաղթականների օգնության կոմիտեի լիազոր Ն. Թադևոսյանը 1918թ. ամռան սկզբին խնամատարության նախարարին ուղղված նամակում գրում էր. «1918թ. մայիսից, երբ Հյուսիսային Կովկասում հայտնվեցին առաջին հայ գաղթականները, նրանց խնամքի գործը իրենց վրա վերցրեցին բացառապես տեղի հայկական հասարակական կազմակերպությունները:

⁹³ Տե՛ս Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 35:

⁹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 2:

Կասկած չկա, որ Հյուսիսային Կովկասի հարուստ համայնքները կարող էին հեշտությամբ կատարել այդ գաղթականների խնամքի գործը, սակայն մասամբ մեր անկազմակերպվածությունը, իներտությունը հնարավորություն չտվեց կատարել այդ խնդիրները: Սակայն սխալ կլիներ ողջ մեղքի բաժինը գցել տեղի հայկական կազմակերպությունների վրա, քանի որ նրանք պահպանեցին Հյուսիսային Կովկասի հազարավոր գաղթականների կյանքը և զգալիորեն աջակցեցին գաղթականներին, որի արդյունքում նրանց կորուստները ավելի քիչ եղան»⁹⁵:

Հյուսիսային Կովկասում բոլշևիկների լուծարած հայկական ազգային կազմակերպությունների փոխարեն բացվեցին Հայկական գործերի կոմիսարիատի բաժանմունքներ: Հայկական գործերի կոմիսարիատը խորհրդային կենտրոնական իշխանության ֆինանսական աջակցությամբ կազմակերպեց Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների օգնության գործը: 1918թ. հունիսի 26-ի նիստում Ժողովրդական կոմիսարները հայ գաղթականությանը օգնելու նպատակով Հայկական գործերի կոմիսարիատին տրամադրեցին շուրջ 6 միլիոն ռուբլի⁹⁶: Ստանալով այդ գումարը՝ Կոմիսարիատը կազմակերպեց Աստրախանի և Հյուսիսային Կովկասի գաղթականներին օգնող առաջին ջոկատը, որը 1918թ. հուլիսի 29-ին Մոսկվայից բանաստեղծ Վ.Տերյանի գլխավորությամբ մեկնեց Աստրախան, որտեղից էլ օգոստոսի վերջին անցավ Հյու-

⁹⁵ Հայերի կոտորածները Բարբլի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 333-334:

⁹⁶ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 200, ց.1, գ.143, թ.91, Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. Сборник документов. Ереван, 1957, с. 221-222:

սիսային Կովկաս⁹⁷: Հասնելով Պյատիգորսկ՝ Վ. Տերյանի ջոկատը Հայկական կոմիսարիատի Հյուսիսային Կովկասի լիազորին հանձնեց երկրամասի հայ գաղթականների համար նախատեսված 500 հազար ռուբլին⁹⁸:

Հայ գաղթականության օգնության գործը կազմակերպելու համար Պյատիգորսկի խորհրդին կից ստեղծվում է գաղթականական հանձնաժողով և Հայկական գործերի կոմիսարիատի բաժանմունքին կից՝ գաղթականական բաժին⁹⁹:

Տեղական խորհրդային իշխանության հովանավորությամբ Վ. Տերյանը հայ գաղթականներին քաղաքներում աշխատանք, գյուղերում՝ հող է տրամադրում, իսկ բնակարան չունեցողներին՝ բնակարան¹⁰⁰: Հյուսիսային Կովկասում ապաստանած հիվանդ գաղթականներին օգնելու համար Հայկական գործերի կոմիսարիատը բժիշկ Խոիկյանի գլխավորությամբ սանիտարական ջոկատ է ուղարկում այնտեղ¹⁰¹: 1918թ. աշնանը Հայկական գործերի կոմիսարիատը Հյուսիսային Կովկասի մի քանի բնակավայրերում գործող իր բաժանմունքների միջոցով գաղթականներին որպես նպաստ բաժանել է 515.907 ռ.¹⁰²: 1918-1919թթ. ընթացքում Հայկական գործերի կոմիսարիատի ջանքերի շնորհիվ Հյուսիսային Կովկասի մի քանի բնակավայրերում գաղթականների համար վերա-

⁹⁷ Տե՛ս Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 92-93:

⁹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 94:

⁹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 95:

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 94:

¹⁰¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200 ց. 1, գ. 143, թ. 91, Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 95:

¹⁰² Տե՛ս Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 97:

բացվեցին դպրոցներ, հիվանդանոցներ, 4 որբանոց, թատրոն, ամբուլատորիա և այլն¹⁰³:

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին աջակցեցին նաև երկրամասի խորհրդային հանրապետությունները՝ մասնավորապես Թերեքի խորհրդային հանրապետությունը: Հ. Սառիկյանը գրում է. «Խորհրդային իշխանության (Թերեքի - Ս.Ս.) արածը վեր էր ամեն տեսակ սպասվածից: (Վլադիկավկազում - Ս.Ս.) մոտ 1200 հոգի մեկ տարի շարունակ – մինչև դենիկինյան զորքերի մտնելը – ստանում էր բնակարան, հաց, բժշկական օգնություն, սապոն, բաղնիք – միս, լոբի, ձեթ և այլ մթերքներ: Նույն դրությունն էր Հյուսիսային Կովկասի բոլոր քաղաքներում: Այս ամենը տրվում էր կազմակերպված, մեր կոմիտեի միջոցով»¹⁰⁴:

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին օգնեցին նաև ամերիկյան բարեգործական կազմակերպությունները (Ամերիկյան կոմիտեն, Ամերիկյան կարմիր խաչի կազմակերպություն, Ամերիկյան միսիա, Ամերիկյան նպաստի մարմին¹⁰⁵): Վ. Փափագյանը գրում է. «Կազմուեցաւ ամերիկեան նպաստի մարմին մը որուն կանդամակցէին ինձ հետ նաև Պ. Աւետիս Թերզիպաշեան, Ատապէկ Համբարեան և Կարախանեան: Այս մարմինը Ամերիկեն ստացուած գումարներով կրցաւ մինչև վերջերս ապրեցնել գաղթականութիւնը»¹⁰⁶: Այդ կոմիտեն հատկապես օգնեց Վլադիկավկազի հայ գաղթականներին¹⁰⁷: Ամերիկյան կոմիտեն նպատակ

¹⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 106:

¹⁰⁴ ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 112:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 109, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 187. «Աշխատավոր», 1918, սեպտեմբերի 15, N 133:

¹⁰⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291¹, թ. 13:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 143, թ. 187:

ուներ ընդլայնել իր գործունեությունը, սակայն երկրամասում մոլեգնող քաղաքացիական կռիվները խանգարեցին այդ գործընթացին¹⁰⁸: «Աշխատավոր» լրագիրը իր սեպտեմբերի 15-ի համարում գրում է, որ Ամերիկյան կոմիտեն դադարել է Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին աջակցել¹⁰⁹: Արխիվային նյութերում այդ կոմիտեի հետագա գործունեության վերաբերյալ տեղեկություններ չկան:

Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականներին շատերը իրենց աշխատասիրության շնորհիվ խուսափեցին սովամահությունից: Նրանք հարմարվեցին տեղի պայմաններին՝ զբաղվելով առևտրով և արհեստներով¹¹⁰: Հ. Սառիկյանը գրում է. «Սակայն ամենից մեծ աջակցությունը ցույց տվավ իրեն հենց ինքը գաղթականությունը: Նա իր տոկունությամբ, աշխատասիրությամբ ու համբերությամբ (մանավանդ տաճկահայերը) ոչ միայն մեր, այլ և օտարների զարմանքն էր շարժում: Նույն իսկ 10-12 տարեկան տղաները կարողանում էին անտառներից փայտ կրելով պառավ մայր ու փոքրահասակ քույրեր ու եղբայրներ պահել: Հյուսիսային Կովկասի բոլոր քաղաքներում, ուր հայ գաղթականները ոտք դրին, շուկան ամբողջովին նրանց ձեռքն անցավ»¹¹¹:

Հայաստանի Հանրապետության գոյության առաջին ամիսներին երկրում ստեղծված ներքին և արտաքին ծանր դրության պատճառով Հայաստանի կառավարությունը չկարողացավ աջակցել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին: Այնուամենայնիվ որոշ քայլեր ձեռնարկվեցին: Հ. Սառիկյանը

¹⁰⁸ Տե՛ս «Հորիզոն», 1918, սեպտեմբերի 4, N 176:

¹⁰⁹ Տե՛ս «Աշխատավոր», 1918, սեպտեմբերի 15, N 133:

¹¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.594, թ. 6:

¹¹¹ Գ.Ա.Թ., Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 110:

գրում է. «Օգնության հասավ նաև Տփխիսի ազգային խորհուրդը: Մա մեզ հետ աշխատելու ուղարկեց իր ներկայացուցչին: Սկզբում այդ ներկայացուցիչը Պարույր Լևոնեանն էր որ մեղկ, պորտաբույծ ու ծույլ երիտասարդ դուրս եկավ: Սրան մենք հեռացրինք: Այլ էր նրան հաջորդող Արամ Բվանեանը, որ աչքի ընկավ իր հսկայական աշխատունակութեամբ, եռանդով ու մաքրութեամբ: Հինգ ամիս մնաց մեզ մօտ Արամը և այդ 5 ամսում նա միշտ մնաց մաքուր ու ամբողջովին եռանդ դարձած...»:

Մեր ամբողջ աշխատանքի ընթացքում Տփխիսի ազգային խորհուրդը, մեզ, որքան յիշում եմ, 120.000 ռուբլուց ավելին չուղարկեց, որ չնչին մասն էր մեր արած ծախսերի»¹¹²:

Հյուսիսային Կովկասում շարունակվող քաղաքացիական կռիվների ժամանակ երկրամասի հայ գաղթականները և հնաբնակ հայերը տուժեցին իրենց քաղաքական կողմնորոշման համար: Հատկապես շատ զոհեր եղան Արմավիրում: 1918թ. հուլիսին գեներալ Պոկրովսկու դիվիզիան գրավեց Արմավիրը: Քաղաքի հարուստ հայերի մի մասը գործին դիմավորեց աղ ու հացով՝ իր վրա վերցնելով Արմավիրի մոտակայքում տեղի ունեցած մարտերում մահացած սպիտակ սպաների թաղման ծախսերը: Երբ գեներալ Պոկրովսկին հեռացավ քաղաքից, այն կրկին անցավ բոլշևիկներին, որոնք վրեժխնդիր եղան ոչ միայն սպիտակներին աջակցած հարուստ հայերից, այլև անմեղ գաղթականներից: Արմավիրում ապաստանած հարյուրավոր հայ գաղթականներ սրախողխող արվեցին: Որոշ ռուս հեղինակներ հիշատակել են նաև բոլշևիկների կողմից սպանված մի քանի քաղաքաբնակ հայերի

¹¹² Նույն տեղում, թ. 109:

մասին¹¹³: Ն. Սառիկյանն իր հուշերում, անդրադառնալով Արմավիրի դեպքերին, գրում է. «Առհասարակ ես այն կարծիքի էի, որ այս քաղաքացիական կռվին հայ ժողովուրդը չպիտի մասնակցեր, այդ մտքով էլ շրջաբերական էի ուղարկել Հյուսիսային Կովկասի բոլոր քաղաքներին: Չլսեց միայն Արմավիրը, ավելի շուտ մի քանի հարուստներ, որոնք սկզբում հաղթող կազակներին ճաշ են տվել: Սակայն մի քանի օրից հետո մտնում են բոլշևիկները, որոնք լսելով այդ ճաշի մասին, հայկական ջարդեր են ստեղծում, որին զոհ են գնում 50-60 գաղթականներ»¹¹⁴:

Արմավիրում խորհրդային զորքերի կողմից իրականացրած հայերի ջարդերի հետևանքով շատերը փախան քաղաքից: «Աշխատավորը» իր 1918թ. հոկտեմբերի 30-ի համարում գրում է. «Եկատերինոդարից եկածները հաղորդում են, որ Արմավիրի գաղթականները խուճապի մեջ փախել են Ստավրոպոլ և Եկատերինոդար և գտնվում են անօգնական ու խղճուկ դրության մեջ, ցանկանում են հայրենիք գալ»¹¹⁵:

Քաղաքացիական կռիվներից տուժեց նաև Վլադիկավկազի հայությունը: 1918թ. օգոստոսի սկզբին քաղաքը դարձավ հակամարտող ուժերի ռազմական գործողությունների թատերաբեմ: Այդ օրերին զոհվեց 12 հայ գաղթական: Վլադիկավկազում բոլշևիկների հաղթանակին նպաստեց հայ սպա Գրիգոր Սիրունյանի զրահագնացքը¹¹⁶: Հյուսիսային Կովկասում մոլեգնող քաղա-

¹¹³ Տե՛ս Красный террор в России 1918 – 1923, Берлин, 1924, с.145, Рыбас С.Ю. Генерал Кутепов, Москва, 2000, с. 350:

¹¹⁴ ԳԱԹ, Ն. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ 111:

¹¹⁵ «Աշխատավոր», 1918, հոկտեմբերի 30, N 169:

¹¹⁶ Տե՛ս ԳԱԹ, Ն. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 111:

քացիական կոիվները խլեցին նաև խորհրդային և ոչ խորհրդային բանակներում ծառայող հարյուրավոր հայ զինվորների կյանքեր:

Այսպիսով, 1918թ. մայիսին, երբ թուրքական զորքերը Թիֆլիսի նահանգ ներխուժեցին, սկսվեց այնտեղ ապաստանած արևմտահայ, արևելահայ գաղթականության և տեղի հայության գաղթը Հյուսիսային Կովկաս, որի հետևանքով 42-45 հազար գաղթականներ անցան Ռազմավիրական ճանապարհով, իսկ 40 հազարն էլ Փոթիից՝ նավերով: Այս գաղթականական զանգվածը Հյուսիսային Կովկասում հայտվեց քաղաքացիական պատերազմի ճիրաններում:

1918թ. հունիս-հուլիս ամիսներին հայ բոլշևիկների և դաշնակցական գործիչների պայքարի հետևանքով երկրամասի հայկական կազմակերպությունները ի վիճակի չեղան համակարգված օգնություն ցույց տալ գաղթականությանը, որի հետևանքով նրանց շրջանում զգալի զոհեր եղան:

Վրաստանում մնացած 150-200 հազար հայ գաղթականների և այդ թվում նաև ջավախքահայերի դրությունը ծանր էր¹¹⁷: Ս.Ալիխանյանը գրում է. «Այդ դժբախտ տարագիրները Վրաստանի մենշևիկյան կառավարության և նրա տեղական օրգանների կողմից ենթարկվում էին ամենավայրենի հալածանքների: Նրանց արգելվում էր բնակություն հաստատել վրացական գյուղերում ու քաղաքներում»¹¹⁸: Վրացական իշխանությունների թողտվությամբ Քութայիսից, Գորիից, Բորժոմից եկած ավազակները և սպե-

¹¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 7, թ. 221Վ, գ.150՛, թ.142, ֆ. 275, ց.5, գ.61, թ.17, «Եօրեճա», 1918, օգոստոսի 8, N 138, Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական հիմքերը, էջ 214:

¹¹⁸ Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 115-116 :

կույանտները չնչին գնով գաղթականներից գնում, առանձին դեպքերում էլ վրաց միլիցիայի օգնությամբ խլում էին տասնյակ հազարավոր գլուխ անասուններին: Այս քաղաքականության արդյունքում գաղթականությունը դատապարտվեց սովամահության, իսկ Վրաստանի կառավարությունը լուծեց իր բնակչության պարենային խնդիրը¹¹⁹: Վրաց իշխանությունների «գաղթականահալած» քաղաքականության նպատակը նոր գաղթի միջոցով արագ կերպով ջավախքցիներին կոտորելը և Ախալքալաքը առանց հայերի ստանալն էր¹²⁰: Այս քաղաքականության մասն էր կազմում 1918թ. հոկտեմբերի 4-ին վրաց կառավարության գրասենյակի պետ Կոժուխովի՝ Հայոց գաղթականական գլխավոր խորհրդին ուղղված պաշտոնական գրությունը, որտեղ վրաց իշխանությունը առաջարկում էր գաղթականներին, հատկապես ախալքալաքցիներին, տեղափոխել Հայաստանի Հանրապետություն կամ Հյուսիսային Կովկաս¹²¹: 1918թ. հոկտեմբերի 14-20-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության միսիայի օրագրից տեղեկանում ենք Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներակայացուցչության գործերի հավատարմատար Ա. Ջամայանի վրաց կառավարությանն ուղղված պատասխանին. «... մեր բոլոր ջանքերը տաճիկների հետ այդ խնդրով համաձայնութեան գալու առայժմ արդիւնք չեն ունեցել. Հայաստան (գաղթականներին -Ս.Ս.) տեղափոխելն անհնար է, քանի որ այնտեղ փախստականների թիւը արդէն բնիկ ժողովրդից մէկ և կէս անգամ շատ է, իսկ ինչ վերաբերվում է Հիւսիսային

¹¹⁹ Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախք, պատմության ուրվագծեր, էջ 31:

¹²⁰ Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, էջ 485:

¹²¹ Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախք, պատմության ուրվագծեր, էջ 30-31:

Կովկասին, տեղական իշխանություններն արգելել են նոր գաղթականների մուտքը երկիր. սակայն մենք բանակցություններ ենք վարում այդ իշխանությունների հետ փոխելու իրենց որոշումը և խնդրում ենք վրաց կառավարութանը, որ այդ հարցում մեզ աջակցություն ցույց տայ»¹²²: Վերը ասվածից երևում է, որ Հայաստանի կառավարությունը բանակցություններ էր վարում Հյուսիսային Կովկասի իշխանությունների հետ: Հյուսիսային Կովկասի իշխանություն անվան տակ՝ այդ ժամանակահատվածում, պետք է հասկանալ Թերեքի Խորհրդային Հանրապետությանը, որը հարավից սահմանակից էր Վրաստանին: Մեկ այլ արխիվային փաստաթղթում նշված է, որ բանակցություններին Հայաստանի շահերը պաշտպանում էր Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը, որի անունը, ազգանունը նշված չէ¹²³: Քանի որ Հյուսիսային Կովկասում տվյալ ժամանակահատվածում Հայաստանի կառավարությունը դիվանագիտական ներկայացուցիչներ չուներ, ապա հնարավոր է, որ բանակցություններին մասնակցող հայ դիվանագետը Ա. Ջամայանն էր: Ամենայն հավանականությամբ Հայաստանի կառավարության համար վերոհիշյալ բանակցությունները պարզապես պատրվակ էին Վրաստանի տարածքում ապաստանած հայության գաղթը Հյուսիսային Կովկաս թույլ չտալու և ժամանակ շահելու համար: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ Անդրկովկասում փոխվեց քաղաքական իրադրությունը այդ բանակցությունները ընդհատվեցին և վրաց կառավարությանը չհաջողվեց իր տարածքում ապաստանած հայ

¹²² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 70, ֆ. 275, ց. 5, գ. 30, թ. 7:

¹²³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 70:

գաղթականներին Ռուսավիթական ճանապարհով տեղափոխել
Հյուսիսային Կովկաս:

1918թ. նոյեմբերից, հաղթահարելով վրաց զինվորական իշ-
խանությունների հարուցած տարաբնույթ արգելքները, հաճախ
շրջանցիկ ճանապարհներով, գաղթականության բեկորները
սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայ-
րերը: Բակուրիանից Ախալքալաք անցնելու թույլտվության
դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում
էին ստորագրություններ վրացահայատակություն ընդունելու,
գավառը Վրաստանի մասը ճանաչելու մասին¹²⁴:

1918թ. թուրքական արշավանքի հետևանքով Հյուսիսային
Կովկաս հեռացան ոչ միայն արևմտահայերը, Կարսի մարզի,
Երևանի, Թիֆլիսի նահանգների, Բաթումի և Սուխումի շրջան-
ների հայերը, այլ նաև Բաքու նահանգի հայ բնակչությունը:
1918թ. ընթացքում Բաքվի նահանգի հայերը Հյուսիսային Կովկաս
էին անցնում Բաքու քաղաքից՝ նավերով, մասամբ երկաթուղով
(քաղաքացիական կռիվների և Դադստանի մահմեդականների
հարձակումների հետևանքով Անդրկովկասը Հյուսիսային Կով-
կասի հետ միացնող երկաթուղին անկանոն էր աշխատում¹²⁵):
1918թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Ար-
տաքին գործերի նախարարին ուղղված նամակում Ա. Ջամալյանը
գրում է. «Հայերից շատերը հեռացած են եղել քաղաքից դեռ շատ

¹²⁴ Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին
քառորդին, էջ 295:

¹²⁵ Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920
թթ., փաստաթղթերի և կյութերի ժողովածու, էջ 263, Խուրշուդյան Լ., Ստեփան
Շահումյան, պետական և պարտիական գործունեությունը 1917-1918
թվականներին, էջ 272, 319:

վաղ, իսկ շատերն էլ այդ օրերին են հեռացել (Բաքվի անկման նախօրեին - Ս.Ս.) և գտնվում են Նարզին կղզում, Պետրովսկ, Էնգելի և մասամբ նավերով հաճում են ծովի վրա»¹²⁶: 1918թ. գարնանը և ամռանը Բաքվից Հյուսիսային Կովկաս հեռացան քաղաքի մեծահարուստ հայերից շատերը: Այս կապակցությամբ Գ. Ամիրջյանը գրում է. «Բազուի հայ բնակչության հարուստ դասակարգը, վերահաս վտանգը նախազգալով, քաղաքեն հեռացած էր»¹²⁷: Նրանց մեծ մասը նավերով անցան Պետրովսկ և Դերբենտ, իսկ այնուհետև երկաթուղով տեղափոխվեցին Միներալնիե վոդի՝ Կիպովոզսկի¹²⁸:

1918թ. սեպտեմբերին Բաքվից Հյուսիսային Կովկաս շարժվող հայերի հոսքը հասավ իր գագաթնակետին: Թուրքական զորքերի կողմից քաղաքը գրավելու նախօրեին՝ սեպտեմբերի 14-ից 15-ը, գաղթականներով լցված նավերը Բաքվից ուղևորվեցին Կասպից ծովի ափին գտնվող մոտակա նավահանգստային քաղաքները, այդ թվում՝ Պետրովսկ և Դերբենտ: Բաքվից գաղթած հայ բնակչության թվի վերաբերյալ կան հակասական տվյալներ: Ըստ Բ.Իշխանյանի Բաքվից հեռացած հայերի թիվը 31.293 էր¹²⁹: Ռ. Խոյլյանը, Գ.Ստեփանյանը և Մելիք-Յուլյանը գրում են 50 հազար գաղթականների մասին¹³⁰, որն էլ, հանդիսանում է Բաքվից

¹²⁶ Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 100:

¹²⁷ Ամիրջյան Գ., Ռոստոմի հետ «Հայրենիք», Բոստոն, 1960, ապրիլ, N4 (410), էջ 6:

¹²⁸ Տե՛ս Գ.Ա.Թ., Շ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 104, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 9:

¹²⁹ Տե՛ս Իշխանյան Բ., Բազուի Մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 102:

¹³⁰ Տե՛ս Խոյլեան Ռ., 1918 եւ Բազուի հերոսամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1966, մարտ, N 3, էջ 70, Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), ատենախոսություն, Լ.00.01 - «Հայոց պատմություն»

հեռացած հայ գաղթականների մոտավոր թիվը: Այս գաղթականներից 40 հազարը հեռացավ Պետրովսկ և Դերբենտ¹³¹: Պետրովսկը դարձավ հայ գաղթականների գլխավոր կայանատեղին: Այնտեղ ապաստանեց 26 հազար գաղթական¹³²: Մնացածը հանգրվանեց Դերբենտում:

1918թ. սեպտեմբերին Բաքվից Դաղստան մեկնած գաղթականները ապրում էին բաց երկնքի տակ և սննդամթերքի սղության հետևանքով հայտնվել էին ծանր կացության մեջ¹³³: Գաղթականներից բացի դեռ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Դաղստանի տարածքում՝ գլխավորապես Դերբենտ, Պետրովսկ և Թեմիր-Խան-Շուրա քաղաքներում, բնակվում էին մոտ 5000 հնաբնակ հայեր¹³⁴: Այսինքն 1918թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Դաղստանում գտնվող հայերի մոտավոր թիվը 45.000 էր:

Բաքվին տիրանալուց հետո թուրքերի համար բացվեց Հյուսիսային Կովկաս տանող ճանապարհը: Թուրքական 15-րդ հետևակային դիվիզիան Յուսուֆ Իզզեթ փաշայի գլխավորությամբ շարժվեց Դերբենտի ուղղությամբ՝ նպատակ ունենալով տեղի մահմեդականների աջակցությամբ գրավել Հյուսիսային Կովկասը¹³⁵:

մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան, 2009, էջ 380:

¹³¹ Տե՛ս Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 415:

¹³² Տե՛ս նույն տեղում:

¹³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 71:

¹³⁴ Տե՛ս Անանյան Զ., Խաչատրյան Բ., *Армянские Общины России*, с. 73, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 466:

¹³⁵ Տե՛ս Гражданская война и военная интервенция в СССР, энциклопедия, М., 1987, с. 146:

Չնայած Հյուսիսային Կովկասի թուրք գործակալների հակահայկական քարոզչությանը՝ Դադստանի մահմեդականների մեծ մասը հայերի նկատմամբ թշնամաբար տրամադրված չէր: 1918թ. հոկտեմբերի 1-5-ը ընկած ժամանակահատվածում Ա. Չամայանի և թուրքական ներկայացուցիչ Արդուլ-Քերիմ փաշայի ու Հյուսիսային Կովկասի լեռնականների միության կառավարության նախագահ Տ. Չերմոյևի հետ հանդիպման ժամանակ վերջինս նշեց, որ «... լեռնականները հայերի վերաբերմամբ բացասական զգացմունքներ չեն տածում և որ, ընդհակառակը ուզում են հաշտ ապրել: Ոչ մի հայ-մուսուլմանական խնդիր նրա համոզումով գոյութիւն չունի, այլ կա հայ-թուրքական խնդիր»¹³⁶: Այսինքն Դադստանի և Թերեքի մահմեդական բնակչության հիմնական մասը թշնամական վերաբերմունք չունեք այդ շրջաններում բնակվող և նոր ապաստանած հայության հանդեպ: Բացառություն էին կազմում Դերբենտում և դրա շրջակայքում բնակվող թաթարները և թուրք գործակալների քարոզչության հետևանքով Իզգեթ փաշային միացած մի քանի հազար մոլեռանդ մահմեդականները, գլխավորապես՝ չեչենները:

1918թ. սեպտեմբերին Դերբենտը, Պետրովսկը և հարակից շրջանները գտնվում էին Լ. Բիչերախովի գլխավորած Յենտրոկասայան դիկտատուրայի իշխանության տակ¹³⁷: Թուրքական զորքերի Դադստան առաջանալու վտանգը և, ամենայն հավանականությամբ, Լ. Բիչերախովի՝ Բաքուն գրավելու խոստումները ստիպեցին Պետրովսկում գտնվող հայկական զորամիավորում-

¹³⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 67, թ. 44:

¹³⁷ Տե՛ս « Աշխատավոր», 1918, հոկտեմբերի 16, N 157, Ачкасов В. И., Басов А. В., Сумин А. И. и др., Боевой путь Советского Военно-Морского Флота, Москва, 1988, с. 70:

ներին միանալ նրա բանակին¹³⁸: Դրանից բացի Լ. Բիչերախովը իր իշխանության տակ եղած շրջաններում 18-40 տարեկան հայերին գորակոչեց բանակ¹³⁹:

1918թ. հոկտեմբերի 6-ին թուրքական զորքերը հայ-ռուսական զորքերի դեմ մղած երկարատև մարտերից հետո գրավեցին Դերբենտը, որտեղ հայերի ջարդեր կազմակերպեցին¹⁴⁰: Դերբենտում տեղի ունեցած հայկական ջարդերը հաստատում են այն իրողությունը, որ ամենուրեք, ուր հայտնվում էր թուրքական զորքը, կոտորվում կամ գաղթական էր դառնում հայությունը:

Դերբենտը կորցնելուց հետո Լ.Բիչերախովի զորքերը կենտրոնացան Պետրովսկում՝ նախապատրաստվելով քաղաքի պաշտպանությանը:

Պետրովսկում ապաստանած հայերը Դերբենտի ջարդերից և թուրք-դադստանյան զորքերի առաջխաղացումից սարսափած՝ կրկին գաղթեցին: Քաղաքից հեռանում էին հիմնականում 2 ուղղությամբ՝ ա) Թերեքի արևելյան շրջաններ¹⁴¹, բ) Կասպից ծովի այլ նավահանգստային քաղաքներ: Հոկտեմբերին Պետրովսկից Աստրախան մեկնած նավերի միայն մեկ խմբում կար 2-3 հազար հայ և 500 ռուս գաղթական¹⁴²: Պետրովսկից Էնգելի հեռացած 700 հայ կամավորներին անգլիական հրամանատարությունը, իբրև թե “ռազմական նկատառումներով”, արգելեց մոտենալ նավահանգստին, որի պատճառով նրանք ութ օր շարունակ մնացին

¹³⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 1, ֆ. 275, ց. 5, գ. 30, թ. 22:

¹³⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 71:

¹⁴⁰ Տե՛ս Հայերի կոտորածները Բարվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և կյութերի ժողովածու, էջ 155:

¹⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 273:

¹⁴² Տե՛ս Խոյլեան Ռ., 1918 և Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1966, մարտ, N 3, էջ 71:

բաց ծովում: Հետևանքը եղավ այն, որ բռնկվեցին տարափոխիկ հիվանդություններ, իսկ սննդի պակասության պատճառով եղան մահացության դեպքեր: 1918թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Պետրոպոլսկից հեռացած գաղթականների ընդհանուր թիվը մոտ 23.000 էր¹⁴³: Նրանցից մոտ 10 հազարը ապաստանեց Հյուսիսային Կովկասի կենտրոնական և արևմտյան հատվածում, իսկ 13 հազարը՝ Կասպից ծովի առափնյա շրջաններում¹⁴⁴:

1918թ. հոկտեմբերի 29-ին Իզդեթ փաշայի զորքերը գրավեցին Թեմիր-Խան-Շուրան: Չնայած հոկտեմբերի 30-ի զինադադարով Թուրքիայի և Դաշնակից պետությունների միջև ռազմական գործողություններն ավարտվեցին, սակայն Իզդեթ փաշան, քողարկվելով Լեռնականների կառավարության անվան տակ, նոյեմբերին շարունակեց ռազմական գործողությունները Դաղստանում¹⁴⁵: 1918թ. նոյեմբերի 8-ին նա գրավեց Պետրոպոլսկը: Բ. Իշխանյանը գրում է, որ Բաքվի գաղթականներից Պետրոպոլսկում մահացել է 1500 հոգի¹⁴⁶: Ամենայն հավանականությամբ նրանց մեծ մասը զոհվեց հենց պատերազմական գործողությունների ժամանակ:

1918թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Դաղստանում ապաստանած Բաքվի հայ գաղթականների մահվան և արտագաղթի հետևանքով նրանց թիվը Հյուսիսային Կովկասում 40 հազարից նվազեց մինչև 25.500-ի:

¹⁴³ Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքվի անկումը և հայերի գաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ), «Իրան-նամե», 2000, հատոր 35, էջ 60:

¹⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁴⁵ Տե՛ս շԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 221:

¹⁴⁶ Տե՛ս Իշխանյան Բ., Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 96 :

Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հայության հոսքը Հյուսիսային Կովկաս շարունակվեց նաև 1919-1920թթ. ընթացքում¹⁴⁷:

Այսպիսով, 1918թ. թուրքական արշավանքի հետևանքով Անդրկովկասի հնաբնակ և գաղթական հայերի մի հատվածը Ռազմավիրական ճանապարհով, Փոթիից և Բաքվից նավերով հեռացավ Հյուսիսային Կովկաս: Արխիվային նյութերում և գրականության մեջ նրանց թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները բազմաթիվ են: Ըստ այդ տվյալների 1918թ.-ին Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականների թվաքանակը 60 հազարից հասնում էր 150 հազարի¹⁴⁸: Այս տարբերությունը բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

1. Բացակայում է գիտական հիմունքներով կատարված վիճակագրությունը:

2. Որոշ ուսումնասիրողներ իրենց հաշվարկներում չեն զանազանել Հյուսիսային Կովկասի գաղթական և հնաբնակ հայերին:

3. Ուսումնասիրողների մի մասը Հյուսիսային Կովկասի մաս է համարել նաև Ռոստովը և Նոր նախիջևանը, իսկ ոմանց շփոթեցրել են 1920-ական թթ.-ին Հյուսիսային Կովկասում և հա-

¹⁴⁷ Տե՛ս Աբեյան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում (1 հունվարի 1914- 1930 հունվարի 1), էջ 58, Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, էջ 136-137:

¹⁴⁸ Տե՛ս շԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 150¹, թ. 142, ֆ. 275, ց. 5 գ. 61, թ. 17, ԳԱԹ, Ն. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 112, Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական հիմքերը, էջ 214, Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ., էջ 38, Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, էջ 138:

րակից շրջաններում տեղ գտած վարչական նոր փոփոխությունները, որի հետևանքով Հյուսիսային Կովկասը հաճախ նույնացվել է Հյուսիսկովկասյան երկրամասի հետ, մինչդեռ դրանց սահմանները տարբերվել են միմյանցից:

4. Սովի, համաճարակների, երկրամասում անընդմեջ շարունակվող քաղաքացիական կոիվների հետևանքով գաղթականությունը բավական հոսուն է եղել, չի ունեցել իր մնայուն տեղավայրերը:

1918թ. ընթացքում Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականության մոտավոր թիվը ստանալու համար կատարվել է հետևյալ հաշվարկը: 1918թ. մայիս-հունիս ամիսներին Ռազմավիթրական ճանապարհով Հյուսիսային Կովկաս անցած 42-45 հազար հայ գաղթականների թվին ավելացնելով 1918թ. սեպտեմբերին Բաքվից Հյուսիսային Կովկաս անցած հայերի մոտավոր թիվը՝ (40 հազար), ստացել ենք 82-85 հազար: Այս թվին գումարել ենք 1918թ. առաջին կեսին Աբխազիայից Կուբան անցած 400 հայ ընտանիքների անդամների թիվը, որը, կոպիտ հաշվարկով, պետք է 2000 հոգուց պակաս չլիներ (հաշվի առնելով նաև այդ ժամանակահատվածի բնական աճի բարձր մակարդակը), և ստացել ենք 84-87 հազար: Այնուհետև այս թվին գումարել ենք 1918թ. մայիս-հուլիս ամիսներին Փոթիից Հյուսիսային Կովկաս անցած հայերի թիվը (40 հազար): Փաստորեն 1918թ. մայիսից մինչև սեպտեմբերի վերջը Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս եր անցել առնվազն 124-127 հազար հայ գաղթական: Նրանցից մոտ 13 հազարը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հեռացան Հյուսիսային Կովկա-

սից¹⁴⁹, որի հետևանքով երկրամասում ապաստանած հայ գաղթականների թիվը նվազեց և կազմեց 111-114 հազար: Եթե այս թվաքանակին գումարենք 1915-1917թթ. ընթացքում Հյուսիսային Կովկաս եկած շուրջ 30 հազար արևմտահայ և պարսկահայ գաղթականներին, ապա կստացվի, որ Հյուսիսային Կովկասում 1918թ. սեպտեմբերի վերջին կար 154-157 հազար, իսկ նոյեմբերին՝ 141-144 հազար գաղթական:

1918թ. ընթացքում Անդրկովկասի տարբեր շրջաններից Հյուսիսային Կովկաս եկած գաղթականների թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

	Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս գաղթի ուղղությունները	Հյուսիսային Կովկաս եկած գաղթականների թիվը	Երկրամասից հեռացած գաղթականների թիվը
1	Ռազմավիրական ճանապարհ	42.000-45.000	-
2	Փոթիից Նովոռուսիյսկ, Տուապսե	40.000	-
3	Բաքվից Պետրոպոլսկ, Դերբենտ	40.000	13.000
4	Աբխազիա-Կուրան	2000	-
5	Շնկիանուր	124.000-127.000	13.000

¹⁴⁹ Մտեփանյան Գ., Բաքվի անկումը և հայերի գաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ), էջ 60:

1918թ. Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս եկած գաղթականների թվաքանակը

1918թ. Հյուսիսային Կովկաս անցած գաղթականներից առնվազն 30 հազարը արևմտահայ էին¹⁵⁰:

1918թ.-ին Բաքվի նահանգից Հյուսիսային Կովկաս գաղթած հայերի թիվը մենք արդեն գիտենք՝ 40.000 հոգի: Հայտնի է նաև Աբխազիայից Հյուսիսային Կովկաս անցած հայ գաղթականների թիվը՝ շուրջ 2000 հոգի:

1918թ. Հյուսիսային Կովկաս եկած արևելահայերի թիվը որոշելու համար հարկավոր է նույն թվականին երկրամաս եկած հայ գաղթականների թվից հանել արևմտահայերի, Բաքվի նահանգի հայերի և աբխազահայերի թիվը: Արդյունքում կստացվի 52-55 հազար, որն էլ 1918թ. ընթացքում Հյուսիսային Կովկասում ապաստանած արևելահայերի մոտավոր թիվն է:

Այսպիսով, 1918թ. ընթացքում Հյուսիսային Կովկաս էր եկել 124-127 հազար հայ գաղթական, որից 52-55 հազարը՝ արևելահայ, 30 հազարը՝ արևմտահայ, 40 հազարը՝ Բաքվի նահանգի հայեր և 2 հազարը՝ աբխազահայեր:

¹⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291¹, թ. 13:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՂԱՇԱՐԺԸ

(1918թ. նոյեմբեր – 1920թ. մարտ)

2.1 Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների դիրքորոշումը երկրամասի հայության նկատմամբ և հայկական կազմակերպությունների գործունեության աշխուժացումը

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Պետրոգրադից փախուստի դիմած և Նովոչերկասկոյում հաստատված ցարական նախկին գեներալ Մ. Ալեքսեևը կազմակերպեց հակախորհրդային ուղղվածության զինված ուժեր, որ պաշտոնապես անվանվեց Կամավորական բանակ, որին աջակցեց Դոնի զինվորական կառավարության ղեկավար ատաման Կալեդինը: Կամավորական բանակը բոլշևիզմի դեմ պայքարի հավաքատեղի ընտրեց Դոնը, որտեղից հարձակվելու էր Կուբանի խորհրդային իշխանության վրա: 1918թ. հունիսին Կամավորական բանակի արշավանքն ավարտվեց հաղթանակով, օգոստոսի 3-ին գրավվեց Եկատերինոդարը (այժմյան՝ Կրասնոդար), որը դարձավ հարավի հակա-

խորհրդային ուժերի կենտրոնը՝ նոր ստեղծված պետական կազմավորման՝ «Հատուկ խորհրդակցության» մայրաքաղաքը: Այս կազմավորման և նրա զինված ուժերի՝ Կամավորական բանակի նպատակն էր տապալել բոլշևիկյան վարչակարգը և վերականգնել Ռուսական կայսրությունը՝ 1914թ. սահմաններով¹⁵¹: 1918թ. սեպտեմբերի 25-ին զենեքալ Ալեքսեևի մահից հետո Դենիկինը վերակազմավորեց Կամավորական բանակը և ընդունեց գլխավոր հրամանատարի պաշտոնը՝ իր ձեռքում կենտրոնացնելով ռազմական և վարչաքաղաքացիական իշխանությունը: 1918թ. դեկտեմբերի 26-ին նա հռչակվեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար¹⁵²:

Չնայած Հյուսիսային Կովկասի, Դոնի և Աստրախանի կազակները և Կամավորական բանակը համատեղ պայքարում էին խորհրդային Ռուսաստանի դեմ, սակայն նրանց միջև գոյություն ունեին ներքին տարաձայնություններ: Կամավորական բանակի նպատակը Ռուսաստանի վերամիավորումն էր, մինչդեռ կազակների կառավարությունները ցանկանում էին անկախանալ¹⁵³: Կազակների անջատողական ձգտումները բավարարելու համար Կամավորական բանակը ստիպված էր նրանց ներքին գործերը տնօրինելու լայն ինքնավարություն տալ:

1918թ. վերջին և 1919թ. սկզբին Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների ռազմական հաջո-

¹⁵¹ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Երևան, 2011, էջ 72-73:

¹⁵² Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918թ հունիս-նոյեմբեր), էջ 40:

¹⁵³ Տե՛ս ԴԱՐՓ, փ. 446, օտ. 2, թ. 23, յ. 53-54:

ղությունները հարկադրեցին խորհրդային գործերին հեռանալ Հյուսիսային Կովկասից: Նրանց հետ հեռացավ նաև Մոսկվայից և Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս եկած հայ բոլշևիկների մեծ մասը: Երկրամասում մնացած հայ բոլշևիկներին ոչ խորհրդային պետական կազմավորումները հետապնդում և հալածում էին: Ս.Ալիխանյանը փաստում է, որ սպիտակները դաշնակցականների աջակցությամբ ձերբակալում և գնդակահարում էին հայ բոլշևիկներին, որոնց թվում կային նաև հայ գաղթականներ¹⁵⁴: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդային իշխանության օրոք Հյուսիսային Կովկասի հնաբնակ հայության մի հատվածը՝ մասնավորապես հայ բուրժուազիան և դաշնակցական գործիչները, հալածվել և կողոպտվել են (առաջին հերթին հայ բոլշևիկների ջանքերի շնորհիվ), չի բացառվում, որ ոչ խորհրդային պետական կազմավորումների օրոք նրանց մեջ լինեին մարդիկ, որ կցանկանային վրեժխնդիր լինել:

Կամավորական բանակի և կազակների կառավարությունների վերաբերմունքը հայ գաղթականների նկատմամբ բարյացակամ էր¹⁵⁵: Այդ վերաբերմունքը պայմանավորված էր նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների բարեկամական հարաբերությունների առկայությամբ¹⁵⁶: Չնայած այդ վերաբերմունքին՝ Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական

¹⁵⁴ Տե՛ս Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), էջ 108:

¹⁵⁵ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918 սեպտեմբերի 24, N 192, Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 266:

¹⁵⁶ Տե՛ս մանրամասն Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.):

կազմավորումները, մասնավորապես Կուրանի կառավարությունը, փորձում էին երկրամասից հեռացնել քաղաքներում կուտակված և տարատեսակ հիվանդություններով տառապող հայ գաղթականությանը: «Պետք է ասեմ,- գրում է Հ.Սառիկյանը իր հուշերում,- որ այդ օրերում այդ շրջանները և, առհասարակ, ամբողջ Հյուսիսային Կովկասը գտնվում էր Դենիկինի իրավասության տակ: Բոլշևիկները վաղուց նահանջել էին մեծ կորուստներով: Նրանց մի մասն անցել էր Վրաստան ու այնտեղ զինաթափ եղել, իսկ մյուս մասն Ստավրոպոլի վրայով անցել էր Աստրախան: Նրանց հեռանալով դժվարացել էր նաև գաղթականների գործը, որովհետև Դենիկինի կառավարությունից ոչ մի նպաստ չէինք ստանում: Մնացել էին Հայաստանի խնամատարությունից ստացած նպաստները և տեղի ու շրջանի հայ ազգաբնակչության նպաստները»¹⁵⁷: Փաստորեն Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումները գաղթականներին երկրամասից հեռացնելու նպատակով զրկեցին նրանց խորհրդային իշխանության օրոք տրամադրվող նպաստից, որի պատճառով գաղթականների մի մասը հայտնվեց ծանր դրության մեջ:

Հյուսիսային Կովկասում հին կարգերի վերականգնումը տեղացի և գաղթական հայությանը բերեց ոչ միայն բացասական, այլ նաև դրական փոփոխություններ: «Պետք է ըսել,- գրում է Ռ. Դարբինյանը,- թե Դենիկինի տիրապետութեան սահմաններուն մեջ հայերու վիճակը ընդհանրապես շատ լաւ էր: Պատճառներէն մէկն ալ այն էր, որ հրեաները, հալածանքի ենթարկուելով, չէզոքացուած էին ու չբացած առևտուրի հրապարակէն և ասպարէզը մեծ մասամբ ձգած հայերուն: Առիթէն կ'օգտուէին ոչ միայն տե-

¹⁵⁷ ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 126:

ղացի հայերը, այլ արևմտահայ գաղթականները, որոնք պատերազմի ժամանակ եկած էին Հիւսիսային Կովկաս եւ Հարաւային Ռուսաստան ու երկար ատեն իրենց գոյութիւնը կը պահէին հանրային կամ պետական նպաստներով: Այժմ անոնց մեծ մասը կը զբաղէր առեւտրով սեւ շուկայի մէջ և ոմանք հարստացած էին անհաւատալի կերպով:

Խարկովէն մինչև Ռոստով, Ռոստովէն մինչև Եկատերինոտար, Եկատերինոտարէն մինչև Նովոռոսսիյսկ հայերը իշխող դիրք զբաւած էին տնտեսական կեանքին մէջ: Եռանդուն առեւտուր կար Պոլսոյ և առհասարակ արտասահմանի հետ: Ու այդ արտաքին առեւտուրն ալ կը գտնուէր հայերու ձեռքը: Բոլոր երկաթուղային կայարանները, գնացքները լեցուն էին հայերով: Հայերէն լեզուն այնքան յաճախ կը լսէիր, որ երբեմն կը թւէր, թէ կը գտնուէիր ոչ թէ Ռուսաստանի, այլ Հայաստանի մէջ»¹⁵⁸:

Վերը բերված օրինակը և արխիվային նյութերում առկա բազմաթիվ տեղեկությունները փաստում են, որ Հյուսիսային Կովկասից բոլշևիկների հեռանալուց հետո երկրամասի գրեթե ողջ առևտուրը կենտրոնացավ հնաբնակ և գաղթական հայության ձեռքերում¹⁵⁹:

Եթէ գաղթականների մի մասն իր աշխատասիրության և հնարամտության շնորհիվ կարողացավ առևտրով գումար վաստակել և գոյատևել, ապա մյուս մասը, զրկվելով նպաստից, հայտնվեց ոչնչացման եզրին: Սովը և տարատեսակ հիվանդությունները հազարավոր գաղթականների կյանքեր իլեցին¹⁶⁰: Շ. Սա-

¹⁵⁸ Դարբինեան Ռ., Կեանքիս զրքէն (փշրանքներ իմ յուշերէն), հինգերորդ մաս, Դէպի Հայաստան, « Հայրենիք » ամսագիր, Բոստոն, 1960, N 8 (414), էջ 25-26:

¹⁵⁹ Տե՛ս 'ս ԳԱԹ, Շ. Սատիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 126-127, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291¹, թ. 13:

¹⁶⁰ Տե՛ս 'ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 91, ֆ. 205, ց. 1, գ. 544, թ. 3:

ոիկյանը, անդրադառնալով 1918-1919 թթ. Վլադիկավկազի հայ գաղթականների ծանր կացությանը, գրում է. «Վլադիկավկազում, որ համեմատաբար նպաստավոր պայմաններ կային, մեր գաղթականներից օրական 40-50 հոգի էին մեռնում, մի քահանա գերեզմանատնից չէր հեռանում»¹⁶¹: Արխիվային նյութերում, ժամանակի մամուլում և գրականության մեջ առավել հաճախ են հանդիպում 1918-1919 թթ. ընթացքում Եկատերինոդարում կուտակված գաղթականության աղետալի դրությունը նկարագրող տեղեկությունները: Քաղաքի հազարավոր գաղթականների շրջանում մոլեզնդ տարատեսակ հիվանդությունները ամեն օր բազմաթիվ կյանքեր էին խլում¹⁶²: Հիվանդ գաղթականներին օգնելու նպատակով 1918թ. հոկտեմբերին քաղաքի Հայոց ազգային խորհրդի ջանքերով բացվեց մի լազարեթ:¹⁶³: Սակայն այն չէր կարող սպասարկել քաղաքի բոլոր հիվանդ գաղթականներին: 1918թ. վերջին Եկատերինոդարում տիրող հակահիգիենիկ դրության հետևանքով սկսվեց տիֆի և ժանտախտի համաճարակը¹⁶⁴: Եկատերինոդարի բնակչությունը դրանում մեղադրեց քաղաքում ապաստանած գաղթականներին (որոնց մեծամասնությունը՝ մոտ 8.000 հոգի, հայ էին) և պահանջեց վտարել նրանց¹⁶⁵: Քանի որ Կուրանի երկրամասի այլ քաղաքներում և բնակավայրերում հայ գաղթա-

¹⁶¹ ԳԱԹ, Հ. Ստոիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 112:

¹⁶² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 24, N 192:

¹⁶³ Симонян М., Армянская диаспора Северо-Западного Кавказа: формирование, конфессиональный облик, взаимоотношения с властью, общественными и религиозными объединениями (конец XVIII - конец XX века), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02, с. 66:

¹⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁶⁵ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 24, N 192:

կանների թիվը ևս մեծ էր, Կուրանի կառավարությունը չտեղափոխեց նրանց այլ շրջաններ, այլ 1919թ. մարտ ամսից սահմանակալեց նոր գաղթականների մուտքը քաղաք¹⁶⁶:

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների զգալի հատվածը ապրում էր բաց երկնքի տակ, մնացածը՝ վրաններում, ամբարներում, հանրակացարաններում, դպրոցներում (գերագանցապես հայկական), գորանոցներում, զանազան կառույցների նկուղներում և բնակության համար շատ թե քիչ պիտանի այլ վայրերում¹⁶⁷: Տեղական իշխանությունները հաճախ վրնդում էին գաղթականներին իրենց ապաստանած վայրերից¹⁶⁸: Երկրամասի տեղական իշխանությունների պարտադրանքով գաղթականները ներգրավվում էին հարկադիր աշխատանքներում: Դրանից խուսափելու համար շատերը անընդհատ տեղաշարժվում էին¹⁶⁹:

Բոլշևիկների հեռանալուց հետո Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների հասարակական-քաղաքական կյանքը սկսեց աշխուժանալ: Խորհրդային իշխանության օրոք լուծարված հայկական ազգային կազմակերպությունները (Հայոց ազգային խորհուրդները, գաղթականական կոմիտեները, բարեգործական ընկերությունները և այլն), աստիճանաբար վերսկսեցին իրենց գործունեությունը: Սակայն մինչև 1919թ. սկիզբը՝ միջոցների սղության և այդ կազմակերպությունների գործունեությունը հա-

¹⁶⁶ Տե՛ս ԳԱԿԿ, ֆ. P-7. օր. 1. ձ. 572. յ. 91:

¹⁶⁷ Տե՛ս ՀԱՍ ֆ. 205, ց. 1, գ. 544, թ. 3, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 334:

¹⁶⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

մակարգող կենտրոնական մարմնի բացակայության պատճառով նրանք չկարողացան լրջորեն աջակցել հայ գաղթականներին¹⁷⁰:

Եթե Հյուսիսային Կովկասի կազակների կառավարությունները շահագրգռված էին հայ գաղթականներին հեռացնել երկրամասից, ապա Կամավորական բանակի հրամանատարությունը փորձում էր նրանց, հնաբնակ հայերին և գերությունից հայրենիք վերադարձող հազարավոր հայ ռազմիկներին գորակոչել բանակ: Մինչև 1919թ. սկիզբը, Հյուսիսային Կովկասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների բացակայության և հայկական կազմակերպությունների անգործության հետևանքով հազարավոր հայեր գորակոչվեցին ոչ խորհրդային պետական կազմավորումների գորքեր¹⁷¹: Ռուսաստանի հարավի զինված ուժերը հայերից առանձին ջոկատներ կազմեցին՝ օգտագործելով դրանք Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի դեմ¹⁷²:

Կամավորական բանակի հրամանատարությանը հաջողվեց նաև իր քաղաքական նպատակներին ծառայեցնել Հյուսիսային Կովկասի առանձին շրջաններում բնակվող հայ բնակչությանը: Նման քաղաքականության վառ օրինակ է 1918թ. վերջին 1919թ. սկզբին Սոչիի շրջանում հայերի մասնակցությամբ տեղի ունեցած իրադարձությունները:

¹⁷⁰ Տե՛ս շ. 200, գ. 1, զ. 143, թ. 204, Ֆ. 205, գ. 1, զ. 544, թ. 3, Ֆ. 275, գ. 5, զ. 12, թ. 17, «Հորիզոն», Թիֆլիս, 1918 սեպտեմբերի 24, N 192, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 333:

¹⁷¹ Տե՛ս շ. 200, գ. 1, զ. 100, թ. 81, գ. 2, զ. 44, թ. 4:

¹⁷² Տե՛ս նույն տեղում, գ. 1, զ. 73 I, թ. 129, զ. 158, թ. 91:

1914թ.-ին Չեռնոմորսկի նահանգի Սոչիի շրջանի հայ բնակչության թիվը մոտ 25.000 էր¹⁷³: Նրանք կազմում էին Սոչիի շրջանի գյուղական բնակչության 36,7%-ը¹⁷⁴, իսկ ողջ շրջանի բնակչության գրեթե 30%-ը¹⁷⁵: Շրջանում բնակվող հայերի մեծ մասը համշենահայեր էին: Նրանք հիմնականում զբաղվում էին ծխախոտի մշակմամբ և առևտրով¹⁷⁶:

Առաջին աշխարհամարտի տարիներին Սոչիի շրջան եկան մի քանի հազար հայ գաղթականներ:

1918թ. հուլիսին Վրաստանի գորքերը, օգտվելով Կուրան-Չեռնոմորյան Հանրապետության* ծանր դրությունից, զավթեցին Սոչիի շրջանը¹⁷⁷, ինչը առաջացրեց Չեռնոմորսկ նահանգի հյուսիսային մասը գրաված Կամավորական բանակի դժգոհությունը: Գիտակցելով, որ Կամավորական բանակի հրամանատարությունը վաղ թե ուշ անդրադառնալու է Սոչիի հիմնահարցին, վրացական կառավարությունը, ընդունելով գեներալ Մ.Ալեքսեևի առաջարկը, 1918թ սեպտեմբերի կեսերին Եկատերինոդար գործուղեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորու գլխա-

¹⁷³ Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 60:

¹⁷⁴ Տե՛ս Деникин А., Очерки Русской смуты, том четвертый, том пятый, Вооруженные силы Юга России, Москва, 2005, с. 224:

¹⁷⁵ Տե՛ս Карпов Н., Трагедия белого юга, 1920 год, Москва, 2005, с. 100:

¹⁷⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 60:

* Հակախորհրդային ուժերի դեմ պայքարը միավորելու նպատակով Խորհրդային Սևծովյան Հանրապետությունը 1918թ. մայիսի 30-ին միավորվեց Կուրանի խորհրդային հանրապետության հետ՝ ձևավորելով Կուրան-Չեռնոմորյան Խորհրդային Հանրապետությունը (տե՛ս Карпов Н.Д., Трагедия Белого Юга, 1920 год, Москва, 2005, с. 96-97):

¹⁷⁷ Տե՛ս Карпов Н., Трагедия белого юга, 1920 год, с. 97:

վորած պատվիրակությանը¹⁷⁸: Բանակցությունները արդյունք չտվեցին և ընդհատվեցին, քանի որ Վրաստանի պատվիրակությունը մերժեց Կամավորական բանակի գերագույն հրամանատարի՝ Սոչիի շրջանը վրացական զորքերից մաքրելու պահանջը¹⁷⁹: Այնուհետև Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցությունը» Վրաստանին հայտարարեց մաքսային և պարենային պատերազմ¹⁸⁰:

1918թ. հուլիսին Սոչին գրաված վրացական զորքերը սկսեցին հալածել և կողոպտել շրջանի հայ բնակչությանը: Սոչիի Հայոց ազգային խորհուրդը վրացական զորքերի անկարգությունների վերաբերյալ բազմաթիվ բողոք-դիմումներ ուղարկեց վրացական իշխանության տեղական ներկայացուցիչներին՝ խնդրելով միջամտել և վերջ դնել անօրինականություններին¹⁸¹: Վրացական իշխանությունների “սիրալիր” պատասխանը չհապաղեց: 1918թ. օգոստոսի 30-ին վրացական զինված ջոկատը Սոչիի պարետի գլխավորությամբ կողոպտեց Սոչիի Հայոց ազգային խորհրդի շենքը և բռնություններ կիրառեց խորհրդի քարտուղարի ու շենքում գտնվող այլ անձանց նկատմամբ: Այս միջադեպի կապակցությամբ Սոչիի Հայոց ազգային խորհուրդը անմիջապես հեռագրեր ուղարկեց Վրաստանի ներքին գործերի նախարարին և

¹⁷⁸ Տե՛ս Деникин А., Очерки Русской смуты, том второй, борьба генерала Корнилова, август 1917г. – апрель 1918г., том третий Белое движение и борьба Добровольческой армии, май-октябрь 1918г., Москва, 2005, с. 672:

¹⁷⁹ Տե՛ս մանրամասն Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлиси, 1919, с. 407-414, ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 117:

¹⁸⁰ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918թ. հունիս-նոյեմբեր), էջ 47:

¹⁸¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 140, թ. 2:

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության հավատարմատար Արշակ Ջամալյանին¹⁸² խնդրելով պաշտպանել Սոչիի շրջանի հայերի իրավունքները և պատժել մեղավորներին¹⁸³: Արխիվային նյութերում վրացական իշխանության և Ա. Ջամալյանի արձագանքի վերաբերյալ տեղեկություններ չկան:

Վրաստանի իշխանությունների ծանր հարկային քաղաքականության հետևանքով Սոչիի շրջանի հայերը հայտնվեցին ծանր կացության մեջ: Եարունակվեց նաև հայկական գյուղերի կողոպուտը¹⁸⁴: 1919թ. հունվարի վերջին վրացական ջոկատը հերթական անգամ ծեծի ենթարկեց և կողոպտեց Լեռնային Լոռ գյուղի բնակիչներից մեկին: Օգնության հասած համագյուղացիները վրաց զինվորներին դուրս վրնդեցին գյուղից: Սոչիի Հայոց ազգային խորհուրդը տեղական վրացական իշխանությունից խնդրեց այդ կապակցությամբ հետաքննություն սկսել և պատժել մեղավորներին: Այդ խնդրանքը կատարելու փոխարեն վրացական իշխանությունները «Գոռնի Լոռի հայ զինվորների ապստամբությունը» ճնշելու նպատակով պատժիչ զորքեր ուղարկեցին, որոնք սկսեցին հրետակոծել գյուղը¹⁸⁵: Շրջանի հայությունը, վրդովված

¹⁸² Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.), էջ 25:

¹⁸³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200 ց.1, գ. 7, թ.144:

¹⁸⁴ Տե՛ս Деникин А., Очерки Русской смуты, том четвертый, том пятый, Вооруженные силы Юга России, с. 222:

¹⁸⁵ Տե՛ս Общероссийская и национальная идентичность. Материалы международной научно-практической конференции, 19-20 апреля 2012г. / Ответственный редактор В.З. Акопян. – Пятигорск: Пятигорский государственный лингвистический Университет, 2012, с. 459.

վրացական զորքերի գործողություններից, ոտքի կանգնեց և անցավ ինքնապաշտպանության:

Սոչիի շրջանում ստեղծված իրադրությունից շտապեց օգտվել Կամավորական բանակի հրամանատարությունը: 1918թ. դեկտեմբերի սկզբին՝ օգտվելով հայ-վրացական պատերազմի հետևանքով Սոչիի շրջանից վրացական զորամիավորումների հայ-վրացական ռազմաճակատ տեղափոխությունից, Կամավորական բանակի զորամասերը առանց կռվի առաջացան մինչև հայաբնակ Լոռ կայարանը¹⁸⁶:

Չնայած, արյունահեղությունը դադարեցնելու և քաղաքական շահարկման առարկա չդառնալու, Սոչիի Հայոց ազգային խորհրդի կոչերին, շրջանի հայության մի մասը, վրացական իշխանության ազգայնամոլական քաղաքականությունից ազատվելու ցանկությունից դրդված, դիմեց Կամավորական բանակի հրամանատարությանը՝ վերջինիս հրավիրելով Սոչի¹⁸⁷: Կամավորական բանակի գերագույն հրամանատար Ա. Դենիկինը Սոչիում տիրող դրության վերաբերյալ գրում է. «Վրացական սահմանն անցած ռուսները և մասնավորապես հայերը՝ հարակից գյուղերի բնակիչները, մեր առաջնային ջոկատներին հասցնում էին օգնության խնդրանքներ և տեղեկություններ՝ այնտեղ իրենց հետ կատարվող բռնությունների մասին»¹⁸⁸:

Կամավորական բանակի հրամանատարության «սրտագին» վերաբերմունքը Սոչիի շրջանի հայերի նկատմամբ պայմանա-

¹⁸⁶ St 'u Деникин А., Очерки Русской смуты, том четвертый, том пятый, Вооруженные силы Юга России, с. 223:

¹⁸⁷ St 'u ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 82, ք. 7, գ. 409, ք. 62:

¹⁸⁸ Деникин А., Очерки Русской смуты, том четвертый, том пятый, Вооруженные силы Юга России, с. 222:

վորված էր վերջինիս քաղաքական շահով: Նպատակ ունենալով գրավել Սոչիի շրջանը՝ Կամավորական բանակը սկսեց զինել վրացական զորքերի անկարգություններին դիմադրող հայերին: Կամավորական բանակի նախաձեռնությամբ Հյուսիսային Կովկասի հայաշատ բնակավայրերում ազգությամբ ռուս կամ հայ սպաները կազմավորեցին հայկական ջոկատներ, որոնք վրացիների դեմ պայքարելու համար պետք է տեղափոխվեին Սոչիի շրջան¹⁸⁹: Կամավորական բանակի հրամանատարությունը ջանքեր գործադրեց Հայաստանի հետ ընդդեմ Վրաստանի դաշինք ձևավորելու ուղղությամբ, սակայն բոլոր նման առաջարկները մերժվեցին Հայաստանի կառավարության կողմից¹⁹⁰:

Ա.Դենիկինի հրամանով ռուսական զորքերը 1919թ. հունվարի 24-ին անցան հարձակման¹⁹¹: Այն ժամանակ, երբ Ա.Դենիկինի զորքերը հարձակվեցին վրացիների վրա ռազմաճակատից, նրանց կողմից կազմավորված հայկական ջոկատները հարվածեցին վրացական զորքին թիկունքից և թևերից, որի հետևանքով վերջինս անձնատուր եղավ¹⁹²: Ռուսական զորքերի առաջխաղացումը շարունակվեց մինչև 1919թ. փետրվարի 10-ը, որի արդյունքում Կամավորական բանակի զորամասերը հասան մինչև Բզիբ գետը: Անգլիացիների ճնշման տակ Ա.Դենիկինը ստիպված դարեցրեց հետագա առաջխաղացումը¹⁹³: Փաստորեն, Կամավո-

¹⁸⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 295, թ. 51:

¹⁹⁰ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918թ. հունիս-նոյեմբեր), էջ 91:

¹⁹¹ Տե՛ս Деникин А., Очерки Русской смуты, том четвертый, том пятый, Вооруженные силы Юга России с. 225:

¹⁹² Տե՛ս Карпов Н., Трагедия белого юга, 1920 год, с. 98:

¹⁹³ Տե՛ս նույն տեղում:

րական բանակի հրամանատարությունը հմտորեն օգտագործեց շրջանի հայությանը Սոչիի շրջանին տիրելու համար: Ավելի ուշ Կամավորական բանակի հրամանատարությունը Սուխումի հայերին աջակցելու պատրվակով փորձեց գրավել նաև այդ շրջանը¹⁹⁴:

Այսպիսով, 1918թ. կեսերից Հյուսիսային Կովկասում ռազմական առավելության հասան ոչ խորհրդային պետական կազմավորումները, որոնք 1918թ. վերջին գրավեցին երկրամասի մեծ մասը: Հյուսիսային Կովկասում քաղաքական իրադրության փոփոխման հետևանքով փոխվեց նաև երկրամասի հայերի դրությունը:

Ռուսաստանի հարավի կազակների կառավարությունները, ցանկալով ազատվել քաղաքները հեղեղած և զանազան հիվանդությունների տարածման աղբյուր հանդիսացող գաղթականներից, զրկեցին նրանց խորհրդային իշխանության օրոք տրամադրվող նպաստից: Դրա հետևանքով գաղթականները հայտնվեցին ծանր կացության մեջ: Նրանց մի մասը, օրվա հացը վաստակելու նպատակով, զբաղվեց առևտրով: Կարճ ժամանակահատվածում Հյուսիսային Կովկասի գրեթե ողջ առևտուրը կենտրոնացավ հնաբնակ և գաղթական հայերի ձեռքում:

Եթե Հյուսիսային Կովկասի կազակների կառավարությունները գաղթականներին վտարում էին իրենց պատկանող տարածքից, ապա Կամավորական բանակի հրամանատարությունը նրանց, հնաբնակ հայերին և մասնավորապես արևմտյան ռազ-

¹⁹⁴ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 181:

մաճակատից ու գերությունից հայրենիք վերադարձող հազարավոր հայ ռազմիկներին գորակոչում էր բանակ: Մինչև 1919թ. սկիզբը, երկրամասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների բացակայության և իրենց գործունեությունը վերսկսած հայկական կազմակերպությունների անգործության հետևանքով Ռուսաստանի հարավի զինված ուժերը համալրվում էին հազարավոր հայ ռազմիկներով:

Կամավորական բանակի հրամանատարությանը հաջողվեց իր քաղաքական նպատակներին ծառայեցնել վրաց իշխանություններից հալածվող Սոչիի շրջանի հայ բնակչությանը: Նրանց օգնությամբ Ա. Դենիկինը գրավեց Սոչիի շրջանը:

2.2 Հայրենադարձությունը (1918թ. նոյեմբեր – 1919թ. դեկտեմբեր)

Արխիվային նյութերի, մամուլի և գրականության ուսումնասիրությունը բերել է այն համոզման, որ Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականների հայրենադարձությունը սկսվել է 1918թ. օգոստոսից: Հայրենիք վերադարձողների մեծ մասը Կուբանի երկրամասում՝ գերազանցապես Նովոռոսիյսկում և Եկատերինոդարում ապաստանած արևելահայ գաղթականներն էին, որոնք փոքր խմբերով անցնում էին Անդրկովկաս¹⁹⁵:

¹⁹⁵ Տե՛ս «Աշխատավոր», Թիֆլիս, 1918, օգոստոսի 6, N 100, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 334:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հյուսիսային Կովկասից հայրենիք վերադարձող հայերի թիվը ավելացավ¹⁹⁶: Երկրամասի ոչ խորհրդային պետական կազմավորումների տարածքում գտնվող գաղթականները Անդրկովկաս անցնելու համար ուղևորվեցին Նովոռոսիյսկ, իսկ խորհրդային իշխանության՝ հիմնականում Թերեքի Խորհրդային Հանրապետության տարածքում գտնվողները՝ Վլադիկավկազ:

Առաջին աշխարհամարտից հետո հայրենիք սկսեցին վերադառնալ գերությունից ազատված ցարական բանակի հայ զինվորները: Նրանց մի մասը ուղևորվեց Հյուսիսային Կովկաս, գերազանցապես՝ Նովոռոսիյսկ, որտեղից փորձում էր անցնել Բաթում կամ Փոթի¹⁹⁷: Կամավորական բանակի հրամանատարությունը, օգտագործելով հարմար առիթը, նրանց զորակոչեց բանակ:

1919թ. ապրիլի 23-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղարկած նամակում գրում է. «8-րդ գնդի նախկին գնդապետ Արդության Երկայնաբազուկը, մոտ օրերս ժամանելով Նովոռոսիյսկից, հաղորդեց ինձ հետևյալը.

Գերմանիայից և Ավստրիայից վերադարձող հայ զերիններին Նովոռոսիյսկից թույլ չեն տալիս գալ Անդրկովկաս, այլ ստիպում են մնալ և մտնել Կամավորական բանակի մեջ, որի շարքերում, Արդությանի ասելով, ծառայում են մոտ 12.000 հայ զերի զինվորներ:

¹⁹⁶ Տե՛ս «Кавказское слово», 1918, նոյեմբերի 21, N 252, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 204, ֆ. 275, ց. 5, գ. 12, թ. 17:

¹⁹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 236, թ. 3, 7:

Ումանց հաջողվում է փախնել Նովոռոսիյսկից, բայց գալով Մոչի, որտեղ գոյություն ունի «Կանաչ բանակ» անունով մի ավագակախումբ, վերջինիս կողմից ենթարկվում են անողոք հալածանքի և թալանի, որից ազատ են մնում միայն նրանք, ովքեր համաձայնվում են մտնել այդ բանակը:

Հայ գերի զինվորները, ցանկանալով ազատ լինել այդ թալանից, մտնում են ավագակների շարքերը, այդպիսիների թիվը հասնում է 1½ հազարի: Հայտնելով Ձեզ այս մասին, թե հիշյալ զնդապետը և թե ես անհրաժեշտ ենք գտնում հրավիրել Ձեր ուշադրությունը՝ այս երևույթների վրա և խնդրել Ձեր կարգադրությունը՝ հիշյալ արգելքների վերացման համար»¹⁹⁸:

Նովոռոսիյսկով Հայաստան մեկնող հայ գերիներին և գաղթականներին աջակցելու նպատակով 1918թ. հոկտեմբերին կամ նոյեմբերի սկզբին Ռոստովից Նովոռոսիյսկ ուղարկվեց լիազոր Հովհաննես Ֆարաշյանցը¹⁹⁹: Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին աջակցելու և հայրենիք ուղարկելու ուղղությամբ ջանքեր էր գործադրում 1918թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության շտաբի գրասենյակի կողմից Հյուսիսային Կովկաս գործուղված փոխզնդապետ Վլասը²⁰⁰:

1918թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Նովոռոսիյսկ եկած գաղթականները հիմնականում մեկնում էին Բաթում: Ինչ վերաբերվում է Փոթիին, ապա Վրաստանի կառավարության՝ եր-

¹⁹⁸ Նույն տեղում ֆ. 200, ց. 1, գ. 100, թ. 81, ց. 2, գ. 44, թ. 4:

¹⁹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 14, թ. 137 գ. 236, թ. 3, 7:

²⁰⁰ Տե՛ս մակրամասն Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 84-86:

կիրը հայաթափելու քաղաքականության և 1918թ. վերջին սկսված հայ-վրացական պատերազմի հետևանքով այդ ուղղությամբ հայ գաղթականների ներգաղթ գրեթե չեղավ: Մինևույն պատճառով Հյուսիսային Կովկասի հայ գաղթականները հայրենիք մեկնելու համար չկարողացան օգտվել նաև Ռազմավիրական Ճանապարհից²⁰¹:

1918թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Նովոռոսիյսկով Բաթում գնացած հայ գաղթականների մոտավոր թիվը Ռուսական կարմիր խաչի ընկերության հայկական կոմիտեի (այսուհետև՝ ՌԿԽԸՀԿ) և Հյուսիսային Կովկասում գաղթականների օգնության Ամերիկյան կոմիտեի լիազոր Հ. Թադևոսյանի հավաստմամբ 3.000 հոգուց ավելի չէր²⁰²: «Աշխատավորը» 1918թ. նոյեմբերի 9-ի համարում գրում է, որ վերջին օրերի ընթացքում Կուրանից Հայաստան է ուղարկվել 3.500 գաղթական²⁰³: Արխիվային մեկ այլ փաստաթղթի համաձայն 1918թ. դեկտեմբերին Նովոռոսիյսկից հեռացել է 300-ից ոչ պակաս գաղթական²⁰⁴: Հիմնվելով վերոհիշյալ տեղեկությունների վրա՝ կարելի է եզրահանգել, որ 1918թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Նովոռոսիյսկից Բաթում է մեկնել մոտ 3-4 հազար հայ գաղթական: Նովոռոսիյսկից բացի հայ գաղ-

²⁰¹ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 1918, նոյեմբերի 16, N 62:

²⁰² 1918թ. դեկտեմբերի վերջից Ռոստովում սկսեց գործել քաղաքի հայկական կոմիտեն, որը դեկտեմբերին անվանափոխվեց՝ դառնալով Ռուսական կարմիր խաչի ընկերության հայկական կոմիտե: Արխիվային նյութերում հանդիպում է նաև Ռուսական Կարմիր խաչի հայկական կոմիտե անվանումով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 115, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 334):

²⁰² Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 334:

²⁰³ Տե՛ս «Աշխատավոր», 1918, նոյեմբերի 9, N 178:

²⁰⁴ Տե՛ս ԴԱԿԿ, ֆ. P-11, օր. 2. ք. 100, լ. 4:

թականները Բաթում էին գնում Անապայից²⁰⁵. նրանց թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ չկան:

1918թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Նովոռոսիյսկից կամ Անապայից Բաթում (դեկտեմբերի 22-ին անցել է անգլիացիներին) գնացած հայ գերիների թվաքանակի վերաբերյալ նույնիսկ մոտավոր տեղեկությունները բացակայում են: Սակայն նկատի ունենալով՝ ա) նրանց մեծ կուտակումը Հյուսիսային Կովկասի Սև ծովի առափնյա շրջաններում, բ) նրանց հայրենիք բերելու և հայկական բանակը համալրելու Հայաստանի կառավարության շահագրգռվածությունը, կարծում ենք, որ վերոհիշյալ ժամանակահատվածում Հյուսիսային Կովկասից Բաթում է եկել առնվազն մի քանի հազար հայ ռազմագերի:

1919թ. սկզբից Հյուսիսային Կովկասից հայրենիք վերադառնալ ցանկացող գաղթականներին և ռազմագերիներին աջակցելու ու նրանց տեղափոխությունը կազմակերպված իրականացնելու նպատակով իրենց գործունեությունը աշխուժացրին Դոնի և Հյուսիսային Կովկասի հայկական կազմակերպությունները: 1919թ. հունվար-փետրվար ամիսներին Ռոստովում և Նոր Նախիջևանում Դոնի և Հյուսիսային Կովկասի գաղթականների հարցերով զբաղվող հայկական կազմակերպությունները գումարել են մի քանի ժողով, որոնցում քննարկման հիմնական խնդիրը եղել է հայրենիք վերադարձող գաղթականներին և ռազմագերիներին աջակցելը²⁰⁶:

²⁰⁵ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 86:

²⁰⁶ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 1919, փետրվարի 26, N 43, «Մշակ» 1919, փետրվարի 27, N 45 և մարտի 1, N 46 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73¹, թ. 102, Հայերի

Այս հավաքներից առավել կարևոր նշանակություն ուներ 1919թ. հունվարի 25-26-ին Ռուսաստանի Կարմիր խաչի ընկերության հայկական կոմիտեի (այսուհետև՝ ՌԿԽԸՀԿ) նախաձեռնությամբ Նոր Նախիջևանում հրավիրված Հյուսիսային Կովկասի հայկական գաղթականական կազմակերպությունների ժողովը: Ժողովի մասնակիցները որոշեցին ՌԿԽԸՀԿ-ն ճանաչել որպես Հյուսիսային Կովկասում գաղթականներին աջակցող կենտրոնական մարմին, որի շնորհիվ հնարավոր եղավ Հյուսիսային Կովկասի և Դոնի գաղթականների օգնության գործին ավելի համակարգված և կազմակերպված բնույթ տալ: Ժողովից հետո Հյուսիսային Կովկասի հայաշատ շրջաններում ձևավորվեցին ՌԿԽԸՀԿ-ի տեղական բաժանմունքներ²⁰⁷:

Բացի ՌԿԽԸՀԿ-ից Հյուսիսային Կովկասի և Դոնի հայությանը նյութապես աջակցում էին 1918թ. նոյեմբերից երկրամասում իր գործունեությունը ծավալած Դանիական կարմիր խաչը, Կովկասում գաղթականների օգնության Ամերիկյան կոմիտեն, Ռուստովի, Եկատերինոդարի և հայաշատ այլ քաղաքների հայոց ազգային խորհուրդները:

1919թ. առաջին ամիսներին գաղթականներին աջակցելու նպատակով Դանիական կարմիր խաչը ՌԿԽԸՀԿ-ին տրամադրեց 40.000 ռուբլի, Կովկասում գաղթականների օգնության Ամերիկյան կոմիտեն՝ 30.000 ռուբլի, Ռուստովի կոմիտեն՝ ամսական 150.000 ռուբլի և Եկատերինոդարի ազգային խորհուրդը՝ ամսական 50.000 ռուբլի: Հավաքված գումարը ծախսվում էր ՌԿԽԸՀԿ-ի

կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. փաստաթղթերի և կյուրերի ժողովածու, էջ 334:

²⁰⁷ Տե՛ս նույն տեղում:

և Հյուսիսային Կովկասում Ամերիկյան գաղթականների օգնության կոմիտեի լիազոր Յ. Թադևոսյանի վերահսկողությամբ: 1918թ. դեկտեմբերից մինչև 1919թ. մայիս ՌԿԽԸՀԿ-ն գաղթականներին աջակցելու նպատակով ծախսեց 670.000 ռուբլի: Այս կառույցը բացեց հիվանդանոցներ, ճաշարաններ, նյութապես աջակցեց տարբեր շրջանների գաղթականական կոմիտեներին²⁰⁸:

Այդ կազմակերպությունները իրենց ուսերին էին վերցրել ոչ միայն գաղթականների բժշկական և պարենային (հաց բաժանելու, տաք ուտելիք և կաթ տրամադրելու) օգնության գործը, այլ նաև, հարաբերությունների մեջ մտնելով երկրամասի հակախորհրդային իշխանությունների հետ, փորձում էին պաշտպանել նրանց իրավունքները: Այսպես, 1919թ. առաջին ամիսներին ՌԿԽԸՀԿ-ին հաջողվեց զորակոչից ազատել երկրամասում ապաստանած հայ գաղթականներին²⁰⁹:

ՌԿԽԸՀԿ-ն ջանքեր գործադրեց նաև գաղթականների հայրենադարձությունը կազմակերպելու ուղղությամբ: 1919թ. հունվարին դիմեց Կամավորական բանակի գերագույն հրամանատարին՝ ստանալով նրանից հայրենիք մեկնող գաղթականներից յուրաքանչյուրին 5 փութ ալյուր տրամադրելու թույլտվություն: Համանման խնդրանքով ՌԿԽԸՀԿ-ն դիմեց Կուրանի երկրամասի կառավարությանը²¹⁰, որի խորհուրդը 1919թ. հունվարի 19-ի որոշմամբ երկրամասից Անդրկովկաս մեկնող 14 տարեկանից բարձր գաղթականներին թույլատրեց իրենց հետ տանել 2 փ. ալյուր, 2 փ. հաց կամ պաքսիմատ և 2 փ. կարտոֆիլ, իսկ մինչև 14 տարեկան

²⁰⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 115:

²⁰⁹ Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 334:

²¹⁰ Տե՛ս նույն տեղում:

երեխաներին՝ 1 փ. այուր, 1 փ. հաց կամ պաքսիմատ, և 2 փ. կարտոֆիլ²¹¹: 1919թ. հունվարին Եկատերինոդարի հայկական համայնքի խնդրանքով Կուբանի երկրամասի իշխանությունը քաղաքից հայրենիք վերադարձող հայ գաղթականներին Եկատերինոդարից մինչև Նովոռոսիյսկ երկաթուղուց անվճար օգտվելու իրավունք տվեց²¹²: Նրանց այուրով ապահովելու համար Եկատերինոդարի հայոց ազգային խորհուրդը որոշեց Նովոռոսիյսկում այուրի պահեստ բացել: Դրա համար անհրաժեշտ միջոցներ տրամադրեցին Նովոռոսիյսկի հայկական կոմիտեն, Նոր Նախիջևանի հայկական համայնքը և Եկատերինոդարի հայոց ազգային խորհուրդը: Նովոռոսիյսկում Դանիական կարմիր խաչի հսկողության ներքո նախապատրաստվեց գաղթականների ընդունման համար անհրաժեշտ տարածք²¹³:

Ռուսաստանի հարավի հայությանը համախմբելու փորձեր էր ձեռնարկում 1917թ. վերջից Նոր Նախիջևանում գործող համայնական խորհուրդը, որի նախագահը Ռուբեն Բերբերյանն էր²¹⁴: Այս կառույցի նպատակն էր համախմբել Հարավային Ռուսաստանի հայաբնակ վայրերի հայությանը և կանխել նրանց ռուսացման գործընթացը²¹⁵: Ռ.Բերբերյանը, անդրադառնալով Նոր Նախիջևանի համայնական խորհրդի գործունեության աշխար-

²¹¹ Տե՛ս շԱՍ ֆ. 275, ց. 1, գ. 5, թ. 15, ց. 4, գ. 15, թ. 29, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 334:

²¹² Տե՛ս ԳԱԿԿ, ֆ. P-11, օռ. 2, ք. 100, և. 6:

²¹³ Տե՛ս նույն տեղում, օռ. 3, և. 284, և. 10-12:

²¹⁴ Տե՛ս Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), էջ 264:

²¹⁵ Տե՛ս Բերբերյան Ռ., Երկու դարերի շեմքին, «Հայրենիք» ամսագիր, Բուստոն, 1940, օգոստոս, N 10 (214), էջ 79:

հագրական սահմաններին, գրում է. «Ըստ ծրագրի «Համայնական խորհուրդը» շուտով դարձավ ոչ միայն տեղական հայ գաղութի, այլև ամբողջ Հարավային Ռուսաստանի ցրած հայ գաղթավայրերի մշակութային հարցերի կենտրոնացնողն ու արտահայտիչը, իսկ տեղական և կենտրոնական ռուս կառավարութեան առաջ այդ վայրերում ցրված հայերի նիւթական և հոգևոր շահերի պաշտպանը»²¹⁶: Չնայած Ռ. Բերբերյանի հավաստմանը՝ արխիվային նյութերում և գրականության մեջ Նոր Նախիջևանի համայնակւան խորհրդի՝ 1918-1920 թթ.-ին Հյուսիսային Կովկասում իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկությունները սակավ են: Դրանցում հիմնականում ներկայացված է այդ կազմակերպության՝ երկրամասի գաղթականներին աջակցելուն ուղղված բարեգործական գործունեությունը: Նոր Նախիջևանի համայնական խորհրդի Հյուսիսային Կովկասի հայության շահերը պաշտպանելուն ուղղված գործունեության վերաբերյալ տեղեկություններ չկան: Դոնի հայերի իրավունքները պաշտպանելու ուղղությամբ նրա գործունեության մասին արխիվային վավերագրերում պահպանվել է միայն մի հիշատակություն, որի համաձայն 1919թ. մայիսին Ռ. Բերբերյանը Հյուսիսային Կովկասի գաղթականական հաստատությունների ներկայացուցիչների ժողովին խնդրում է միջոցներ ձեռնարկել Ռոստովի հայերի գորակոչը դադարեցնելու համար²¹⁷: Արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզվեց նաև, որ 1919թ.-ից Դոնի հայության շահերի հիմ-

²¹⁶ Բերբերեան Ռ., Նոր-Նախիջևանի անցեալն ու ներկան, «ՎԷՄ», Փարիզ, 1934, հունվար-փետրվար, N 1, էջ 14:

²¹⁷ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 117:

նական պաշտպանը Դոնի շրջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Չալխուշյանն էր:

Հյուսիսային Կովկասի, Դոնի և ընդհանրապես Ռուսաստանի հարավի հայկական կազմակերպությունների՝ գաղթականների վերադարձը արագացնելու շահագրգռվածությունը պայմանավորված էր ոչ միայն հայրենակիցներին աջակցելու, այլ նաև օր առօր նրանց խնամելու հոգսից ազատվելու ցանկությամբ: Օրինակ, 1919թ. հունվարի 20-ին Նոր Նախիջևանում տեղի ունեցած հայկական կազմակերպությունների ժողովում որոշվեց հայրենիք վերադարձող գաղթականներին և ռազմագերիներին աջակցելուց բացի, վերադառնալ չցանկացող գաղթականներին պարտադրել ծառայելու Կամավորական կամ Դոնի բանակներում²¹⁸: 1919թ. մարտի 7-ի Գրիգոր Չամոյանի՝ (Չամոն)՝ Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին ուղղած զեկույցից տեղեկանում ենք համանման բովանդակությամբ մեկ այլ ժողովի անցկացման մասին, որին մասնակցել են Դոնի, Ղրիմի և Կուբանի հայկական կոմիտեների ներկայացուցիչները: Այդ ժողովի որոշմամբ գորակոչի ենթակա, սակայն Կամավորական բանակում ծառայել չցանկացող հայերը պետք է մեկնեն Հայաստան²¹⁹: Փաստորեն Հյուսիսային Կովկասում և ընդհանրապես Ռուսաստանի հարավում գործող հայկական կազմակերպությունների մի մասը հայրենիք վերադառնալ չցանկացող

²¹⁸ Տե՛ս «Մշակ», 1919, մարտի 1, N 46

Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ (տե՛ս մանրամասն Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.). էջ 36-37):

²¹⁹ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73 I, թ. 102:

գաղթականների խնամքի հոգսից ազատվելու համար ստիպում էր նրանց մտնել ոչ խորհրդային պետական կազմավորումների բանակներ: Այդ ժողովները անարդյունք չեղան: «Борьба»-ի 1919թ. մարտի 27-ի համարից տեղեկանում ենք, որ Ռոստովից Թիֆլիս ժամանած 70 հայ ուսանողներ գնում են Հայաստան՝ հայկական բանակում ծառայելու²²⁰:

1919թ. առաջին ամիսներին Հյուսիսային Կովկասի հայկական կազմակերպությունների ձեռնարկած միջոցների շնորհիվ հայ գաղթականների և ռազմագերիների հոսքը Նովոռոսիյսկ-Բաթում ուղղությամբ աշխուժացավ²²¹: Գաղթականներ տեղափոխող շոգենավերը Բաթում էին ուղևորվում ոչ միայն Նովոռոսիյսկից, այլ նաև Սև ծովի ափերին գտնվող այլ քաղաքներից, մասնավորապես՝ Օդեսայից²²²: Բաթումում ափ իջնելով՝ հազարավոր հայ գաղթականներ և ռազմագերիներ փորձում էին անցնել Հայաստան, սակայն Բաթումի անգլիական իշխանությունը, ի նկատի ունենալով Հայաստանում տիրող ծանր տնտեսական կացությունը, արգելում էր նրանց հետագա տեղաշարժը²²³: Մարտի վերջին կամ ապրիլի սկզբին անգլիական հրամանատարությունը արգելեց նաև հայ գաղթականների մուտքը Բաթում²²⁴:

Չնայած 1919թ. մարտ-ապրիլ ամիսներին Բաթումի անգլիական հրամանատարության հարուցած արգելքներին՝ գաղթականների և ռազմագերիների մի մասին, Բաթումի գլխավոր հյու-

²²⁰ Տե՛ս «Борьба», 1919, մարտի 27, N 69:

²²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 125, թ. 5:

²²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73 I, թ. 128, գ. 151, թ. 8, Պետրոպյան Գ., Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.), էջ 43, 56:

²²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 151, թ. 8, 11:

²²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 73 I, թ. 129:

պատոս Գ.Եղիգարյանի ջանքերի շնորհիվ, հաջողվեց անցնել Հայաստան: Գ. Եղիգարյանը ստիպված էր գաղթականներին և ռազմագերիներին Հայաստան ուղարկել՝ վճարելով նրանցից յուրաքանչյուրի փոխադրության համար բավական մեծ գումար²²⁵:

1918թ. հոկտեմբերի 30-ին Մուղղոսում Անտանտի երկրների հետ կնքած զինադադարի համաձայն թուրքական զորքերը սկսեցին ետ քաշվել մինչև 1914թ. ռուս-թուրքական սահմանը: «Երբ թուրքերը հեռացան,- գրում է Ա. Խատիսյանը,- ավելի ևս սաստկացավ սովի տագնապը, որովհետև անոնք իրենց հետ տարան մեր հացի պաշարները»²²⁶:

Վրաստանի և Ադրբեջանի կողմից տնտեսական շրջափակման հետևանքով Հայաստանը երկար ժամանակով զրկվեց արտաքին աշխարհից անհրաժեշտ ապրանքներ ներմուծելու հնարավորությունից: Հայաստանի հարևանները առաջին հերթին Վրաստանը, օգտվելով իրենց նպաստավոր աշխարհագրական դիրքից, փորձում էին սովի միջոցով պարտադրել Հայաստանին տարածքային զիջումների գնալ: 1918թ. վերջին և 1919թ. սկզբին Հայաստանի պարենային ծանր դրությունը աղետալի հետևանքներ ունեցավ հանրապետության տարածքում բնակվող տեղացի և գաղթական հայության համար: Վեց ամսվա ընթացքում սովից ու հիվանդություններից Հայաստանում մահացավ մոտ 180.000 մարդ²²⁷:

Հայաստանի Հանրապետության գոյության առաջին օրերից երկրում կուտակված գաղթականության խնդիրը պետական

²²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 151, թ. 11:

²²⁶ Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 98:

²²⁷ Տե՛ս Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, էջ 200:

քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն էր: Գաղթականական գործի կազմակերպումը մինչև 1918թ. նոյեմբերի սկիզբը ամբողջությամբ իրականացնում էր ներքին գործերի նախարարությունը²²⁸: 1918թ. նոյեմբերի 6-ին հիմնվեց Հանրային խնամատարության նախարարությունը, որին վերապահվեց փախստականների խնամատարության գործը²²⁹: Սակայն փախստականներին լքված հողերի վրա տեղափոխելու գործառույթը շարունակում էր իրականացնել Ներքին գործերի նախարարությունը²³⁰: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականության հարցի միակ արմատական լուծումը նրանց հայրենադարձության կազմակերպումն էր, որը հնարավոր էր իրագործել միայն թուրքական գորքերից ազատվող հայկական հողերում Հայաստանի Հանրապետության իշխանության հաստատմամբ:

Եթե թուրքական գորքերից պարտված Արևելյան Հայաստանի մի քանի շրջանում Հայաստանի Հանրապետության իշխանության հաստատումը և փախստականների ներգաղթը իրականացվեց միաժամանակ, ապա Շարուր-Նախիջևանում և Կար-

²²⁸ Տե՛ս Հայրապետյան Կ., Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918թ. հունիս - 1919թ. մայիս), Է.00.001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 79:

²²⁹ Տե՛ս Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ., (շարժը, կացությունը, թվակագրք), մասնագիտությունը «Հայոց պատմություն» Է.00.01, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 82:

²³⁰ Տե՛ս Հայրապետյան Կ., Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918թ. հունիս - 1919թ. մայիս), Է.00.001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 79-80 :

սում այդ գործընթացը հանդիպեց տեղի մահմեդական, հիմնականում թուրք-թաթարական ազգաբնակչության կազմակերպված դիմադրությանը: Մահմեդականների «հանրապետությունները» սկզբնական շրջանում վայելում էին Անդրկովկասում անգլիական հրամանատարության աջակցությունը: Սակայն 1919թ. մարտից Անդրկովկասում բրիտանական հրամանատարության դիրքորոշումը Կարսի և Շարուր-Նախիջևանի հարցում փոխվում է հոգուտ Հայաստանի²³¹:

1919թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետության գորքերը մտան Կարսի, Նախիջևանի և Շարուրի շրջանները և դրանք միացրին հանրապետությանը, որից հետո Շիրակի, Կարսի, Կադզվանի, Կողբի, Սարդարապատի, Սուրմալուի, Վեդի-Բասարի և այլ շրջանների գաղթականները վերադարձան իրենց նախկին բնակավայրերը²³²:

Արևելահայ գաղթականության վերաբնակեցման խնդիրը հիմնականում լուծելուց հետո հանրապետության կառավարության գլխավոր հոգսերից մեկը դարձավ արևմտահայ փախստականների վերադարձի հարցը:²³³ Քանի որ հայկական հարցի լուծումը ձգձգվում էր, ապա մնում էր գաղթականության տեղավոր-

²³¹ Տե՛ս մանրամասն Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 141-165, Ջոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտեմբեր-1920թ. ապրիլ), Երևան, 2002:

²³² Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 261-265:

²³³ Տե՛ս Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ., (շարժը, կացությունը, թվակազմը), մասնագիտությունը «Հայոց պատմություն» Է.00.01, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 86:

ման խնդիրը լուծել հանրապետության տարածքում: Այդ իսկ պատճառով նրանց մի հատվածը զբաղեցրեց, Հայաստանից տարբեր դրդապատճառներով արտագաղթած, գերազանցապես թուրք-թաթարական և մասամբ ռուս բնակչության գյուղերն ու բնակավայրերը²³⁴:

1919թ. մայիսին Բաթում հասան այնուրով բեռնված ամերիկյան առաջին նավերը: Անգլիացիների և ամերիկացիների աջակցությամբ սկսվեց այլուրի փոխադրումը Հայաստան²³⁵: Ամերիկյան պարենային օգնության շնորհիվ Հայաստանի տնտեսական կացությունը աստիճանաբար սկսեց կարգավորվել: 1919թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի քաղաքական և տնտեսական դրության բարելավումը հնարավորություն ընձեռեց Հայաստանի իշխանություններին զբաղվել Հյուսիսային Կովկասի գաղթականների օգնության և հայրենադարձության հարցերով²³⁶: Հայաստանի կառավարությունը նաև զգալի ջանքեր էր գործադրում Վրաստանից, Ադրբեջանից, Ուկրաինայից և այլ վայրերից հայ գաղթականների հայրենադարձության կազմակերպման համար²³⁷:

1919թ. մայիսից Հայաստանի կառավարության կարգադրությամբ Խնամատարության նախարարությունը սկսեց

²³⁴ Տե՛ս ԴԱՐՓ, փ. 1318, օր. 1, ձ. 418, յ. 21-25, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 147:

²³⁵ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 255:

²³⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 116:

²³⁷ Տե՛ս Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական հիմքերը, էջ 256, Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), մասնագիտությունը «Հայոց պատմություն» Է.00.01, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առենախոսություն, էջ 86:

զբաղվել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների հայրենադարձության հարցերով: Վրաստանում Հայաստանի Խնամատարության նախարարության ներկայացուցիչ Դավիթ Դավիթխանյանը 1919թ. մայիսի 13-ին Թիֆլիսից վերոհիշյալ կառույցի նախարարին հետագրով հայտնում էր. «Ամերիկացիների աջակցությամբ իմ կողմից կազմակերպվում է Հյուսիսային Կովկասից փախստականների տեղափոխումը: Լիազորներ եմ նշանակել Մալխասյանին և Արզուտինսկուն, որոնք այսօր մեկնում են»²³⁸: Հյուսիսային Կովկաս գործուղված իշխան Հ. Արղության-Երկայնաբագուկը և Վ. Մալխասյանը իրենց տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցների սղության պատճառով էական դեր չունեցան հայ գաղթականների հայրենադարձության կազմակերպման գործում²³⁹:

1919թ. մայիսից Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների հայրենադարձության կազմակերպման հարցով ակտիվորեն զբաղվեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթեյանը: Նա մինևույն ժամանակ Կուրանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչն էր:

Մայիսի 8-ին Եկատերինոդարում Կամավորական բանակի և Կուրանի կառավարության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ խառը ժողով, որին հրավիրված էին

²³⁸ Հայրապետյան Կ., Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918թ. հունիս – 1919թ. մայիս), Է.00.001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 113

²³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 116:

մասնակցելու Կուբանում Հայաստանի Հանրապետության և ՌԿԽՇՀԿ-ի ներկայացուցիչները: Ժողովին ներկա էին նաև հույների և լեհերի ներկայացուցիչները: Ժողովը որոշեց արագացնել գաղթականների վերադարձը, կազմել դրա համար հատուկ երթուղային գնացքներ և փոխադրանավեր: Որոշվեց ելակետ նշանակել Նովոռոսիյսկը և Վլադիկավկազը: Ժողովը վերահաստատեց դեռ 1919թ. հունվարին հայրենիք մեկնող գաղթականների համար նախատեսված պարենի չափաբաժինը²⁴⁰:

Կամավորական բանակը և կազակների կառավարությունները գաղթական էին համարում միայն նրանց, ովքեր երկրամաս էին եկել 1917թ. մարտի 1-ից հետո: Այս գաղթականներին Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարությունը ազատել էր զորակոչից: Ամենայն հավանականությամբ նրանց ներգաղթը խթանելու և Կամավորական բանակը նոր զինվորներով համալրելու համար Ա. Դենիկինը գաղթականների տարկետման ժամկետը սահմանափակեց մինչ 1919թ. սեպտեմբերի 25-ը, որից հետո երկրամասում մնացած գաղթականների արական սեռի ներկայացուցիչները պետք է զորակոչվեին բանակ²⁴¹:

Հյուսիսային Կովկասի հայության ներգաղթը կազմակերպելու և գաղթականների տեղափոխման համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելու նպատակով Հ. Սաղաթեյանի նախաձեռնությամբ 1919թ. մայիսին (15, 26, 27, 28) Եկատերինոդարում կայացավ Հյուսիսային Կովկասի գաղթականական հաստատությունների ներկայացուցիչների ժողով, որին մասնակցեցին ՌԿԽՇՀԿ-ի գլխավոր լիազոր Ք. Աճեմյանը և նույն կառույցի ներկայացուցիչ Հ. Թադևոսյանը, Արմավիրի գաղթականական կոմի-

²⁴⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 114:

²⁴¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 295, թ. 24, ց. 2, գ. 75, թ. 2:

տեի նախագահ Յ. Յարվեյանը, Ստավրոպոլի ներկայացուցիչ Այվազյանը, Կիսլովոդսկի՝ Մ.Շաթիրյանը, Տազանրոզի՝ Ագուլյանը, Տուապսեի՝ Մանասաճյանը, Պյատիգորսկի՝ Ն. Մկրտչյանը, Եկատերինոդարի ազգային խորհրդի կողմից՝ Տեր-Ներսես Աբրահամյանը և Պ. Մարգարյանը, Գորյաչի-Կյուլչից՝ Ուզունջյանը, Կրիմսկից՝ Տեր-Անտոնյանը, Եկատերինոդարի հայրենակցական միությունների կողմից՝ Թ. Ասոյանը, Հայաստանի պարենավորման մասնաժողովի կողմից լիազոր Մարգարյանը և անդամ Թայիրյանը, Մայկոպի ներկայացուցիչ Գասպարյանը, Հայաստանի Խնամատարության նախարարության Հյուսիսային Կովկասի Թերեքի շրջանի գաղթականների լիազոր Վ. Մալխասյանը և Սուրբ Խաչի ներկայացուցիչ Տեր-Հովհաննիսյանը²⁴²:

1919թ. մայիսի 15-ին բացվեց նախապատրաստական ժողովը: Նախագահող Հ. Սաղաթեյանը մասնակիցներին ուղղված ողջույնի խոսքում ասաց. «Հյուսիսային Կովկասի գաղթականության վերադարձը մի մեծ ազգային գործ է՝ լցնել Հայաստանը հայ քաղաքացիներով, վերադարձնել տարագիր հայերին իրենց վայրերը և զարկ տալ երկրի վերականգնմանը:

Ահա այն ծանր կենտրոնական խնդիրները, որ դրվում են մեր կառավարության առաջ: Վաղ ժամանակից եկած գաղթականությունը նույնպես ձգտում է երկիր, նրանք էլ անհրաժեշտ են իրենց կապիտալներով և ձեռնարկություններով...

Հայկական կառավարությունից ակնկալել օգնություն Հյուսիսային Կովկասի գաղթականների վերադարձի համար անկարելի է, որովհետև նա ունի մեծ հոգսեր և ծախսեր և թույլ գանձարան:

²⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 114, 116:

Ահա այս նպատակով հրավիրել եմ Ձեզ, որ գործենք միջոցներ ստեղծելու գաղթականության վերադարձի հետ կապված ծախքերի համար փոխադարձ համաձայնությամբ և համագործակցությամբ»²⁴³:

Մայիսի 26-ի նիստում ժողովի մասնակիցները հանդես եկան իրենց շրջաններում ապաստանած հայ գաղթականների թվաքանակի և դրության մասին զեկույցներով, Այդ տեղեկությունների հիման վրա կազմվել է N2 աղյուսակը²⁴⁴:

Աղյուսակ N2

	Թիվը	Ռուսահայտակ	Թուրքահայտակ	Պարսկահայտակ
Եկատերինոգար	16.890	6.633	8.795	1.462
Արմավիր	8.914	4.889	3.863	162
Գարյաչի Կյուչ	15-20	-	-	-
Մայկոպ	1.200	251	714	18
Ռոմանովսկ	2.318	180	1.538	-
Գեորգիենսկ	2.876	1.450	1.467	9
Պյատիգորսկ	4.700	3.034	1.436	230
Կիսլովոդսկ	1.468	121	1.347	-
Սուրբ Խաչ	1.932	915	957	-
Տուապսե	-	-	-	-
Տազանոոզ	140	64	56	20
Կրիմսկ	600	-	-	-
Շնդհանուր	41.038	17.537	20.173	1.892

²⁴³ Տե՛ս նույն տեղում, թ. 114:

²⁴⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 115-116:

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների թիվը 1919թ. մայիսին

Աղյուսակում բացակայում են Հյուսիսային Կովկասի մի շարք բնակավայրերում ապաստանած հայ գաղթականների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները: Բայցևայնպես աղյուսակի միջոցով կարելի է պատկերացում կազմել 1919թ. առաջին ամիսներին երկրամասի տարբեր շրջաններում ապաստանած գաղթականների թվաքանակի վերաբերյալ:

Մայիսի 26-ից 28-ը տեղի ունեցած նիստերի ընթացքում Հյուսիսային Կովկասի հայ գաղթականական կազմակերպությունների ներկայացուցիչները երկրամասի հայերի Հայաստան ներգաղթը կազմակերպելու համար մի շարք կարևոր որոշումներ ընդունեցին.

1) **Վերադարձող գաղթականների ցուցակագրության հարցը:** Ներգաղթը կազմակերպելու և գաղթականներին այլուրի կանոնավոր մատակարարումը իրականացնելու համար հարկավոր էր պարզել նրանց ճշգրիտ թվաքանակը: Չնայած ժողովի մասնակիցները ներկայացրել էին իրենց շրջաններում ապաստանած գաղթականների թվաքանակը և նրանց դրությունը, սակայն, նկատի ունենալով գաղթականների անընդմեջ տեղաշարժերը, ժողովը անհրաժեշտ համարեց հայրենակցական միությունների աջակցությամբ նոր ճշգրիտ վիճակագրություն կատարել:

2) **Ներգաղթողների հերթականությունը:** Առաջին հերթին որոշվեց փոխադրել անդրկովկասցիներին, այնուհետև արևմտահայ գաղթականներին, նաև նրանց, ովքեր սեփական միջոցներով կարող էին գնել մթերքի թույլատրված պաշարը:

3) **Ներգաղթի թղթաբանության պարզեցում:** Ներգաղթը հեշտացնելու համար որոշվեց միջոցներ ձեռնարկել գաղթականներին պաշտոնական ձևականություններից և տուրքերից ազատելու ուղղությամբ: Տեղական իշխանությունների կողմից գաղթականների և նրանց հետ տարվող մթերքի ստուգումը պետք է կատարվեր փոխադրության սկզբնական և վերջնական կետերում, այսինքն՝ երկաթուղի նստելիս և Նովոռոսիյսկից ու Վլադիկավկազից դուրս գալիս:

4) **Գաղթականների տեղափոխման ձևերը և միջոցները:** Գաղթականները պետք է տեղափոխվեին մեծ խմբերով: Յուրաքանչյուր վագոնում իրենց մթերքներով պետք է տեղավորվեին 30-35 հոգի: Հայաստան մեկնողներին հնարավորություն էր տրվում գաղթականական խմբեր կազմել իրենց ցանկությամբ: Գաղթականների տեղափոխությունը պետք է անվճար լիներ:

5) **Ներգաղթի կայանները և ճանապարհները:** Ժողովը որոշեց ներգաղթը իրականացնել երեք ուղղությամբ՝ Նովոռոսիյսկ-Բաթում, Վլադիկավկազ-Թիֆլիս և Տուապսե-Բաթում: Գաղթականների հիմնական մասը պետք է մեկներ Նովոռոսիյսկ և Վլադիկավկազ, իսկ աննշան մասը՝ Տուապսե (Տուապսեի և Մայկոպի շրջանի գաղթականները): Պետրովսկ-Բաքու երկաթգիծը պետք է օգտագործվեր այն ժամանակ, երբ կվերաբացվեր և Բաքու ուղևորվող գաղթականների անվտանգությունը երաշխավորված կլիներ:

Ռազմավիրական ճանապարհով պետք է ուղարկվեին այն գաղթականները, որոնք ունեին ձիեր, սայլեր և այլ փոխադրամիջոցներ: Քանի որ Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների զգալի մասը չունևոր էր, ապա Ռազմավիրական ճանապարհից

օգտվողների թիվը սահմանափակ էր լինելու: Փաստորեն ներգաղթի հիմնական ուղղությունը պետք է լիներ Նովոռոսիյսկ-Բաթումը:

6) Թիֆլիսում, Բաթումում և Բաքվում գաղթականների ընդունման հարցը: Անդրկովկասում գաղթականներին ընդունելու գործը կարգավորելու համար ժողովը որոշեց նախապես պայմանավորվել Բաթումում, Թիֆլիսում և Բաքվում վերոհիշյալ խնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ:

7) Որբերի տեղափոխության հարցը: Հյուսիսային Կովկասում ապաստանած հազարավոր որբերի տեղափոխությունը Հայաստան իրականանալու էր առանձին կարգով: Նախօրոք հարկավոր էր ստանալ Հայաստանի կառավարության թույլտվությունը: Որբերը պետք է տեղափոխվեին միայն այն դեպքում, երբ նրանց ընդունելության նախապատրաստությունը Հայաստանում վերջացած լիներ:

8) Գաղթականների տարերային շարժումը կանխելու համար միջոցներ: Գաղթականների տեղափոխության համար անհրաժեշտ փոխադրամիջոցների սղությունը, Նովոռոսիյսկում և Վլադիկավկազում նրանց տեղավորելու համար անհրաժեշտ բնակարանների բացակայությունը ու գաղթի ընթացքում համաճարակների բռնկման վտանգը ստիպեց ժողովի մասնակիցներին միջոցներ ձեռնարկել գաղթականների տարերային շարժումը կանխելու ուղղությամբ: Հյուսիսային Կովկասի հայերի հայրենադարձությունը բացառապես հայկական կազմակերպությունների ձեռքում կենտրոնացնելու նպատակով ժողովը որոշեց երկրամասի իշխանությունների համաձայնությամբ գաղթականներին անվճար տեղափոխելու և սահմանված չափով մթերք տանելու

իրավունքի վկայականները տրամադրել բացառապես տեղական կոմիտեների միջոցով:

9) **Ընդհանուր կազմակերպչական հարցեր:** Ժողովը որոշեց Հյուսիսային Կովկասի հայության ներգաղթի ղեկավարումը թողնել գոյություն ունեցող կենտրոնական մարմնին՝ ՌԿԽԸՀԿ-ին: Այս կառույցը առաջնորդվում էր Հայաստանի կառավարության հրահանգներով, որ ստանում էր Հ. Սաղաթեյանի միջոցով:

10) **Բժշկա-սանիտարական օգնություն:** Ներգաղթի ընթացքում համաճարակների բռնկման վտանգը նվազեցնելու նպատակով ժողովը որոշեց շարունակել բժշկական օգնությունը բոլոր այն վայրերում, որտեղ մեծ քանակությամբ գաղթականություն էր կուտակված, ինչպես, օրինակ, Եկատերինոդարում ու Արմավիրում: ՌԿԽԸՀԿ-ն պետք է ներգաղթի գլխավոր կետերում՝ Վլադիկավկազում և Նովոռոսիյսկում, կազմակերպեր գաղթականների բժշկա-սանիտարական օգնությունը:

11) **Ներգաղթողներին պարենով ապահովելու հարցը:** Նկատի ունենալով Հայաստանում պարենի պակասը՝ ժողովի մասնակիցները որոշեցին գաղթականներին ապահովել այլուրով և այլ մթերքներով: Այլուրը գաղթականներին տրամադրելու էին տեղական գաղթականական կոմիտեները: Չարաշահումներից խուսափելու համար յուրաքանչյուր գաղթականի վկայականի վրա պետք է նշվեր նրա հետ եղած պարենի չափը:

12) **Ֆինանսական խնդիրը:** Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների ներգաղթի համար պահանջվող ֆինանսական միջոցները ժողովը որոշեց հայթայթել երկրամասի հայկական

համայնքների և հարուստ հայերի նվիրատվությունների միջոցով²⁴⁵:

Շողովի այս որոշումները անմիջապես կյանքի կոչվեցին և սկսվեց Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների հոսքը Նովոռոսիյսկ, որտեղից նրանք տեղափոխվելու էին Բաթում:

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների հայրենադարձությունը կազմակերպելու համար հարկավոր էր ոչ միայն երկրամասի հայկական կազմակերպությունների, դիվանագիտական ներկայացուցչության և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների աջակցությունը, այլև՝ Անդրկովկասում անգլիական զինվորական հրամանատարության համաձայնությունը և աջակցությունը: Հարկավոր էր նաև Վրաստանի կառավարության՝ իր տարածքով գաղթականներին տեղափոխելու թույլտվությունը:

1919թ. առաջին ամիսներին Բաթումը լցվել էր Նովոռոսիյսկից, Օդեսայից և այլ տեղերից եկած գաղթականներով և վերածվել էր գաղթականական քաղաքի: Բաթումի Հայոց ազգային խորհուրդը միջոցների սղության պատճառով ի վիճակի չէր նրանց տեղավորել, կերակրել և հագցնել²⁴⁶: Բաթումում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գ.Եղիզարյանի ջանքերով 1919թ. ապրիլից քաղաքի գաղթականներին օգնության հասավ Հայաստանի Հանրապետության Խնամատարության նախարարությունը: Այդ կառույցը Վրաստանում իր ներկայացուցիչ Դ. Դավիթխանյանի (նրան էր հանձնված նաև Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության խնամատարության գործի ընդհա-

²⁴⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 116-118:

²⁴⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 151, թ. 111 ֆ. 205, ց. 1, գ. 528, թ. 46:

նուր հսկողությունը)²⁴⁷ միջոցով Բաթումում և մերձակայքում ներկայացուցիչ նշանակեց Լևոն Չիլինգարյանին՝ տրամադրելով նրան ընդամենը 60.000 ռ.²⁴⁸: Այդ գումարը բավարար չէր Բաթումի հազարավոր գաղթականների խնդիրը լուծելու համար: Միակ ելքը նրանց Հայաստան տեղափոխելն էր, ինչն առանց Անդրկովկասի անգլիական հրամանատարության թույլտվության անհնար էր իրականացնել: Մինչև 1919թ. մայիսը Հայաստանում տիրող ծանր պարենային կացության պատճառով Անդրկովկասում բրիտանական ուժերի հրամանատարությունը խոչընդոտում էր Բաթումում կուտակված գաղթականների և ռազմագերիների հայրենադարձությանը²⁴⁹: 1919թ. մայիսից, երբ ընդլայնվեցին Հայաստանի սահմանները և հասավ ամերիկյան ալյուրը, Անդրկովկասում բրիտանական ուժերի հրամանատարությունը փոխեց հայերի հայրենադարձության հարցի նկատմամբ իր դիրքորոշումը: Անգլիացիները ոչ միայն չխոչընդոտեցին, այլև աջակցեցին այդ գործընթացին:

1919թ. մայիսի 4-ին Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ-մայոր Վ. Թոմսոնը Հայաստանի կառավարության վարչապետին և Ամերիկյան նպաստի կոմիտեին ուղարկած նամակում գրում էր. «1. Ցանկալի է սկսել հայերի, հույների և այլ փախստականների վերադարձը Նովոռոսիյսկի շրջանից, որքան շուտ որ կարելի է, իրենց բնակավայրերը:

²⁴⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 169, թ. 24, ֆ. 275, ց. 5, գ. 139, թ. 5:

²⁴⁸ Տե՛ս «Ворьба», 1919, ապրիլի 13, N 83, ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 528, թ. 41:

²⁴⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 151, թ. 11:

2. Երկաթուղու գնացքները հարմար չեն այդ տեղափոխման համար, ամենքը օգնության ուտեստներով բեռնված լինելու պատճառով Հայաստանի և ուրիշ տեղերի համար:

3. Առաջարկվում է, որ վերադարձը տեղի ունենա ծովով մինչև Բաթում, այնտեղից Արդվիհի և Արդահանի ճանապարհով Ղարսի շրջանը ճանապարհի երթևեկությունը այժմ կանոնավոր լինելու պատճառով:

4. Հետևյալ կետերը անհրաժեշտ լինելու համար պետք է գործադրվեն հնարավորինս շուտ.

1. Բաթումի զինվորական կառավարիչը պիտի տրամադրի մի դաշտատեղ՝ երեք մղոն հեռավորությամբ Բաթումից, ուր փախստականները մի գիշեր միայն կը մնան և կը մեկնեն Ամերիկյան նպաստամատույց կոմիտեից ստանալով մի ամսվա պաշար.

2. Հայ կառավարությունը Բաթում կուղարկի այլուր և մի ներկայացուցիչ, որը հավաքելու և հսկելու է փախստականների և մթերքների վրա և տալու է այնքան անասուններ փոխադրության համար, որքան հարկավոր է:

3. Բաթումի զինվորական կառավարիչը պետք է ձեռք առնի, կարելի եղածին չափ պաշտպանության, Բաթումի և Արդահանի ճանապարհի համար, բայց նա չի կարող պատասխանատվություն և երաշխավորություն հանձն առնել երկրորդական ճանապարհների պաշտպանության մասին: Այդ տեղափոխության գործը զլխավորապես պիտի կատարվի զինյալ սայլերով: Հայ կառավարությունն իր վրա պիտի վերցնի Արդահանից մյուս կողմի պաշտպանության գործը:

4. Ոչ մի գորախումբ՝ անգլիական կամ հայկական, չի անցնելու թուրքական սահմանը. փախստականների վերադարձը Տաճկաստան լինելու է իրենց ռիսկով, և տեղափոխությունը տեղի ունենալու է Սարիղամիշ-Էրզրումի և Շահթախտ-Բայազետ երկաթուղիներով:

5. Այս կարգադրությունները շուտով պիտի իրագործվեն. որպեսզի փախստականները կարողանան իրենց ճամփորդությունը սկսել Բաթումից մայիսի 20-ին»²⁵⁰:

Փաստորեն գեներալ-մայոր Վ. Թոմսոնը Հայաստանի կառավարությանը և Ամերիկյան կոմիտեին էր ուղարկել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների Հայաստան ներգաղթի ծրագիրը: Այդ ծրագրի որոշ կետերի առնչությամբ իր ոչ անհիմն մտահոգությունը հայտնեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության Խնամատարության նախարարության ներկայացուցիչ Դ. Դավիթխանյանը: Նա 1919թ. մայիսի 22-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանին գրում է. «Բաթումի և Շրջանի անգլիական գեներալ-նահանգապետ Կուկ-Կոլլիսի հրամանի համաձայն Նովոռոսիյսկից Բաթում եկած բոլոր գաղթականները պիտի մնան Բաթումում միմիայն մի օր, որից հետո պիտի ճանապարհվեն դեպի հայրենիք՝ ոտով:

Այս հրամանը ծանր կացության մեջ է զգում առանց այն էլ հյուժված գաղթականությանը, որոնց մեծ մասը տաճկահայ և Ղարսի շրջանից են, եթե դրանք ուղարկվեն հայրենիք հիշյալ ձևով, ճանապարհին անպայման կենթարկվեն մահի և ոչնչացման: Վերջին հանգամանքը ստիպում է մեզ պահել Բաթումում

²⁵⁰ Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 53, թ. 27, ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 28:

Նովոռուսիյսկից եկած գաղթականությանը, որոնց թիվը հասնում է 10.000-ի (ընդգծումը մերն է – Ս.Մ.), մինչև որ հնարավորություն ստանանք տաճկահայերին տեղափոխել հայրենիք Տրապիզոնի վրայով, իսկ դարսեցիներին ճանապարհել երկաթուղագծով ուղղակի մինչև Կարս»²⁵¹: Նամակում Դ. Դավիթխանյանը խնդրում է Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին միջնորդել Թիֆլիսի անգլիական գլխավոր հրամանատարության առաջ, որ փոխվի Բաթումի նահանգապետի հրամանը²⁵²: Մայիսի 27-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանը կատարեց Դ. Դավիթխանյանի խնդրանքը և դիմեց Անդրկովկասում բրիտանական ուժերի գլխավոր շտաբին, որն էլ մայիսի 30-ին պատասխանեց. «Գեներալ-մայոր Կորին հասկանում է գեներալ Կուկ-Կոլլիսի հրամանի հետևանքով առաջացած բարդությունները, որը վերաբերվում է Բաթումով վերադարձող գաղթականներին:

Սակայն այդ հրահանգները պետք է արվեն, քանի որ դրանք միայն Բաթումի և գաղթականների օգտին են:

Սննդամթերքի վիճակը և գերբեռնվածությունը, որը առկա է Բաթումում, պահանջում է, որ նոր եկած գաղթականները շարունակեն իրենց ճանապարհը որքան կարելի է շուտ:

Շոսեային ճանապարհով գաղթականներին գնալու հրահանգը կապված էր այն բանի հետ, որ երկաթուղային վագոնները քիչ են, և դրանք զբաղված են արագ սննդամթերքի Հայաստան տեղափոխմամբ:

²⁵¹ Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 139, թ. 5:

²⁵² Տե՛ս նույն տեղում:

Մենք միշտ հնարավորության դեպքում նախօրոք տեղեկացնում ենք Բաթում եկող գաղթականների մասին և հույս ունենք, որ դուք կանեք բոլոր անհրաժեշտ միջոցները նրանց Բաթում ընդունելու համար, որ խուսափվի տեղափոխման ժամանակ առկա դժվարություններից»²⁵³:

Փաստորեն, անգլիական հրամանատարությունը 1919թ. մայիսի 20-ից թույլատրեց Նովոռոսիյսկում կուտակվող գաղթականների տեղափոխությունը Բաթում: Նույն օրը Նովոռոսիյսկի ՌԿԽՇԿ-ի ներկայացուցիչ Ս. Խաչատրյանի (Խաչատուրովի) ջանքերով Բաթում ուղարկվեց գաղթականների առաջին խումբը²⁵⁴: Գ. Պետրոսյանը, անդրադառնալով 1919թ. մայիս-հունիս ամիսներին Հյուսիսային Կովկասից Բաթում եկած գաղթականների թվին, նշում է 50 հազարի մասին²⁵⁵: Նրանց մեծ մասը արևելահայ գաղթականներն էին:

Բաթումից Հայաստան անցնող գաղթականներին և ռազմագերիներին Բաթումի վրացական երկաթուղային վարչությունը հրաժարվեց անվճար տեղափոխել: 1919թ. մայիսին խնդիրը կարգավորելու նպատակով Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանը Բաթումում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գ.Եռլիզարյանի խնդրանքով դիմեց Վրաստանի կառավարությանը²⁵⁶: 1919թ. մայիսի 22-ին Վրաստանի կառավարությունը տե-

²⁵³ Նույն տեղում, թ. 12, 51:

²⁵⁴ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 151, թ. 19, ֆ. 275, ց. 5, գ. 139, թ. 16:

²⁵⁵ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, էջ 196:

²⁵⁶ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 14, թ. 158, գ. 139, թ. 23:

ղեկացրեց Լ.Եվանգուլյանին, որ Բաթումից գաղթականներին հայրենիք տեղափոխելու համար տրամադրում է 4-րդ կարգի սակագնով, փակ վագոններով մի գնացք՝ պայմանով, որ գաղթականների յուրաքանչյուր ուղարկման համար անհրաժեշտ գումարը նախօրոք մուծվի: Վրացական իշխանությունները պահանջեցին, որ Բաթումում Հայաստանի Հանրապետության հյուպատոսը նախապես կայարան ուղարկի գաղթականների և ռազմագերիների ցուցակները՝ նշելով նրանց թվաքանակը, նկատի ունենալով, որ յուրաքանչյուր վագոնում պետք է լինի 40 հոգի²⁵⁷: Վրացական իշխանությունների տրամադրած գնացքը և մի քանի վագոնները բավարար չէին Բաթումում գտնվող և ամեն օր ժամանող հազարավոր գաղթականներին ու ռազմագերիներին Հայաստան տեղափոխելու համար: Քաղաքում մնացած գաղթականների մի մասը ստիպված էր օգտվել վճարովի փոխադրամիջոցներից, որի տոմսը գնելու համար վաճառում էր իր ունեցվածքը²⁵⁸: Գաղթականների մյուս մասը ՌԿԽԸՀԿ-ի տրամադրած մի քանի փութալյուրից բացի ոչինչ չունեն և մնաց Բաթումում՝ սպասելով վրաց իշխանությունների տրամադրած գնացքին:

Հազարավոր գաղթականների կուտակումը Բաթումում առաջացրեց անզլիական իշխանության դժգոհությունը: 1919թ. հուլիսի վերջին Բաթումի նահանգապետը արգելեց նոր գաղթականների մուտքը քաղաք և պահանջեց Հայաստանի իշխանություններից տեղափոխել Բաթումում մնացած 7 հազար գաղթա-

²⁵⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 139, թ. 38:

²⁵⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 149:

կաններին. միայն դրանից հետո Բաթումի նահանգապետը կթույլատրեր նոր գաղթականներին մտնել քաղաք²⁵⁹:

Չորս հազար գաղթականով բեռնված վերջին նավը Նովոռոսիյսկից Բաթում ժամանեց օգոստոսի սկզբին: Անգլիական իշխանությունները գաղթականներին արգելեցին ափ իջնել և ուղարկեցին ետ՝ Նովոռոսիյսկ, զգուշացնելով, որ Բաթումը այլևս գաղթականներ չի ընդունելու²⁶⁰:

Ներգաղթը դադարեցնելու անգլիացիների այս քայլը խառնաշփոթ առաջացրեց Հյուսիսային Կովկասում: Հայրենիք մեկնելու ակնկալիքով Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից Նովոռոսիյսկ տեղափոխված գաղթականները հայտնվեցին ծանր դրության մեջ: Նրանց ներգաղթը հայրենիք վերսկսելու խնդրանքով 1919թ. օգոստոսի 3-ին ՌԿԽՇԿ-ի լիազոր Յ. Թադևոսյանը դիմեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության Խնամատարության նախարարության ներկայացուցիչ Դ. Դավիթխանյանին, որն էլ, իր հերթին, Հայաստանի կառավարությանը²⁶¹: 1919թ. հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի տարբեր շրջաններում սկսված մահմեդականների ապստամբությունների հետևանքով երկրի կառավարությունը չկարողացավ կազմակերպել Բաթումի հայերի տեղափոխությունը²⁶²: Ավելին, Հայաստանի կառավարությունը հրահանգեց Հյուսիսային Կովկասի հայկական կազմակերպություններին առժամանակ դադարեցնել հայերի հայրենադարձությունը:

²⁵⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 628, թ. 6:

²⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 151, թ. 28:

²⁶¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 139, թ. 80:

²⁶² Տե՛ս մանրամասն Զոհրաբյան է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտեմբեր-1920թ. ապրիլ):

1919թ. հունվար-հունիս ամիսներին հայ գաղթականների թվաքանակը Բաթումում առնվազն երկու անգամ գերազանցել էր 1919թ. հուլիսի 7.000 ցուցանիշը: Սակայն անգլիական հրամանատարությունը հայ գաղթականների մուտքը քաղաք արգելեց հենց հուլիսի վերջին, այսինքն այն ժամանակ, երբ Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարությունը պատրաստվում էր երկրամասից տեղափոխել անգլիական զորքերը, որոնց մեծ մասը հեռանալու էր Բաթումով²⁶³: Պարզ էր, որ Հյուսիսային Կովկասից գաղթականներով բեռնված Բաթում ժամանող նավերը և քաղաքում գտնվող հազարավոր գաղթականները կարող էին խոչընդոտել անգլիական զորքերի տարհանմանը:

Անգլիական իշխանությունների կողմից հայերի մուտքը Բաթում արգելելու պատճառներից էր նաև Անդրկովկասում Կամավորական բանակի վարած քաղաքականությունը: 1919թ հունիսի 12-ին Բաթումում սկսեց գործել Կամավորական բանակի հավաքագրման գործակալությունը, որը ղեկավարում էր գեներալ Նատիևը (շտաբի պետն էր գեղապետ Դիտենկոն): Այդ կազմակերպության նպատակը Անդրկովկասյան կորպուսի գաղտնի ձևավորումն էր, որի միջոցով Կամավորական բանակը կգրավեր Բաթումը, իսկ հետագայում նաև՝ Վրաստանը և ողջ Անդրկովկասը²⁶⁴: Այդ գործակալության կողմից հավաքագրվածների մեծ մասը հայեր էին: Այս հանգամանքը առաջացրեց Վրաստանի

²⁶³ Տե՛ս մանրամասն Ованнисян Р., *Международные отношения Республики Армения 1918-1920 гг.*, Ереван, 2007, с. 163-198:

²⁶⁴ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 196:

իշխանությունների դժգոհությունը²⁶⁵: Անդրկովկասյան կորպուսի ստեղծումը և Բաթումում Կամավորական բանակի հաստատվելը հակասում էր անգլիացիների շահերին: Անգլիական զինվորական առաքելությունն արգելեց Բաթումի Կամավորական բանակի բաժանմունքի գործունեությունը, իսկ հունիսի 15-ին զեներալ Նատիևը և նրա համհարզը սպանվեցին վրացիների կողմից²⁶⁶:

1919թ. ընթացքում Հյուսիսային Կովկասից Ռազմավիրական ճանապարհով հայ գաղթականների ներգաղթը Հայաստան Վրաստանի իշխանությունների հարուցած արգելքների պատճառով հնարավոր չեղավ կազմակերպել: Դադատանում մահմեդականների պարբերաբար բռնկվող ապստամբությունները և Ադրբեջանի անբարյացակամ վերաբերմունքը խանգարում էին Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին Հայաստան անցնելու համար օգտվել երկրամասը Անդրկովկասի հետ կապող երկաթուղուց²⁶⁷:

1919թ. մայիս-հուլիս ամիսներին Նովոռոսիյսկով Անդրկովկաս մեկնեցին հիմնականում արևելահայ և արևմտահայ գաղթականները: Նրանցից բացի իրենց տներն էին ցանկանում վերադառնալ Բաքվի նահանգի հայերը: 1918թ. նոյեմբերի 17-ին անգլիական զորքերը՝ զեներալ Թոմսոնի հրամանատարությամբ, մտան Բաքու²⁶⁸: Քաղաքի հայ գործիչների խնդրանքով բրիտանական հրամանատարությունը դեկտեմբերի սկզբին թույլատրեց

²⁶⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁶⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 197:

²⁶⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 544, թ. 3:

²⁶⁸ Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 54:

իրենց տները վերադառնալ միայն Բաքու քաղաքի հայությանը²⁶⁹: Հյուսիսային Կովկասում ապաստանած Բաքվի հայ գաղթականների թվաքանակը ճշտելու և դրությանը մոտիկից ծանոթանալու նպատակով Բաքվի Հայոց ազգային խորհուրդը 1919թ. մարտի 26-ին Աշոտ Նասիբովին երեք շաբաթով գործուղեց Թերեք և Կուբան²⁷⁰:

Հյուսիսային Կովկասի արևելյան շրջաններում ապաստանած Բաքվի հազարավոր գաղթականների դրությունը ծանր էր: Այդ մասին է վկայում Ղզլարի գաղթականական կոմիտեից Բաքվի գաղթականական կոմիտեին 1919թ. մարտի 12-ին ուղղված նամակը, որտեղ ասված էր. «Ղզլարում ներկայումս կան 3.000-ից ավելի գաղթականներ՝ մերկ, դժվար կարոտության մեջ, իսկ քաղաքը այնպիսի քայքայման մեջ է, որ ոչ մի կերպ չի կարողանում օգնել գործին, բավական է ասել, որ հաց չկա բառիս իսկական իմաստով, չկա վառելիք և այլ կարևոր նյութեր: Չքավորությունը, սննդի պակասությունը գաղթականներից շատերին գերեզման է տարել, օրինակ, յոթը մարդուց բաղկացած ընտանիքից մնացել է մի հոգի: Կան բազմաթիվ որբեր»²⁷¹: Տեղի կառավարությունը, անկարող լինելով հոգալ գաղթականների կարիքները, մտադրվել էր նրանց կրկին Բաքու տեղափոխելու հարցի ձգձգման պարագայում, տեղափոխել Կուբան: Ստարոտերեչևայա-Ղզլար գծից գաղթականությանը Բաքու տեղափոխելու հարցը կարգավորելու նպատակով 1919թ. ապրիլի 7-ին Բաքվի

²⁶⁹ Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 154, 155:

²⁷⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 271:

²⁷¹ Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին..., էջ 422:

Հայոց ազգային խորհուրդը դիմեց անգլիական շտաբին՝ խնդրելով գաղթականներին Բաքու տեղափոխելու համար նավ ուղարկել Ստարոտերեչնայա: Մակայն նավեր չլինելու պատճառաբանությամբ տեղափոխման գործը ձգձգվեց²⁷²:

1919թ. ապրիլի վերջին Ղզլար այցելած Մայիլյան եղբայրների գլխավորած գիտա-տնտեսական արշավախմբի անդամ Գ. Մեղնիկյանցը, որը ստանձնել էր քաղաքի գաղթականներին աջակցելու գործը, Բաքվի Հայոց ազգային խորհրդին հղած նամակում խնդրում էր Ղզլարում, Ստարո և Նովո Տերեչնիներում հավաքված 700 գաղթականներին և 40 հոգանոց պատվիրակությանը Բաքու տեղափոխելու համար նավ ուղարկել²⁷³:

1919թ. օգոստոսի 7-ին Բաքվի Հայոց ազգային խորհուրդը հայ գաղթականների դրությունը ուսումնասիրելու և վերադարձի գործը կազմակերպելու նպատակով Թերեք, Կուբան, Դոն և Պովոլժիե գործուղեց Գ. Տեր-Միքայելյանին²⁷⁴:

Բաքվի Հայոց ազգային խորհրդի կողմից Հյուսիսային Կովկաս գործուղված ներկայացուցիչների գործունեության մանրամասները հայտնի չեն: Հայտնի չէ նաև Հյուսիսային Կովկասից Բաքու վերադարձած հայերի թիվը: Մակայն նկատի ունենալով 1919թ. օգոստոսին անգլիական զորքերի Ադրբեջանից հեռանալը և այդ պետության հակահայկական քաղաքականությունը՝ կարելի է ենթադրել, որ Հյուսիսային Կովկասում ապաստանած

²⁷² Տե՛ս նույն տեղում:

²⁷³ Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 302-303 :

²⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 373:

Բաքվի հայ գաղթականների միայն աննշան մասը կարողացավ վերադառնալ քաղաք²⁷⁵:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտից հետո Հյուսիսային Կովկասի հայ գաղթականները և ռազմագերիները Հայաստան գնալու համար օգտվեցին Նովոռոսիյսկ-Բաթում ուղղությունից: Արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզվեց, որ 1918-1919թթ. ընթացքում այդ ուղղությամբ Հյուսիսային Կովկասից Անդրկովկաս են եկել առնվազն 53-54 հազար հայ գաղթական և ռազմագերի: Եթե այս թիվը հանենք 1918թ. նոյեմբերին Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականների թվից, կստացվի, որ 1919թ. օգոստոսին երկրամասում մնացած գաղթականների թիվը 58-60 հազար էր:

Փաստորեն, Առաջին աշխարհամարտի տարիներին Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականների մոտ կեսը մնաց երկրամասում: Ռուսաստանի զինված ուժերի գերագույն հրամանատարի որոշմամբ այս գաղթականների արական սեռի ներկայացուցիչները սեպտեմբերի 25-ից զորակոչվելու էին Կամավոքական բանակ և կազակական զորքեր: Սակայն 1919թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հ. Սադաթեյանին հաջողվեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարությունից ստանալ այդ գաղթականներին զորակոչից ազատելու թույլտվություն²⁷⁶: Հ. Սադաթեյանը ջանքեր գործադրեց նաև Ռուսաստանի հարավի զինված ուժերի զորքերում ծառայող հայերին Հայաստան փոխադրելու ուղղությամբ:

²⁷⁵ Տե՛ս Ованнисян Р., *Международные отношения Республики Армения 1918-1920гг.*, с.186, ՀԱԱ ֆ. 275 ց. 4, գ. 15, թ. 12-14, 23:

²⁷⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 385, թ. 8:

1919թ. օգոստոսի 4-ին Տազանրոզից Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարության շտաբի հերթապահ գեներալ-մայոր Ս. Տրուխաչովը Եկատերինոդարում՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին հողորդում է. «Գերագույն հրամանատարը թույլատրել է Անդրկովկասում ծնված հայերին, որոնք վերադարձել էին ավստրո-գերմանական գերությունից և միջոցների սղության պատճառով մտել են Կամավորական բանակ, նաև Անդրկովկասում ծնված այն հայերին, որոնք զորակոչվել են Կամավորական բանակի տարածքից, ուղարկել հայրենիք՝ Անդրկովկաս»²⁷⁷: Հրամանի համաձայն հայրենիք մեկնող հայերը պետք է ուղարկվեին Եկատերինոդարի ռազմական հրամանատարի մոտ, որն էլ հայ ռազմիկներին հանձնելու էր Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչությանը, որը կազմակերպելու էր հայ ռազմիկների տեղափոխությունը Հայաստան²⁷⁸: Հայ ռազմիկներին հայրենիք ուղարկելու ծախսերը հոգալու համար Հ. Սաղաթեյանը շրջում է Հյուսիսային Կովկասի հայաշատ համայնքները և ունևոր հայերից գումար հավաքում²⁷⁹: Սակայն 1919թ. հոկտեմբերին Ռուսաստանի հարավի զինված ուժերի ռազմական անհաջողությունները հնարավորություն չեն տալիս Հ. Սաղաթեյանին կազմակերպել Կամավորական բանակում և կազակների զորքերում ծառայող հազարավոր հայ զինվորների տեղափոխությունը Հայաստան:

²⁷⁷ Նույն տեղում, ֆ. 275, ց. 1, գ. 2, թ 12, գ. 5, թ. 46:

²⁷⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 46:

²⁷⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 385, թ. 6:

1919թ. կեսերին Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Շ. Սաղաթեյանից բացի երկրամասում գործում էին Հայաստանի Հանրապետության տարբեր նախարարությունները և կառույցները ներկայացնող գործիչներ, որոնց մի մասը, առաջնորդվելով գումար գրպանելու ցանկությամբ և անձնական շահով, վնասում էր թե՛ Հյուսիսային Կովկասի հայությանը, թե՛ Հայաստանի Հանրապետության հեղինակությանը: Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը անտեղյակ էր կամ կողմնակի աղբյուրներից էր իմանում երկրամասի հայաշատ համայնքներում գործող ներկայացուցիչների մասին²⁸⁰: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով Հայաստանի կառավարության կարգադրությամբ 1919թ. հունիսի կեսերին Հյուսիսային Կովկաս գործուղվեց Հայաստանի խորհրդարանի անդամ Մարտին Հարությունյանը²⁸¹: Իր գործուղման նպատակների մասին Մ. Հարությունյանը գրում է. «Մինիստրութեան առաքելութեամբ այս տարւայ յունիսի 16-ին ես ճանապարհվեցի Հիւսիսային Կովկաս, ի միջի այլոց, նաև վերաքնութեան ենթարկելու ՀՀ միսսիաներն ու հիւպատոսարանները, վերանշանակելու լիազորութիւնները այն անձանց, որոնք իրենց անվանում էին Հայաստանի ներկայացուցիչ, միաժամանակ լիսգորւած՝ այդ անձանց վերահաստատելու իրենց պաշտոնում կամ պաշտոնագուրկ անելու:

²⁸⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 29:

²⁸¹ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1913-1920 թթ.), էջ 26:

Այս ուղևորութեան ընթացքում ես այցելեցի Վլադիկավկազ, Եկատիրինոդար, Ռոստով, Կիալավոդսկ, Պետտիգորսկ, Նովոռուսիյսկ և Բաթում քաղաքները. ծանօթացայ մեր ներկայացուցիչների և նրանց գործունեութեան հետ...»²⁸²:

1919թ. հուլիսի 17-ին (30) Մ. Հարությունյանն իր գործունեության արդյունքների մասին Հ. Սաղաթելյանին գրում է. «Ծանոթանալով գործին ես եկա այն եզրակացության, որ այլևայլ աննպաստ պայմանների շնորհիվ կան ներկայացուցիչներ կարգված ոչ թե ուղղակի ՀՀ ԱԳ մինիստրի կողմից, այլ ուրիշ մարմինների, ինչպես օրինակ նախկին Ազգային խորհրդի, Կիևի կոմիսարիատի և այլն. և որ այդ ներկայացուցիչները ոչ միշտ համապատասխան են այդպիսի պաշտոնի: Ուստի մի հատուկ կարգադրությամբ, հուլիսի 17 (30) 1919թ. համաձայն կառավարության տրված իրավունքի 16 յունիսի 1919թ. N 2214 ես վերացնում եմ բոլոր այդ ներկայացուցիչների լիազորությունը: Միայն Խարկովի հյուսպատոսը բժ. Ռուբեն Յուզբաշյանը իմ կողմից վերհաստատվեց իր պաշտոնում:

Սակայն նկատի ունենալով, 1) որ Կամավորական բանակը հետզհետե առաջ է շարժվում և շարունակ իր սահմանների մեջ է առնում նորանոր շրջաններ, ուր բավականաչափ հայ ժողովուրդ կա, թե իբրև հաստատուն բնակիչ և թե իբրև փախստական 2) որ այդ վայրերի հայ ժողովուրդը հենց այժմ և կարիք ունի հարաբերության մեջ մտնելու Հայաստանի ներկայացուցչի հետ, թե գինվորագրության, թե վերադարձի և թե այլ հանգամանքներով և 3) նկատի ունենալով հարաբերության դժվարությունը այդ վայրերի և Հայաստանի միջև – ես կարծում եմ, որ Դուք, իբրև Կամա-

²⁸² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 333, թ. 2:

վորական բանակին կից Հայաստանի ներկայացուցիչ, պետք է Ձեր կողմից կարևոր կետերում կարգեք ժամանակավոր լիազորներ, մինչև որ ԱԳ մինիստրի կողմից մի ընդհանուր կարգադրություն լինի նոր հյուպատոսներ նշանակելու մասին:

Ես իմ հերթին այդ մասին կզեկուցեմ կառավարությանը Երևանում»²⁸³: Փաստորեն վերոհիշյալ նամակով Մ. Հարությունյանը Հ. Սաղաթեյանին ժամանակավոր հյուպատոսներ նշանակելու իրավունք տվեց: 1919-1920 թթ. ընթացքում Հ. Սաղաթեյանը այդ իրավունքից բազմիցս օգտվեց, ինչի շնորհիվ նրա կողմից նշանակված ժամանակավոր հյուպատոսները զգալիորեն աջակցեցին երկրամասի հնաբնակ և գաղթական հայությանը: Օրինակ, 1919թ. հուլիսին Հ. Սաղաթեյանը Սոչիում լիազոր նշանակեց Արամ Հակոբյանին²⁸⁴, որի ջանքերի շնորհիվ 1919թ. երկրորդ կեսից Սոչիի Հայոց ազգային խորհուրդը և երկրամասի հայությունը դադարեց մասնակցել Կամավորական բանակի և ապստամբների ընդհարումներին²⁸⁵:

Հ. Սաղաթեյանից բացի Հյուսիսային Կովկասում նոր ներկայացուցիչներ նշանակեց Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը: 1919թ. հունիսի 16-ին Ալեքսանդր Ասրիբեկյանը նշանակվեց Կիսլովոդսկի հյուպատոս, իսկ օգոստոսի 12-ին՝ Թերեքի կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ²⁸⁶: Վլադիկավկազի հայության խնդրանքով Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի

²⁸³ Նույն տեղում, թ. 8-9, ֆ. 275, ց. 2, գ. 1, թ. 14:

²⁸⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 118:

²⁸⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 1:

²⁸⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 342, թ. 7, 14:

նախարարությունը 1919թ. հոկտեմբերի 15-ին Հ. Սառիկյանին նշանակեց Վլադիկավկազի հյուպատոս²⁸⁷:

Այսպիսով, 1918թ. նոյեմբեր-1919թ. ապրիլ ամիսներին Հայաստանի ներքին և արտաքին ծանր դրության, Վրաստանի և Ադրբեջանի հակահայկական քաղաքականության հետևանքով հայրենիք վերադարձավ Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականների աննշան մասը:

1919թ. մայիսի 20-ից անգլիական հրամանատարության թույլտվությամբ և աջակցությամբ Հյուսիսային Կովկասի հայկական կազմակերպությունները և Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչությունը՝ Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմակերպությունների աջակցությամբ, կազմակերպեցին երկրամասում ապաստանած մոտ 50 հազար հայերի հայրենադարձությունը:

1919թ. հուլիսի վերջին Հայաստանում առաջացած տնտեսական և ներքաղաքական ծանր դրության հետևանքով Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարությունը Նովոռոսիյսկ-Բաթում ողողությամբ հայերի ներգաղթը դադարեցրեց:

Հյուսիսային Կովկասում մնացած հայ գաղթականների գորակոչի խնդիրը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչության ջանքերով չեզոքացվեց:

1919թ. ամռանը Հայաստանի կառավարությունը, Մարտին Հարությունյանին Հյուսիսային Կովկաս գործուղելով, կարգա-

²⁸⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 372, թ. 4:

վորեց երկրամասում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների գործունեությունը:

2.3 Երկրամասում բնակվող և ապաստանած հայության գորակոչի խնդիրը ու հայրենադարձությունը (1920թ. հունվար-մարտ)

1919թ. աշնանը Օրյոլի շրջակայքում տեղի ունեցած մարտերում խորհրդային զորքերի հաջողությունները հարկադրեցին Ռուսաստանի հարավի զինված ուժերին ոչ միայն հրաժարվել Մոսկվան գրավելու մտադրությունից, այլև սկսել նահանջը: 1920թ. հունվար-փետրվար ամիսներին հակամարտող կողմերի սահմանաբաժան զիծը Դոն և Մանիչ գետերն էին²⁸⁸:

Խորհրդային զորքերի առաջխաղացումը, Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններում բռնկված ապստամբությունները և կազակների կառավարությունների դժգոհությունը հարկադրեցին Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարությանը համատարած գորակոչ սկսել²⁸⁹: Այն տարածվեց նաև Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների վրա²⁹⁰: 1918-1919 թթ. ընթացքում մի քանի հազար հայեր գորակոչվել և ծառայում էին Ռուսաստանի հարավի զինված ուժերում: Նոր գորակոչը նրանց թիվը մի քանի հազարով կավելացներ: Ռուսաստանի հարավի

²⁸⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 2 գ. 487, թ. 15, գ. 594, թ. 7, Слободин В., Белое движение в годы гражданской войны в России (1917–1922 гг.), Москва, 1996, с. 53:

²⁸⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 182, գ. 295, թ. 5-6, գ. 465, թ. 2, գ. 487, թ. 12:

²⁹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ. 5:

զինված ուժերում հազարավոր հայ ռազմիկների առկայությունը խորհրդային իշխանության մոտ այն կարծիքը կստեղծեր, որ երկրամասի հայերը, ինչպես նաև Հայաստանի կառավարությունը հանդես են գալիս խորհրդային իշխանության դեմ: Ակնհայտ է, որ Հյուսիսային Կովկասը գրավելուց հետո Խորհրդային Ռուսաստանը հալածելու և դաժանորեն պատժելու Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների կողմնակիցներին և նրանց գորքերում ծառայող զինվորականությանը, իսկ Մոսկվայի հայ բոլշևիկները առիթը չէին կորցնի Հայաստանի կառավարությանը վարկաբեկելու համար²⁹¹:

Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հ. Սաղաթեյանը հասկանալով գորակոչի հետևանքով երկրամասի հայությանը և Հայաստանի կառավարության հեղինակությանը սպառնացող վտանգը՝ փորձեց այն չեզոքացնել: Նա, 1920թ. հունվարի սկզբին դիմեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գերագույն հրամանատարին՝ խնդրելով դադարեցնել երկրամասի հայ զաղթականների գորակոչը: Երկու շաբաթ տևած բանակցություններից հետո Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարությունը ընդառաջեց²⁹²: Հ Սաղաթեյանի և Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարության պայմավորվածությամբ Անդրկովկասում ծնված և չգորակոչված հայերը Հայաստան գնալու և հայկական բանակում ծառայելու համար մինչև 1920թ. մարտի 10-ը տարկետում ստա-

²⁹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 295, թ. 7:

²⁹² Տե՛ս նույն տեղում, գ. 385, թ. 30-31, § 275, գ.4, գ. 5, թ. 2 :

ցան²⁹³: Մեկ ամսվա ընթացում նրանք պետք է գրանցվեին Հ. Սաղաթեյանի կամ նրա լիազորների մոտ և մինչև մարտի 10-ը գնային Հայաստան²⁹⁴: Անդրկովկասում ծնված և արդեն զորակոչված հայերը պետք է ցուցակագրվեին և հայկական բանակում ծառայությունը շարունակելու համար Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչության միջոցով ուղարկվեին Հայաստան²⁹⁵:

1919թ. վերջին ՌԿԽՇՀԿ-ն միջոցների սղության պատճառով փակեց Հյուսիսային Կովկասի բաժանմունքները²⁹⁶: Խորհրդային զորքերի առաջխաղացման հետևանքով 1919թ. դեկտեմբերին այն Ռոստովից տեղափոխվեց Եկատերինոդար, իսկ 1920թ. հունվարին՝ Նովոռոսիյսկ, որտեղ նույն ամսվա կեսերին լուծարվեց: Այդ կառույցի անդամները հեռացան Բաթում²⁹⁷: ՌԿԽՇՀԿ-ի ինքնալուծարումից հետո Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների օգնության, իրավունքների պաշտպանության և հայրենադարձության խնդիրներով զբաղվեցին երկրամասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինները:

Գաղթականներին նյութապես օգնելու համար անհրաժեշտ էին զգալի ֆինանսական միջոցներ, որոնք նախկինում գոյանում էին երկրամասի հարուստ հայերի նվիրատվություններից: 1919թ. վերջին և 1920թ. սկզբին խորհրդային զորքերի առաջխա-

²⁹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 1, գ. 11, թ. 3:

²⁹⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 295, թ. 13, գ. 385, թ. 31, ֆ. 275, ց.4, գ. 7, թ. 121:

²⁹⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 1, գ.11, թ. 3:

²⁹⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 536, թ. 24-25:

²⁹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 385, թ. 31:

ղացման հետևանքով Հյուսիսային Կովկասի հարուստ հայերի մեծ մասը հեռացավ երկրամասից, ինչը դժվարացրեց գաղթականների խնամքի համար անհրաժեշտ միջոցների հայթայթումը²⁹⁸:

1920թ. հունվար-փետրվար ամիսներին Հ. Սաղաթեյանը հնաբնակ և գաղթական հայերի իրավունքները պաշտպանելու և նրանց հայրենադարձությունը կազմակերպելու նպատակով Հյուսիսային Կովկասի մի շարք շրջաններում ժամանակավոր հյուպատոսներ նշանակեց²⁹⁹: Նովոռոսիյսկում հյուպատոսի գործերի պատշոնակատար նշանակվեց կապիտան Աշոտ Տոնյանը, Ստավրոպոլում և նահանգում՝ քաղաքի գաղթական կոմիտեի նախագահ Արսեն Քալանթարը³⁰⁰, Կիսլովոդսկում՝ նախկին քաղաքապետ Պետրոս Հովհաննիսյանը: Նորաստեղծ հյուպատոսարանների ֆինանսական ծախսերը հոգալու էին այդ շրջանների հայկական համայնքները³⁰¹:

Նորանշանակ հյուպատոսների կողքին իրենց գործունեությունը շարունակում էին հյուպատոսներ Հ. Սառիկյանը՝ Վլադիկավկազում, Մ. Պոպովը՝ Պետրովսկում, Ա. Հակոբյանը՝ Սոչիում, Յ. Օվեյանը՝ Արմավիրում, Բախչիսարայցը՝ Եկատերինոդարում:

Հյուսիսային Կովկասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների առաջնային խնդիրը երկրամասի հայ գաղթականներին գորակոչից ազատելու

²⁹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 295, թ. 47-48, Բերբերեան, Ռ., Երկու դարերի շեմին. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, հոկտեմբեր, N 12 (216), էջ 90:

²⁹⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 385, թ. 32:

³⁰⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 594, թ. 5:

³⁰¹ Տե՛ս նույն տեղում, գ. 385, թ. 32:

համար անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումն էր: Հ. Սաղաթեյանի մշակած սկզբունքների համաձայն 1) Հայաստանի Հանրապետության տարածքում ծնվածները պետք է ստանային ազգային անձնագրեր, 2) Անդրկովկասի այլ վայրերում ծնվածները՝ վկայականներ, որտեղ նշվելու էր նրանց ծննդավայրը, 3) գաղթականի կարգավիճակը պահպանել ցանկացողները ստանալու էին վկայականներ, որտեղ նշվելու էր, որ նրանք եկել են Հյուսիսային Կովկաս 1917թ մարտի 1-ից հետո, 4) նախկին թուրքական վիլայեթների բնակիչները ստանալու էին անձը հաստատող վկայականներ, որտեղ պետք է նշվեր նրանց ծննդավայրը և Հյուսիսային Կովկաս ժամանելու ամսաթիվը³⁰²:

Հ.Սաղաթեյանը փետրվարի 25-ին Եկատերինոդարում նախատեսել էր գումարել Ռուսաստանի հարավի հայկական հյուպատոսների հավաք, որտեղ պետք է քննարկվեին 1. Հայաստանին պարենով և գումարով աջակցելու, 2. գորակոչային տարիքի գաղթականների տեղափոխության, 3. երկրամասի ներկայացուցչության և հյուպատոսարանների միջև մշտական կապ պահպանելու ու համաձայնեցված գործելու հարցերը: Ժողովի մասնակիցները պետք է զեկուցեին իրենց շրջաններում հայերի դրության և կատարած աշխատանքների մասին³⁰³: Սակայն 1920թ. փետրվարի 14-ից Հյուսիսային Կովկասում վերսկսված ռազմական գործողությունները և Եկատերինոդարի ուղղությամբ խորհրդային զորքերի սրընթաց առաջխաղացումը հնարավորություն չտվեցին Հ. Սաղաթեյանին այդ հավաքը կազմակերպել:

³⁰² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 5, թ. 4, ց.4, գ. 7, թ. 29-30, 32:

³⁰³ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 5, թ. 42, ց.4, գ. 7, թ. 34:

Խորհրդային զորքերի առաջխաղացման հետևանքով երկրամասի դիվանագիտական և հյուպատոսական մարմինները գրկվեցին Հայաստանի կառավարության հետ մշտական կապի մեջ լինելու հնարավորությունից: Հայաստանի ներքին և արտաքին գրությանը տեղեկանալու և նոր կարգադրություններ ստանալու ակնկալիքով այդ կառույցների ղեկավարները դիմեցին Անդրկովկասին ամենից մոտ գտնվող Վլադիկավկազի հյուպատոս Ն. Սառիկյանին³⁰⁴: 1919թ. փետրվարի 4-ին Ն. Սառիկյանի Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին ուղղած զեկույցից տեղեկանում ենք, որ Հայաստանի կառավարությունից վերջին տեղեկությունը Վլադիկավկազի հյուպատոսը ստացել է 1919թ. դեկտեմբերի 30-ին: Դրանից հետո Անդրկովկասին վերաբերվող կցկտուր տեղեկություններ հասել են միայն լրագրերից և պատահական անցորդներից: “Շերթական ու ծայրահեղորեն հրատապ են հպատակության, գորակոչի, գաղթականության վերադարձի հարցերը, որոնց մասին ոչ մի տեղեկություն չկա ոչ միայն Վլադիկավկազի, այլ և Հյուսիսսային Կովկասի մյուս հյուպատոսարաններում...”, գրում է վերոհիշյալ զեկույցում Ն. Սառիկյանը՝ խնդրելով Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին տեղեկացնել իրեն Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին կացության, մինչև 1920թ. մարտի 10-ը զորակոչվող հայերի նկատմամբ Հայաստանի կառավարության դիրքորոշման և գաղութներից հայերին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ նրա մշակած քայլերի մասին³⁰⁵: Հիշյալ զեկույցը երկար ժամանակ

³⁰⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 7, թ. 15:

³⁰⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 14:

անպատասխան մնաց և Հ. Սառիկյանը 1920թ. փետրվարի 8-ին հատուկ սուրհանդակ Ավետիս Գաբելյանի միջոցով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին մեկ այլ զեկույց-դիմում ուղարկեց: Դրա մեջ նա գրում էր Հյուսիսային Կովկասի քաղաքական զարգացումների, հնաբնակ և գաղթական հայերի դրության մասին: Զեկույց-դիմումում Վլադիկավկազի հյուպատոսը արտաքին գործերի նախարարին խնդրում էր ծանոթացնել Հայաստանի արտաքին և ներքին դրությանը, Հայաստանի հպատակություն և քաղաքացիություն ստանալու կարգին և լուծել գաղթականների վերադարձի խնդիրը, վերացնել Վրաստանի իշխանությունների կողմից ներգաղթողների նկատմամբ հարուցած խոչընդոտները³⁰⁶:

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը Հ. Սառիկյանի փետրվարի 8-ի զեկույց-դիմումին պատասխանեց 1920թ. մարտի 8-ին³⁰⁷, այն ժամանակ, երբ Հյուսիսային Կովկասում քաղաքական կացությունը արմատապես փոխվել էր և հայերի զորակոչի խնդիրը այլ լուծումներ էր պահանջում: Օրինակ հիշյալ նամակում Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը Հ. Սառիկյանին տեղեկացնում էր, որ երկրամասի հայերի զորակոչի վերաբերյալ անհրաժեշտ հրահանգները կուղարկի Հ. Սաղաթեյանին, մինչդեռ վերջինս արդեն հեռացել էր Եկատերինոդարից Նովոռոսիյսկ, այնտեղից էլ՝ մարտի 11-ին՝ Ղրիմ³⁰⁸: Խորհրդային զորքերի

³⁰⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 4:

³⁰⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց.4, գ. 7, թ. 36-39բ, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 8-12:

³⁰⁸ Տե՛ս Մինասյան Ս., Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության ներգաղթը Հայաստան (1918-1920 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 2007, N 1-2 (109-110), էջ 192:

առաջխաղացման հետևանքով Հյուսիսային Կովկասից հեռացավ նաև Թերեքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ և Միներալնիե վոդիում հյուպատոս Ալեքսանդր Ասրիբեկյանը³⁰⁹:

Հյուսիսային Կովկասի հայերի դրությունը թեթևացնելու նպատակով Հայաստանի կառավարությունը դիմեց 1920թ. մարտի 7-ից 11-ը Հայաստանում գտնվող կազակների Գերագույն կրուգի պատվիրակության անդամներին³¹⁰. նրանք խոստացան ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն³¹¹: Սակայն այդ խոստումները չէին կարող իրականանալ, քանի որ մարտի վերջին խորհրդային զորքերը գրավել էին Հյուսիսային Կովկասը:

1919թ. վերջին և 1920թ. սկզբին Հայաստանի կառավարությունը Սուխումի հյուպատոսի միջոցով կարողացավ չեզոքացնել միայն Մոչիի շրջանի հայությանը սպառնացող վտանգը:

1919թ. սկզբին Կամավորական բանակի կողմից Մոչիի գրավումից հետո շրջանի բնակչության դրությունը չբարելավվեց: Նոր իշխանությունները շարունակեցին բնակչության կողոպուտը: Կամավորական բանակը Մոչիի շրջանում 18-40 տարեկան տղամարդկանց զորակոչ հայտարարելուց հետո բնակչության մեջ սկսվեց դժգոհությունների նոր ալիք: 1919թ. ապրիլին այն վերաճեց զինված դիմադրության³¹²: 1919թ. նոյեմբերի 18-ին ձևավորվեց Սևծովյան ազատագրության խորհուրդը, որը ստանձնեց

³⁰⁹ Տե՛ս ԳԱԹ, Հ. Մառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 127:

³¹⁰ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ), էջ 293-296:

³¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 465, թ. 15:

³¹² Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 2:

ապստամբության դեկավարումը: Ապստամբներին աջակցեց նաև վրացական կառավարությունը³¹³: Կամավորական բանակի հրամանատարությունը ապստամբությունը ճնշելու համար օգտագործեց ոչ տեղացի հայերից կազմված հայկական գումարտակը³¹⁴, որտեղ ծառայում էր 300-1500 հայ զինվոր³¹⁵: Շրջանի ապստամբների շարքերում ես մեծ թվով հայեր կային³¹⁶:

Մոչիում Ն. Սաղաթելյանի կողմից լիազոր նշանակված Արամ Հակոբյանի և Սուխումի Հայոց ազգային խորհրդի ղեկույցներից Հայաստանի կառավարությունը տեղեկացավ Մոչիի շրջանի հայերի՝ մասնավորապես հայ զինվորների, ծանր դրության մասին³¹⁷: 1920թ. փետրվարի սկզբին Հայաստանի կառավարությունը Սուխումի հայկական հյուպատոս Սահակյանին կարգադրեց Հայաստանի Հանրապետություն տեղափոխել Մոչիի հայկական ջոկատը և Կամավորական բանակից փախած ու շրջանում ապաստանած հայ ռազմագերիներին³¹⁸: Վրաստանի տարածքով նրանց տեղափոխությունը անարգել իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանին հանձնարարեց բանակցել վրաց կառավարության հետ³¹⁹:

³¹³ Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 3:

³¹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ.1, 3:

³¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 3:

³¹⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 100, թ. 81:

³¹⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 81, 3, գ. 551, թ. 118:

³¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 9:

³¹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 7:

1920թ. հունվարի վերջին ապստամբները գրավեցին Սոչիի շրջանը³²⁰: Կամավորական բանակի կազմում գործող հայկական գումարտակը ապստամբների դեմ կռվելիս զգալի կորուստներ ունեցավ: Կամավորական բանակի նահանջի ժամանակ հայկական գումարտակի զինվորների մեծ մասը մնաց Սոչիում և ձերբակալվեց ապստամբների կողմից: Ա. Հակոբյանի ջանքերի շնորհիվ նրանց ազատեցին՝ պայմանով, որ նրանք ուղարկվեն Հայաստանի Հանրապետություն³²¹: Այս մասին Ա. Հակոբյանը հեռագրեց Սուխումում Հայաստանի Հանրապետության հյուպատոս սարան, որն էլ մարտի սկզբին՝ Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությանը: 1920թ. մարտի կեսերին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը հրահանգեց Սուխումի հյուպատոսին հայկական գումարտակի զինվորներին տեղափոխել հայրենիք³²²: 1920թ. մարտի վերջին Սոչիի շրջանից Թիֆլիս տեղափոխվեց հայկական գումարտակի 200 վիրավոր զինվոր³²³:

1920թ. հունվար-փետրվարին Հ. Սաղաթեյանը, Հյուսիսային Կովկասում գործող հյուպատոսները և գաղթականների հարցերով զբաղվող ազգային կազմակերպությունները ստիպված էին ինքնուրույն գործել, առանց Հայաստանի կառավարության աջակցության և հրահանգների կազմակերպել գաղթականների համապատասխան փաստաթղթերով ապահովելու, ցուցակագրելու և Կամավորական բանակ գորակոչված հայերին ետ բերելու խնդիրները:

³²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 2:

³²¹ Տե՛ս նույն տեղում, թ. 4:

³²² Տե՛ս նույն տեղում, թ. 12:

³²³ Տե՛ս նույն տեղում, թ. 13:

Այդ գործընթացը երկրամասի տարբեր շրջաններում տարբեր ընթացք ունեցավ:

Կուրանում, Ստավրոպոլում և Թերեքի արևմտյան ու կենտրոնական հայաշատ շրջաններում (մասնավորապես Հանքային ջրերում և Վլադիկավկազում - Ս.Մ.) այդ գործընթացը հաջողությամբ իրականացվեց շնորհիվ Հ.Սադաթեյանի, Ա.Տոնյանի, Յ. Օվեյանի, Բախչիսարայցևի, Ա.Քալանթարի, Հ. Սառիկյանի, Պ.Հովհաննիսյանի³²⁴:

Թերեքի արևելյան շրջաններում (Գրոզնի, Մոզդոկ, Ղզլար) և Դադստանում հայ գաղթականներին գորակոչից ազատելու գործընթացը մի շարք պատճառներով գրեթե չիրականացվեց: Գրոզնիում անհաջողության հիմնական պատճառը տեղի հրամանատարի անբարյացակամ վերաբերմունքն էր: Նա չէր ճանաչում հայերի անցագրերը, Վլադիկավկազի հյուպատոսի կողմից տրված Հայաստանի Հանրապետության անձնագրերը և Գրոզնիի Հայոց ազգային խորհրդի գաղթականական վկայականները³²⁵: Գրոզնիի Հայոց ազգային խորհրդի և Հ.Սառիկյանի՝ քաղաքի հայ գաղթականներին գորակոչից պաշտպանելու և գորակոչվածներին ազատելու ջանքերը ապարդյուն անցան: 1920թ. փետրվարի 8\21-ին Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին ուղղված նամակում Հ. Սառիկյանը գրում է .“Գրոզնայի շրջանում տեղական իշխանությունները նույն իսկ հայ գաղթականներին գորակոչի ենթարկեց, տեղական ազգային խորհուրդը փակեց, հայկական անցագրերը չուզեց ճանաչել”³²⁶:

³²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 594, թ. 6:

³²⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 4, գ. 13, թ. 8, գ. 15, թ. 15:

³²⁶ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 3:

Գրոզնիի հայերի իրավունքները պաշտպանելու համար Հ. Սաղաթեյանը 1920թ. փետրվարի 10-ին ինժիներ-տեխնոլոգ Նիկիտա Սարուխանյանցին նշանակեց քաղաքի փոխհյուպատոս, որը պետք է ենթարկվեր Վլադիկավկազի հյուպատոսին³²⁷: Սակայն Գրոզնիում փոխհյուպատոսարանի բացումը չօգնեց գաղթականների գորակոչի կասեցմանը:

Եթե Գրոզնիում ստեղծված կացությունը հիմնականում տեղի իշխանության անբարյացակամ վերաբերմունքի հետևանք էր, ապա Մոզդոկում և Ղզլարում դրան գումարվեցին այդ շրջանների մարզային կենտրոններից կտրվածությունը և գաղթականների ու նրանց խնդիրներով զբաղվող հայկական կազմակերպությունների միջոցների սղությունը: 1920թ. հունվար-փետրվար ամիսներին Մոզդոկի և Ղզլարի հայկական գաղթականական կոմիտեների նախագահները Հ. Սառիկյանին գրած դիմումներում խնդրում էին աջակցել իրենց՝ լուծելու գորակոչից տարկետում ստանալու, գաղթականներին անհրաժեշտ փաստաթղթերով ապահովելու և ցուցակագրելու հարցերը³²⁸: Հ. Սառիկյանը պատասխանել, իրազեկել, որոշ դեպքերում անհրաժեշտ հրահանգներ է տվել Մոզդոկի և Ղզլարի համապատասխան մարմիններին, սակայն խորհրդային գորքերի առաջխաղացումը, ստեղծված խուճապը, խառնաշփոթը և միջոցների սղությունը հնարավորություն չտվեցին այդ շրջանների հայկական կազմակերպություններին գորակոչից պաշտպանել հայ գաղթականներին: Հետևաբար Թերեքի արևելյան հատվածում ապաստանած հայ գաղթականների մի մասը երկրամասում խորհրդային կարգերի

³²⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 4, գ. 7, թ. 35:

³²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 9, 18, 23:

հաստատման նախօրեին արդեն գորակոչվել էր Կամավորական բանակ և կազակների գորքեր:

Շանր էր հայության վիճակը նաև Դադստանում: Այստեղ հիմնական դժվարությունը գորակոչված հայերին բանակից ազատելու խնդիրն էր: 1920թ. փետրվարի 14-ին Պետրովսկի 300 հայ ռազմիկներ՝ իրենց աջակցելու խնդրանքով դիմեցին Կիսլովոդսկի հյուպատոսին: Տեղական իշխանության հարուցած արգելքների պատճառով նրանք կես տարի չէին կարողանում վերադառնալ հայրենիք: Արխիվային նյութերում տեղեկություններ են պահպանվել Պետրովսկում գործող հյուպատոս Մ.Պոպովի մասին, սակայն վերոհիշյալ նամակում նշվում է, որ Պետրովսկում «չկա հայոց դեսպան»: Պետրովսկի հայ ռազմիկները Կիսլովոդսկի հյուպատոսից բացի օգնության խնդրանքով դիմել են Բաքվի Հայոց ազգային խորհրդին և Արմավիրի հայկական հյուպատոսին, սակայն անուշադրության են մատնվել³²⁹: Նրանց հետագա ճակատագիրը հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ այդ զինվորները մնացին Պետրովսկում և խորհրդային գորքերի կողմից քաղաքը գրավելուց հետո ուղարկվեցին համակենտրոնացման ճամբարներ:

Եթե Հյուսիսային Կովկասի հայկական դիվանագիտական և հյուպատոսական մարմինները փորձում էին երկրամասի հայերին ազատել գորակոչից, ապա առանձին տարրեր ջանքեր էին գործադրում նրանցից զինված ջոկատներ կազմակերպել և խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարել: 1919թ. նոյեմբերի վերջին նման ջոկատ կազմակերպվեց Ժելեզնովոդսկում, որը

³²⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 20:

պետք է ուղարկվեր Սոչիի շրջան՝ վրացիների դեմ կռվելու³³⁰։ Չոկատը մասնակցեց շրջանում ընթացող մարտերին և ծանր մարդկային կորուստներ կրեց։ Մնացած 40-50 հայերին տեղի իշխանություններն ընդգրկեցին լեռնային հարյուրյակի մեջ և ուղարկեցին Կիսլովոդսկ՝ ռազմաճակատ ուղարկելու համար։ Այս ջոկատում ծառայող հայ զինվորների հետագա ճակատագրի վերաբերյալ արխիվային նյութերում պահպանվել են Ա. Ասրիբեկյանի և Պ. Հովհաննիսյանի միմյանց հակասող տեղեկությունները։ Ա. Ասրիբեկյանի հավաստմամբ իր շնորհիվ հայ զինվորները մնացին Կիսլովոդսկում՝ ծառայության անցնելով քաղաքի կայագորում³³¹։ Պ. Հովհաննիսյանը նշում է, որ հայկական հարյուրյակը Կիսլովոդսկից ուղարկվեց ռազմաճակատ և ջախջախվեց, մնացած 40 զինվորները ցրվեցին տարբեր ուղղություններով³³²։ Նման ջոկատների կազմավորումը և մասնակցությունը քաղաքացիական կռիվներին վնասում էր երկրամասի հայությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության հեղինակությանը։

1920թ. առաջին ամիսներին Հ. Սաղաթելյանը, երկրամասի հյուպատոսները և գաղթականների հարցերով զբաղվող հայկական կազմակերպությունները կազմակերպեցին գորակոչից ազատված գաղթականների և ոչ խորհրդային պետական կազմավորումների գորքերից ետ բերած հայ ռազմիկների ներգաղթը Հայաստան։ Կուրանում այդ գործընթացը Ռուսաստանի հարավի զլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հ. Սաղաթելյանի և

³³⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 295, թ. 24, ց. 2, գ. 75, թ. 2:

³³¹ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 295, թ. 50:

³³² Տե՛ս նույն տեղում, գ. 295, թ. 24, ց. 2, գ. 75, թ. 2:

հյուպատոսներ Ա. Տոնյանի, Բախչիսարայցևի, Յ. Օվեյանի ջանքերով կազմակերպված իրականացվեց:

Կուրանից հայրենիք մեկնողները հիմնականում Եկատերինոդարում, Արմավիրում ապաստանած և 1919թ. օգոստոսից Նովոռոսիյսկում մնացած գաղթականներն էին: Նրանք Ռուսաստանի հարավի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչության, երկրամասի հյուպատոսարանների և տեղական հայկական կազմակերպությունների նյութական աջակցությամբ 1920թ. հունվարից մեկնեցին Նովոռոսիյսկ, մասամբ՝ Տուապսե և Անսուպա, որտեղից պետք է անցնեին Փոթի և Բաթում: Եկատերինոդարից Նովոռոսիյսկ ուղարկվեցին նաև Կամավորական բանակից և կազակների զորքերից ազատված և Եկատերինոդար տեղափոխված հայ ռազմիկները³³³: Նրանց տեղափոխության և պարենի կարիքները հոգաց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչությունը:

Նովոռոսիյսկը ոչ միայն հայ գաղթականների, այլև Ռուսաստանի հարավից հեռացող տասնյակ հազարավոր ռուս փախստականների վերջին կայանատեղին էր³³⁴: 1920թ. հունվարի 10-ին Նովոռոսիյսկ ժամանանեց Հ. Մաղաթեյանի կողմից քաղաքի հյուպատոս նշանակված Ա. Տոնյանը: Նրա ջանքերով հունվարի 13-ին բացվեց հայկական հյուպատոսարանը³³⁵, որի առաջնային խնդիրներից էր Նովոռոսիյսկի մոտ 10.000 գաղթականի

³³³ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 613, թ. 10:

³³⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 487, թ. 12:

³³⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 536, թ. 1:

օգնություն կազմակերպելը:³³⁶ Ա.Տոնյանի հավաստմամբ Նովոռոսիյսկում ապաստանած գաղթականների թիվը հասնում էր 25000-ի³³⁷: 1919թ. վերջին և 1920թ. սկզբին Նովոռոսիյսկում էին հավաքվել Ռոստովից և Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից եկած հայ հարուստները: Նրանք քաղաք էին բերել միլիարդավոր ռուբլի արժող ապրանքներ, սակայն դրանց արտահանումը տեղական իշխանությունը արգելում էր: Այդ ապրանքները քաղաքից դուրս հանելու համար հայ հարուստները 1919թ. դեկտեմբերի վերջին Մայիլովի գլխավորությամբ դիմեցին Նովոռոսիյսկի իշխանություններին՝ առաջարկելով քաղաքի 10.000 հայ գաղթականներին հայրենիք փոխադրելու դիմաց թույլատրել Նովոռոսիյսկից դուրս հանել իրենց ապրանքները³³⁸: Նովոռոսիյսկի իշխանությունները, շահագրգռված լինելով գերբեռնված քաղաքը 10.000 հոգով նվազեցնելու ցանկությամբ, ուրախությամբ ընդունեցին այդ առաջարկը, առավել ևս, որ նրանց զգալի կաշառք տրվեց³³⁹: Հայ հարուստները պարտավորվեցին 10 օրվա ընթացքում օտարերկրյա նավերով Նովոռոսիյսկից Փոթի տեղափոխել 10.000 հայ գաղթականների՝ հոգալով նրանց տեղափոխման, պարենավորման և մինչև Հայաստան տեղափոխելու ծախսերը: Դրա փոխարեն տեղի իշխանությունները հայ հարուստներին թույլատրեցին քաղաքից դուրս հանել 15.000 փութ մանուֆակտուրա³⁴⁰: Օգտվելով ստացված թույլտվությունից՝ հայ հա-

³³⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 24:

³³⁷ Տե՛ս Տոնյան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», Բոստոն, 1964, սեպտեմբեր, N 9, էջ 49:

³³⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 2, թ. 8-9:

³³⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 536, թ. 24:

³⁴⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 1, գ. 2, թ. 3:

րուստների մի մասը արտասահմանյան շոգենավերով, որ բեռնված էին իրենց մանուֆակտուրայով, բայց ոչ գաղթականներով, հեռացան Նովոռոսիյսկից: Հարուստներից նրանք, ովքեր չէին հասցրել ժամանակին մեկնել, ձևավորեցին ֆինանսական հանձնաժողով, վարձեցին «Թագավոր Ալբերտ Առաջին» նավը և իրենց ապրանքներից բացի տարան միայն 85 գաղթականի՝ անվճար, և 200-ին՝ վճարովի³⁴¹:

Փաստորեն Ռոստովից և Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից Նովոռոսիյսկ եկած հարուստ հայերը 10.000 գաղթականի փոխարեն Փոթի տեղափոխեցին միայն 285 հոգու, որից 200-ին՝ վճարովի:

Նովոռոսիյսկի հյուպատոսարանի գոյության առաջին օրերից նրա առջև ծառայան հայրենիք մեկնող գաղթականներին աջակցելու և դրա համար անհրաժեշտ նյութական միջոցներ հայթայթելու խնդիրները: Հյուպատոսարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով Ա. Տոնյանի նախաձեռնությամբ ձևավորվեց քաղաքի Հայոց ազգային խորհուրդը, որի նախագահ ընտրվեց Նովոռոսիյսկի հյուպատոսը: Նովոռոսիյսկի Հայոց ազգային խորհուրդը ուներ ֆինանսական, գաղթականական և մշակութա-լուսավորչական բաժիններ:

Նովոռոսիյսկի գաղթականներին և զինվորներին խնամելու և հայրենիք ուղարկելու համար անհրաժեշտ միջոցները հյուպատոսարանին տրամադրեցին քաղաքի հնաբնակ հայերը³⁴²: Այդ միջոցների շնորհիվ Նովոռոսիյսկի հյուպատո-

³⁴¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 536, թ. 24:

³⁴² Տե՛ս Տոնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», Բոստոն, 1964, սեպտեմբեր, N9, էջ 49:

սարսնը քաղաքի հիվանդ գաղթականների համար բացեց 2 հիվանդանոց³⁴³: Նովոռոսիյսկի գաղթականներին զգալիորեն օգնեց Ամերիկյան կարմիր խաչը, որ բացեց 20 հիվանդի համար նախատեսված լազարեթ³⁴⁴:

Հայրենիք մեկնող հայ զինվորիներին օգնեցին Նովոռոսիյսկի իշխանությունները, որոնք հայ զինվորների տեղափոխման համար քաղաքի հայկական հյուպատոսարանին անվճար տրամադրեցին «Վոզրոժդենիե» և «Կին» նավերը: Նովոռոսիյսկի իշխանությունը Եկատերինոդարից քաղաք ժամանած հայ զինվորներին նաև՝ անվճար շոր և ուտելիք բաժանեց³⁴⁵:

1920թ. հունվար-մարտ ամիսներին Նովոռոսիյսկի հյուպատոսի ջանքերով «Ռուս», «Լյա-ֆորտունա», «Պրագա», «Վոզրոժդենիե» և «Կին» նավերով Փոթի և Բաթում ուղարկվեցին մոտ 2000 հայ ռազմիկ և գաղթական, որոնցից 700-ը՝ անվճար:

1920թ. հունվար-մարտ ամիսներին Նովոռոսիյսկի հյուպատոսի աջակցությամբ տեղի իշխանությունները Հայկոոպին՝ թույլատրեցին Հայաստան տանելու համար Նովոռոսիյսկից Բաթում տեղափոխել ճարպ՝ 2000 փ., յուղ՝ 5000 փ., օճառ՝ 1000 փ.: Տարբեր անձանց թույլատրվեց արտոնյալ պայմաններով Հայաս-

³⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 50:

³⁴⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 536, թ. 25:

³⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

* Հայկական կոոպերատիվ: Նովոռոսիյսկի հյուպատոսի նախաձեռնությամբ հյուպատոսարանին կից հիմնադրվեց կոոպերատիվ, որի անդամների թիվը անցնում էր 450-ից: Բացվեց նաև կոոպերատիվային բանկ, որը նպատակ ուներ աջակցելու Հայաստանի և Ռուսաստանի ապրանքաշրջանառությանը և հայկական ազգային կազմակերպություններին: Բանկը իր վրա վերցրեց արտահանման համար թույլատրված 30.000 փ ցորեն Հայաստան ուղարկելու գործը, (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 536, թ. 26):

տան տանել 3000 փ. այլուր և 30.000 փ. ցորեն, որի մի մասը բուլշե-վիկների առաջխաղացման հետևանքով չհաջողվեց տեղափոխել:

Կուրանի համեմատ, Թերեքում և Դադատանում հայ գաղթականների և Կամավորական բանակից ազատված ռազմիկների տեղափոխությունը Հայաստանի Հանրապետություն ավելի բարդ ընթացք ունեցավ: Դրա հիմնական պատճառը Թերեքադադատանյան երկրամասից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ասրիբեկյանի հեռանալն էր, ինչի հետևանքով երկրամասի հյուպատոսները անջատ-անջատ էին գործում: 1919թ. դեկտեմբերին Ա. Ասրիբեկյանը հեռանալուց առաջ երկրամասի հայության իրավունքների պաշտպանության գործը թողեց իր կողմից նշանակված տեղակալ-հյուպատոսներին: Դրանք էին՝ Հանքային ջրեր-Գեորգիեսկ-Սուրբ Խաչում՝ Պ. Հովհաննիսյանը, Վլադիկավկազ-Մոզդոկ-Գրոզնիում՝ Հ. Սառիկյանը, Պետրովսկում, Շուրա-Դերբենտ-Ղզլարում՝ Մ. Պոպովը³⁴⁶:

1920թ. հունվար-փետրվար ամիսներին այս տեղակալներից Պ. Հովհաննիսյանը փորձեց կազմակերպել Թերեքադադատանյան երկրամասի հայ գաղթականների հայրենադարձությունը և Հայաստանի կառավարությունից ստանալ այդ շրջաններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի լիազորությունները³⁴⁷: Պ. Հովհաննիսյանը, առանց համապատասխան լիազորություններ ունենալու, Ա. Ասրիբեկյանի³⁴⁸, ապա և Հ. Սաղաթեյանի կողմից նշանակված լինելով միայն Հանքային ջրերի հյուպատոս՝ ներկայանում էր որպես Թերեքադադա-

³⁴⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 4, գ. 7, թ. 108, գ. 10, թ. 18:

³⁴⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 295, թ. 5:

³⁴⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 46:

տանյան երկրամասի Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս: Հանքային ջրերի հյուպատոսի նման պահվածքը հարուցեց Հ. Սառիկյանի դժգոհությունը³⁴⁹: 1920թ. հունվարի 21-ին Վլադիկավկազի հյուպատոս Հ. Սառիկյանը Պ. Հովհաննիսյանին գրած նամակում հիշեցնում է նրան Ա.Ասրիբեկյանի նշանակումների մասին՝ առաջարկելով օգտվել իրական պաշտոնից³⁵⁰: 1920թ. հունվարի 27-ին Պ. Հովհաննիսյանը Հ. Սառիկյանին գրած պատասխան նամակում կատարվածի ողջ մեղքը բարդում է Ա.Ասրիբեկյանի վրա՝ նշելով, որ ինքը բավարարվում է Հանքային ջրերի հյուպատոսի համեստ պաշտոնով³⁵¹: Սակայն Պ. Հովհաննիսյանը երկրամասի հայկական կազմակերպություններին և տեղական իշխանություններին ուղղված նամակներում շարունակում էր իրեն անվանել Թերեքադադաստանյան երկրամասի գլխավոր հյուպատոս: Թերեքադադաստանյան երկրամասի հայության ներգաղթի խնդիրները քննարկելու և լուծումներ տալու նպատակով նա 1920թ. փետրվարի 15-18-ը Կիսլովոդսկում հրավիրեց երկրամասի հայության խորհրդածոդով³⁵²: Դրան մասնակցեցին Կիսլովոդսկի ներկայացուցիչներ Կ. Չարախչյանը, Հ. Գարագաշը, Եսենտուկիի՝ Տեր-Ասատրյանը (Ասատուրովը) և բժիշկ Ասրիյանցը, Պյատիգորսկի՝ Մելիք Ամիրզադյանը և Ա. Զուրաբյանը, Պետրովսկի՝ Մ. Պոպովյանը (Պոպով), Գրոզնիի՝ Դ. Խաչատրյանը և Տ. Ավթանդիլյանը, Մոզդոկի՝ Օ. Մխիթարյանը, Դ. Բարսեղյանը և Ա. Խաչատրյանը³⁵³: Թերեքադադաստանյան երկրամասի մի քանի հա-

³⁴⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 295, թ. 46:

³⁵⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 4, գ. 7, թ.108:

³⁵¹ Տե՛ս նույն տեղում, թ. 109:

³⁵² Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 295, թ. 7:

³⁵³ Տե՛ս նույն տեղում, թ. 33:

յաշատ քաղաքների ներկայացուցիչներ քաղաքացիական կոիվ-ների պատճառով չկարողացան մասնակցել խորհրդաժողովին:

1920թ. փետրվարի 15-ից 18-ը տեղի ունեցած նիստերի ընթացքում խորհրդաժողովի մասնակիցները մշակեցին և ընդունեցին մի շարք որոշումներ, որոնք պետք է հեշտացնեին Թերեքադադստանյան երկրամասի գաղթականների ներգաղթը: Հաշվարկվեց Թերեքադադստանյան երկրամասում տարհանման ենթակա գաղթականների թիվը, որը կազմեց 25 հազար: Այս գաղթականներից 5-6 հազարը 1920թ. մարտի 10-ից հետո գորակոչվելու էր ոչ խորհրդային պետական կազմավորումների գորքեր: Այդ իսկ պատճառով խորհրդաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետություն ուղարկել նախ և առաջ գորակոչային տարիքի հայերին: Դրանից հետո Հայաստանի Հանրապետություն էին ուղարկվելու բարձր որակավորում ունեցող մասնագետները՝ բժիշկները, ինժեներները և փաստաբանները, երկրամասի ոչ խորհրդային պետական կազմավորումների գորքերից ազատված հայ զինվորները, Կիսլովոդսկի որբերը և մնացած գաղթականները:

Խորհրդաժողովը որոշեց գաղթականներին և զինվորներին հայրենիք ուղարկել բոլոր հնարավոր ուղղություններով: Սակայն նկատի ունենալով ճանապարհաճախսը և վերադարձողների անվտանգության խնդիրը՝ խորհրդաժողովը որոշեց գերապատվությունը տալ առաջին հերթին Տուապսեով, ապա Վլադիկավկազով անցնող ճանապարհներին: Գաղթականների և զինվորների տեղափոխությունը պետք է իրականացվեր ինչպես մեծ, այնպես էլ փոքր խմբերով և ընտանիքներով:

Քանի որ գաղթականները Հայաստանի Հանրապետություն հասնելու համար պետք է անցնեին Վրաստանի և

Աղբբեջանի տարածքով, խորհրդածոդովը որոշեց Հայաստան ուղարկել հատուկ լիազորների, որոնք պետք է Հայաստանի կառավարության աջակցությամբ Վրաստանի և Աղբբեջանի կառավարությունների հետ մշակեին գաղթականների ընդունման և իրենց տարածքով անցնելու պայմանները:

Խորհրդածոդովը որոշեց դիմել տեղի իշխանություններին, որպեսզի գաղթականներին թույլատրվի Հայաստան տանել դեռ 1919թ. սկզբին սահմանված չափով պարենամթերք:

Թերեքաղաղստանյան երկրամասի գաղթականների տեղափոխության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները պետք է հայթայթվեին հնաքնակ հայերից: Գումարը հավաքելու էր խորհրդածոդովի կողմից ստեղծված կենտրոնական տարհանման հանձնածոդովը, որի նախագահ ընտրվեց Ն. Գարագաշը: Խորհրդածոդովը այս կառույցին վերապահեց նաև երկրամասի հայության տարհանման գործի ղեկավարությունը³⁵⁴:

Կիսլովոդսկում տեղի ունեցած խորհրդածոդովը Թերեքաղաղստանյան երկրամասի հայ գաղթականության ներգաղթի կազմակերպման և հայկական կազմակերպությունների գործունեության միավորման տեսակետից դրական երևույթ էր, սակայն ժամանակավրեպ, եթե նկատի ունենանք 1. քաղաքացիական կռիվների հետևանքով Հյուսիսային Կովկասի ճանապարհների կաթվածահարությունը³⁵⁵, 2. գաղթականների տեղափոխության համար անհրաժեշտ փոխադրամիջոցների բացակայությունը, 3. երկրամասից հայ հարուստների հեռանալու հետևանքով ֆինան-

³⁵⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 33-37:

³⁵⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ. 3:

սական միջոցների հայթայթման դժվարությունը, 4. Վրաստանի և Ադրբեջանի անբարյացակամ վերաբերմունքը:

Մինչ Պ. Հովհաննիսյանը փորձում էր կազմակերպել երկրամասի հայության ներգաղթը Հայաստան, Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից հարյուրավոր գաղթականներ՝ Ռազմավիրական ճանապարհով Հայաստան անցնելու ակնկալիքով, ուղևորվեցին Վլադիկավկազ: Հ. Սառիկյանը Ռազմավիրական ճանապարհով հայրենիք վերադարձող գաղթականներին նյութապես օգնելու նպատակով քաղաքի հայ կանանց միության աջակցությամբ կազմակերպում էր բարեգործական երեկույթներ և թատերական միջոցառումներ³⁵⁶: Ստացված շահույթը հատկացվում էր Հայաստան գնացողներին: Այդ միջոցներով Հ. Սառիկյանին հաջողվեց Հայաստան ուղարկել մի քանի տասնյակ հայ ռազմիկի³⁵⁷:

Ռազմավիրական ճանապարհով գաղթականների հոսքը երկար չտևեց: 1920թ. փետրվարի վերջին Կազբեկում և հարակից շրջաններում տեղացած առատ ձյան պատճառով Ռազմավիրական ճանապարհը փակվեց. Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից Վլադիկավկազ եկած գաղթականները չկարողացան շարունակել իրենց ճանապարհը և մնացին քաղաքում³⁵⁸: Վլադիկավկազի հյուպատոսարանի և հայկական համայնքի միջոցները բավարար չէին քաղաքում կուտակված և ամեն օր ժամանող գաղթականներին օգնելու համար, ինչի հետևանքով գաղթականների շրջանում եղան սովամահության դեպքեր: Ռազմավիրական ճա-

³⁵⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց.4, գ. 4, թ. 23, 49, գ. 15, թ. 21, գ. 16, թ. 1:

³⁵⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 42, 59, գ. 6, թ. 3, գ. 15, թ. 1:

³⁵⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 66:

նապարհի փակվելը և Վլադիկավկազի գաղթականների ծանր դրությունը ստիպեցին Հ. Սառիկյանին հեռագրել Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններում գործող գաղթականական կազմակերպություններին, որ առժամանակ դադարեցնեն գաղթականների հոսքը Վլադիկավկազ:

Փաստորեն 1920թ. փետրվարի վերջին Ռազմավիրական ճանապարհով Հյուսիսային Կովկասից Հայաստանի Հանրապետություն մեկնող գաղթականների հոսքը դադարեց: Երկրամասում մնացած գաղթականներին գորակոչից պաշտպանելու համար Հ. Սառիկյանը 1920թ. մարտի 2-ին դիմեց Հյուսիսային Կովկասի գորքերի հրամանատարին՝ խնդրելով դադարեցնել հայ գաղթականների գորակոչը, կամ երկարացնել նրանց տարկետման իրավունքը³⁵⁹: 1920թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին Հյուսիսային Կովկասում խորհրդային գորքերի ռազմական հաջողությունները երկրամասի ոչ խորհրդային պետական կազմավորումների պարտությունը օրերի խնդիր դարձրին, և մի քանի հազար հայ գաղթականների գորակոչը էական նշանակություն չէր կարող ունենալ ռազմական գործողությունների հետագա ընթացքի վրա: Նկատի առնելով այդ հանգամանքը՝ Հյուսիսային Կովկասի գորքերի հրամանատարն ընդառաջեց Հ. Սառիկյանի խնդրանքին և հայ գաղթականների տարկետման իրավունքը երկարացրեց մինչև 1920թ. մայիսի 1-ը³⁶⁰: Փաստորեն, Հ. Սառիկյանի շնորհիվ Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների գորակոչի հարցը չեզոքացվեց, վերացավ նաև օր առաջ գաղթա-

³⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 21, 22:

կաններին Հայաստանի Հանրապետություն ուղարկելու անհրաժեշտությունը:

1920թ. փետրվարի 14-ին խորհրդային զորքերը ճեղքելով Կամավորական բանակի պաշտպանությունը՝ ներխուժեցին Հյուսիսային Կովկաս³⁶¹: 1920թ. փետրվարի 29-ին Կարմիր բանակը գրավեց Ստավրոպոլը, մարտի 17-ին՝ Եկատերինոդարը, մարտի 22-ին՝ Վլադիկավկազը, մարտի 23-ին՝ Ղզլարը, մարտի 24-ին՝ Գրոզնին, մարտի 30-ին՝ Պետրոպոլսկը և ապրիլի 7-ին՝ Տուապսեն: Հյուսիսային Կովկասի գրեթե ողջ տարածքում հաստատվեց խորհրդային իշխանություն:

1920թ. մարտի վերջին վերջնականապես պարտվեց գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակը: Մարտի 20-ին իր իսկ հրամանով գեներալ Ա. Դենիկինը ազատվեց գլխավոր հրամանատարի պարտականություններից՝ փոխարենը նշանակելով գեներալ Պ. Վրանգելին³⁶²:

Այսպիսով, 1919թ. վերջին և 1920թ. սկզբին Ռուսաստանի հարավի զինված ուժերի ռազմական անհաջողությունների հետևանքով սկսվեց համատարած զորակոչը, որը տարածվեց նաև Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների վրա: Հ. Սաղաթեյանի շնորհիվ հնարավոր եղավ հայ գաղթականների զորակոչը հետաձգել մինչև 1920թ. մարտի 10-ը, իսկ Կամավորական բանակ և կազակների զորքեր զորակոչվածներին ազատել ծառա-

³⁶¹ Ст' у Слободин В., Белое движение в годы гражданской войны в России (1917–1922 гг.), Москва, 1996, с. 54:

³⁶² Ст' у Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918–1920 թթ.), էջ 296:

յությունից և ուղարկել Հայաստան՝ հայկական բանակում ծառայելու համար:

Հյուսիսային Կովկասի որոշ շրջաններում տեղական հրամանատարների անբարյացակամ վերաբերմունքի հետևանքով հայ գաղթականների գորակոչը շարունակվեց:

1920թ. հունվար-մարտ ամիսներին Հ. Սաղաթեյանը, երկրամասի հյուպատոսները և գաղթականների հարցերով զբաղվող հայկական կազմակերպությունները Հյուսիսային Կովկասից Հայաստան տեղափոխեցին 3-4 հազար հայ գաղթական և զինվոր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

3.1 Իրադրությունը Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերում խորհրդային իշխանության առաջին ամիսներին

1920թ. մարտ-ապրիլ ամիսներին Հյուսիսային Կովկասում վերջնականապես հաստատվեցին խորհրդային կարգեր: Նոր իշխանությունը Ստավրոպոլում, Եկատերինոդարում, Նովոռոսիյսկում, Վլադիկավկազում և Հյուսիսային Կովկասի այլ հայաշատ քաղաքներում իրենց աշխատանքը շարունակող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներակայացուցիչների տեղակալներին և հյուպատոսներին լավ ընդունեց, և ճանաչեց նրանց ու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հպատակների իրավունքները³⁶³: Օրինակ, Նովոռոսիյսկի հյուպատոսարանի դիմումից հետո տեղի իշխանությունները ազատեցին և հայերին վերադարձրեցին զինվորների կողմից բռնագրաված

³⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 385, թ. 52, գ. 536, թ. 16, 26, գ. 594, թ. 7:

բնակարանները³⁶⁴: Խորհրդային իշխանությունը անբարյացակամ վերաբերմունք դրսևորեց միայն ոչ խորհրդային պետական կազմավորումներում ծառայած և գերության մեջ հայտնված հայ ռազմիկների նկատմամբ, որոնց ուղարկեց համակենտրոնացման ճամբարներ³⁶⁵:

Հյուսիսային Կովկասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական կառույցների նկատմամբ դրական վերաբերմունքը փոխվեց, երբ երկրամաս հասան Մոսկվայի խորհրդային կենտրոնական իշխանության հրահանգները:

1920թ. ապրիլին Մոսկվայից եկած կարգադրության համաձայն Հյուսիսային Կովկասի տեղական խորհրդային իշխանությունները ձերբակալեցին և Մոսկվա ուղարկեցին Նովոռոսիյսկի հյուպատոս Ա. Տոնյանին, Եկատերինոդարի հյուպատոս և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Բախչիսարայցևին և Ռոստովում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Ս. Չալխուշյանին³⁶⁶: Դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսարանները փակվեցին³⁶⁷: Ձերբակալվեցին ոչ միայն հայ, այլ նաև օտար պետությունների հյուպատոսները: 1920թ. մայիսի սկզբին հայերի հետ Մոսկվա ուղարկվեցին Նովոռոսիյսկում և Եկատերինոդարում ձերբակալված անգլիական, ֆրանսիական, լատվիական, դանիական, հունական, լեհական

³⁶⁴ Տե՛ս Տոնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», Բոստոն, 1964, սեպտեմբեր, N9, էջ 51:

³⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 562, թ. 8:

³⁶⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ. 28, գ. 536, թ. 27:

³⁶⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 536, թ. 16, 27:

հյուպատոսները և նրանց օգնականները³⁶⁸: Գրեթե մեկամայա քանտարկությունից հետո խորհրդային իշխանությունը հայտնեց, որ հայ և այլազգի հյուպատոսների մեծ մասի ձերբակալությունը տեղական իշխանությունների թյուրիմացության արդյունք է³⁶⁹: Այդ ձերբակալությունների դրդապատճառը 1920թ. ապրիլի 25-ին սկսված լեհ-ռուսական պատերազմն էր: Հայ հյուպատոսները, ինչպես և մնացած քանտարկյալները, բացի լեհերից, մայիսի վերջին ազատ արձակվեցին³⁷⁰:

Մոսկվայում հայ հյուպատոսներին աջակցեցին Չիչերինի օգնական Կարախանը և այդ օրերին քաղաքում գտնվող Լևոն Շանթի գլխավորած հայկական պատվիրակության անդամները: Եթե Ս. Չալխուշյանը և Բախչիսարայցը ազատվելուց հետո հեշտությամբ հեռացան Մոսկվայից, ապա Ա. Տոնյանը խորհրդային իշխանության հարուցած արգելքների հետևանքով բավական երկար ժամանակ մնաց քաղաքում: Խորհրդային իշխանության նման վերաբերմունքը Ա. Տոնյանը իր հուշերում հիմնավորում էր իր՝ նախկինում ցարական բանակի սպա լինելով, որի հետևանքով նրան արգելում էին հեռանալ Ռուսաստանի հարավ, որտեղ շարունակվում էին քաղաքացիական կռիվները: Կարախանի և հայկական պատվիրակության անդամների ջանքերով Ա.Տոնյանը խորհրդային իշխանությանը ներկայացվեց որպես Հյուսիսային Կովկասում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպա-

³⁶⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 465. թ. 27, գ. 536, թ. 16, Տոնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը «Հայրենիք», Բոստոն, 1964, սեպտեմբեր, N 9 էջ 51:

³⁶⁹ Տե՛ս Տոնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», Բոստոն, 1964, սեպտեմբեր, N9, էջ 54:

³⁷⁰ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 275, ց.4, գ. 10, թ. 22., Տոնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, էջ 54-55:

տոս և կարողացավ ստանալ Մոսկվայից դուրս գալու համար անհրաժեշտ թույլտվություն³⁷¹:

Խորհրդային իշխանության ուշադրությունից չվրիպեց Վլադիկավկազի հյուպատոսարանը: 1920թ. ապրիլին Հյուսիսսային Կովկասի հեղկոմի նախագահ Ս. Օրջոնիկիձեն, որը միաժամանակ խորհրդային իշխանության ներկայացուցիչն էր երկրամասում, ժամանեց Վլադիկավկազ³⁷²: Քաղաքում գործող զանազան պետությունների հյուպատոսները (պարսկական, լեհական, սերբական, հոլանդական, վրացական և հայկական) պարսկական հյուպատոսի միջոցով, որը ավագն էր, դիմեցին Օրջոնիկիձեին՝ իրենց ընդունելու խնդրանքով: Հանդիպման ժամանակ Օրջոնիկիձեն պարսկական հյուպատոսին հայտնեց, որ նրանից բացի ուրիշ ներկայացուցչի չի ճանաչում, քանի որ այն պետությունները, որոնց նրանք ներկայացնում էին, Ռուսաստանի հետ համաձայնության չեն եկել: Չնայած վերը ասվածին՝ Օրջոնիկիձեն ցանկացավ հանդիպել հայկական հյուպատոսի հետ³⁷³:

Հ. Սառիկյանի և Ս. Օրջոնիկիձեի հանդիպումը տեղի ունեցավ ապրիլի 8-ին,³⁷⁴ որին, իմիջիայլոց, մասնակցում էր Ս. Տեր-Գաբրիելյանը³⁷⁵: Օրջոնիկիձեն զրույցի ժամանակ Հ. Սառիկյանին հայտնեց, որ խորհրդային իշխանությունը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն ավելացրեց, որ մինչև հայ-ռուսական հարաբերությունները չկարգավորվեն Ռուսաստանի տարածքում գործող Հայաստանի Հանրապե-

³⁷¹ Տե՛ս Տոնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, էջ 56:

³⁷² Տե՛ս ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 127, ՀԱԱ, ֆ. 275, ց.4, գ. 10, թ. 22:

³⁷³ Տե՛ս ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 127:

³⁷⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց.4, գ. 10, թ. 22:

³⁷⁵ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», մարտի 26, N 72, Երևան, 1926:

տության ներկայացուցիչների լիազորությունները չեն ճանաչվի: Հ. Սատիկյանի այն հարցին, թե կարող է արդյոք Օրջոնիկիձեի ասածները հաղորդել Հայաստանի կառավարությանը իբրև խորհրդային իշխանության պաշտոնական տեսակետ, վերջինս պատասխանեց. «Ես՝ իբրև Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական իշխանության ներկայացուցիչ, խնդրում եմ Ձեզ հայտնել Ձեր կառավարությանը, որ նա անմիջապես բանակցություններ սկսի Ռուսաստանի հետ՝ հաշտություն կնքելու և փոխհարաբերությունները որոշելու, իսկ մինչ այդ պիտի դադարեցնեք Ձեր ֆունկցիաները (հյուպատոսի - Ս.Մ.)»³⁷⁶: Հ. Սատիկյանը խորհրդային իշխանության տրամադրած զինվորական ուղիղ հեռախոսագծով անմիջապես կապվեց Թիֆլիսի հետ՝ նպատակ ունենալով Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությանը հաղորդել Օրջոնիկիձեի հետ ունեցած հանդիպման արդյունքները: Խոսակցությունը ընթանում էր վրացի պաշտոնյայի միջոցով: Երբ Հ.Սատիկյանը հասավ այն մասին, թե Օրջոնիկիձեն առաջարկում է Հայաստանին բանակցության մեջ մտնել Ռուսաստանի հետ, խոսակցությունը վրաց պաշտոնյայի կողմից ընդհատվեց և, չնայած Հ.Սատիկյանի բազմաթիվ փորձերին, այլևս չվերականգնվեց³⁷⁷: Վերը ասվածից երեվում է, որ վրաց իշխանություններին ձեռնտու չէր հայ-ռուսական բարեկամական հարաբերություններ հաստատելու հեռանկարը:

Հեռախոսագծով անհաջողության հանդիպելուց հետո Հ. Սատիկյանը խորհրդային իշխանությունից ավտոմեքենա ստանալով՝ մեկնեց Թիֆլիս, ապա ապրիլի 25-ին հասավ Երևան և

³⁷⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց.4, գ. 10, թ. 22:

³⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

Հայաստանի իշխանություններին ներկայացրեց Օրջոնիկիձեի հետ ունեցած խոսակցության արդյունքները: Փաստորեն Հ.Սառիկյանի ջանքերի շնորհիվ Հայաստանի կառավարությունը հնարավորություն ստացավ ժամանակին տեղեկանալ Խորհրդային Ռուսաստանի առաջարկության մասին³⁷⁸: Մայիսի 7-ին Հ.Սառիկյանը արդեն վերադարձել էր Վլադիկավկազ³⁷⁹: Չնայած հյուպատոսարանը ապրիլի 9-ից փաստացիորեն փակվել էր, սակայն իրականում շարունակում էր գործել, իսկ հունիսի 12-ին, Հ.Սառիկյանի հավաստմամբ, պաշտոնապես վերաբացվեց³⁸⁰: Հայաստանի Հանրապետությունից վերադառնալուց հետո Հ.Սառիկյանը իր նամակներում և զեկույցներում ներկայանում էր արդեն ոչ թե Վլադիկավկազի հյուպատոս, այլ Թերեքի շրջանի Հայաստանի Հանրապետության հյուպատոս: Ամենայն հավանականությամբ Հայաստանում եղած ժամանակ Հայաստանի կառավարությունը Հ.Սառիկյանին նշանակել էր վերոհիշյալ շրջանի գլխավոր հյուպատոս:

Հ. Սառիկյանը Վլադիկավկազ վերադարձավ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանի ապրիլի 29-ի կարգադրությամբ, որտեղ նախարարը նրան հանձնարարել էր պարզել Թերեքի շրջանի Հայաստանի Հանրապետության հյուպատոսների դրությունը, մասնավորապես իմանալ արդյոք այդ շրջանների հայ համայնքները պատրաստ են են հոգալ հայկական հյուպատոսարանի ծախսերը. հակառակ դեպքում նախարարը լիազորել էր Հ. Սառիկյանին վերացնել հյուպատո-

³⁷⁸ Տե՛ս ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 128:

³⁷⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 465, թ. 32:

³⁸⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 28:

սարանները և նշանակել հյուպատոսի պաշտոնակատարներ, որոնք ստանձնելու էին հայկական շահերի պաշտպանությունը տեղական համայնքի ներկայացուցիչների հետ: Նրանք ենթարկվելու էին Հ. Սառիկյանին³⁸¹: 1920թ. հունիս-հուլիս ամիսներին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հանձնարարությունը կատարելու նպատակով Թերեքի հյուպատոսը հեռագրով և փոստով կապվեց ոչ միայն Թերեքի, այլև Հյուսիսային Կովկասի այլ շրջաններում իրենց գործունեությունը շարունակող Հայաստանի Հանրապետության հյուպատոսների և լիազորների հետ: Ջանազան շրջաններից ստացված տեղեկությունների շնորհիվ Հ.Սառիկյանին հաջողվեց պարզել Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականության մոտավոր թիվը:

Աղյուսակ N 3

Քաղաքներ և շրջաններ	Գաղթականների թիվը	Խնամք
Նովոռուսիյսկ	5.000	Նրանց 1/10 մասը չքավոր են
Եկատերինոդար	10.000	Մոտ կեսը կարիքավոր են, գործում է որբանոց՝ 170 որբով
Բոմանովսկ կամ Կավկազսկայա	6.000. որից 4.000 տաճկահայ, այդ թվում՝ 1.800 սասունցի	Գործում է որբանոց՝ 27 որբով
N 3 աղյուսակի շարունակությունը		
Արմավիր	12.000 գաղթական, որից 8.000-ը տաճկահայ	Գործում է որբանոց՝ 50 որբով

³⁸¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 7, թ. 6:

Ստավրոպոլ	300 հոգի	Գտնվում են հյուսյատոսի խնամքի տակ: Այդ գաղթականներից 100-ին կյութական օգնություն է տրվում
Սուրբ իսաչի շրջան	6.000 հոգի, որից 700-ը կաղզվանցի	-
Հանքային ջրերի և Գեորգիևսկի շրջան	5.000	Գործում է որբանոց՝ 30 որբերով
Վլադիկավկազ	1.200 հոգի, որից 500-ը արդեն ուղարկված են	220 հոգուն հաց է բաժանվում
Մոզդոկի շրջան	300	-
Գրոզնիի և Ղզլարի շրջաններ	2. Սառիկյանին չի հաջողվել տեղեկություններ գտնել, սակայն նա փաստում է, որ այս շրջանների գաղթականները մեծ մասամբ Շամախիից, Շուշիից և Բարվից են և օգնության կարիք չունեն	
Ընդամենը	45.800	-

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների թիվը 1920թ. մայիս-հունիս ամիսներին

Այսպիսով, մայիս-հունիս ամիսներին Հ.Սառիկյանի հավաստմամբ Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների թիվը մոտ 45.800 էր: Հյուսիսային Կովկասից բացի Հ.Սառիկյանին հաջողվել է նաև տեղեկություններ ստանալ Դոնի շրջանի մոտ 15.000 գաղթականի վերաբերյալ³⁸²:

Աղյուսակում հիմնականում ներկայացված է Հյուսիսային Կովկասի խոշոր քաղաքներում ապաստանած հայ գաղթականների թիվը, մինչդեռ հազարավոր գաղթականներ ապրում էին

³⁸² Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 465, թ. 32-33:

երկրամասի գյուղերում և կազակների ստանիցաներում: Հ.Սա-
ռիկյանին չի հաջողվել տեղեկություններ ստանալ Գրոզնիի հայ
գաղթականների թվաքանակի վերաբերյալ: Հայտնի է, որ Առաջին
աշխարհամարտի նախօրեին Գրոզնիում բնակվում էր 1.400
հայ³⁸³, իսկ 1920թ. նրանց թիվը հասել էր 5.000-ի³⁸⁴: Այսինքն 1914-
1920 թթ. ընթացքում Գրոզնիի հայերի թիվը 3600 հոգով ավելացել
էր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 1915-1917 թթ. ըն-
թացքում Հյուսիսային Կովկաս եկած հայ գաղթականները հիմ-
նականում ապաստանել են Կուրանում, կարծում ենք, որ 3.600
հոգին Գրոզնի են եկել 1918թ-ից հետո: Փաստորեն, եթե Հ. Սառիկ-
յանի հաշվարկին գումարենք միայն Գրոզնիի գաղթականների
թիվը, ապա կստացվի, որ 1920թ. մայիս-հունիս ամիսներին Հյու-
սիսային Կովկասի հայ գաղթականների թվաքանակը առնվազն
49.400 էր: Ռուսաստանում գաղթականների հարցերի լիազոր Պ.
Հովհաննիսյանը սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապե-
տության Արտաքին գործերի նախարարին ուղղված նամակում
նշում է, որ Հյուսիսային Կովկասում հայ գաղթականների թիվը
1920թ. օգոստոսին անցկացված հաշվառման արդյունքում հաս-
նում էր մինչև 90 հազարի³⁸⁵: Կարծում ենք, որ Պ. Հովհաննիսյանը
որպես աղբյուր օգտագործել է 1920թ. օգոստոսի 28-ին Ռուսաս-
տանում անցկացված Համառուսական ժողովրդագրական մար-
դահամարի տվյալները, ըստ որի Հյուսիսային Կովկասի (Կուրան-
Չեոնոմորիե նահանգ, Թերեք, Ստավրոպոլ) հայությունը 85.636

³⁸³ Տե՛ս Աнанян Ж., Хачатурян В., армянские общины России, с. 72, Հայ սփյուռք,
հանրագիտարան, էջ 468:

³⁸⁴ Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 468:

³⁸⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 469, թ. 225:

էր³⁸⁶: Այսինքն Պ. Հովհաննիսյանը Հյուսիսային Կովկասի գաղթականների անվան տակ նկատի է ունեցել նաև հնաբնակ հայերին: Ակնհայտ է, որ վերոհիշյալ մարդահամարի տվյալները չեն արտացոլել 1920թ. կեսերին երկրամասի հայության իրական թիվը:

Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հայ գաղթականների դրությունը ծանրացավ: Դրա հիմնական պատճառներից մեկը այն էր, որ Խորհրդային Ռուսաստանում մասնավոր առևտուրը՝ իր բոլոր ձևերով, չէր խրախուսվում և ավելին, հետապնդվում էր, նույնիսկ օրավարձով աշխատող բանվորները չէին կարող առանց այս կամ այն միությանը անդամագրվելու աշխատանք գտնել: Այս պարագայում ոչ խորհրդային պետական կազմավորումների իշխանության օրոք իր զլուխը այդ զբաղմունքներով պահող գաղթականությունը հայտնվեց անգործության մեջ³⁸⁷:

Խորհրդային իշխանության օրոք Հյուսիսային Կովկասի հայությունը հարկադրված էր մասնակցել առանց վարձատրության սլարտադիր աշխատանքների³⁸⁸, ինչը նրանց շրջանում դժգոհություն էր առաջացնում: Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության դրությունը բարդանում էր նաև տեղի բնակչության անբարյացակամ վերաբերմունքի հետևանքով, որի դրդապատճառները հիմնականում տնտեսական էին³⁸⁹: Երկրամասի տեղացի բնակչությունը հայ գաղթականությանը մեղադրում էր չարաշա-

³⁸⁶ Տե՛ս Ալեքսանյան Ն., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., ատենախոսություն, է.00.01 – «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, էջ 59:

³⁸⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 536, թ. 14:

³⁸⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 14:

³⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

հումների, թանկության և մթերքների պակասի մեջ³⁹⁰։ Կուրանում տեղացի բնակչության՝ հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքը բնութագրելու համար բավական է նշել այդ օրերին մամուլում, հասարակական վայրերում, վագոնների վրա գրված հետևյալ արտահայտությունը. «Վայ Ռուսաստանում հրեաներին, իսկ Կուրանում՝ հայերին»³⁹¹։ Խորհրդային իշխանությունն էլ, ելնելով Հյուսիսային Կովկասի տեղացի բնակչության՝ գաղթականության հանդեպ թշնամանքից և երկրամասում ստեղծված պարենային ծանր կացությունից, ցանկանում էր ազատվել գաղթականներից³⁹²։

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների դրությունը ավելի ծանրացավ, երբ Մոսկվայից Հյուսիսային Կովկաս եկած հայ բոլշևիկների գործունեության հետևանքով հունիսի վերջին փակվեցին երկրամասում իրենց գործունեությունը շարունակող Հայաստանի Հանրապետության հյուպատոսարանների և գաղթականական հարցերով զբաղվող ազգային կազմակերպությունների մեծ մասը։ Այսպես, 1920թ. հունիսի 19-ին և 26-ին փակվեցին Ստավրոպոլի և Արմավիրի հյուպատոսարանները և գաղթականական հարցերով զբաղվող հայկական կազմակերպությունները, իսկ հյուպատոսները և այդ մարմինների ղեկավարներն ու աշխատակիցները ձերբակալվեցին³⁹³։ Նույն ժամանակահատվածում փակվեցին նաև Հանքային ջրերի (Միներալնիե Վոդի) հյուպատոսարանը և Գրոզնիի փոխհյուպատոսարանը³⁹⁴։ Այդ ճակա-

³⁹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ. 33, գ. 607, թ. 13։

³⁹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 536, թ. 14, գ. 607, թ. 13։

³⁹² Տե՛ս նույն տեղում, գ. 536, թ. 14։

³⁹³ Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ. 28, 32, 33, գ. 562, թ. 7, գ. 594, թ. 4։

³⁹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ. 32։

տագրին արժանացան Եկատերինոդարի, Նովոռոսիյսկի և այլ շրջաններում գործող հայկական ազգային կազմակերպությունները: Դրանց փոխարեն բացվեցին Հայկական գործերի կոմիսարիատի բաժանմունքները, որոնց տնօրինության տակ անցավ լուծարված կազմակերպությունների գույքը և գումարը³⁹⁵: Երկրամասի որոշ շրջաններում հայ գործիչների ձեռքակալությունը առաջացրեց հնարնակ և գաղթական հայերի դժգոհությունը, որոնք փորձեցին ազատել ձեռքակալվածներին: Այդ ուղղությամբ առավել ակտիվ գործունեություն ծավալեց Ստավրոպոլի հայկական հյուպատոսի պաշտոնակատար Համագասպ Տիկիջինը³⁹⁶, որի լիազորությունները հունիսի 21-ին ճանաչեց տեղի խորհրդային իշխանությունը³⁹⁷: 1920թ. հունիսի 25-ին Հ. Տիկիջինին հաջողվեց վերաբացել Ստավրոպոլի հյուպատոսարանը, 29-ին՝ գրասենյակը, իսկ հուլիսի 2-ին ազատել հյուպատոսարանի գաղթականական բաժնի հաշվապահ Մուրադյանին³⁹⁸: Քանի որ Ստավրոպոլի հյուպատոս Ա.Քալանթարին ուղարկել էին Մոսկվա, Հ. Տիկիջինը չկարողացավ նրան օգնել, սակայն սուրհանդակի միջոցով Հայաստանի կառավարությանը տեղեկացրեց Ստավրոպոլի դեպքերի մասին՝ խնդրելով աջակցել Ա. Քալանթարին՝ մատնանշելով, որ դա հնարավոր է միայն Ստավրոպոլի հյուպատոսին իր պաշտոնից ետ կանչելու միջոցով³⁹⁹: Երբ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը ստացավ Հ. Տիկիջինի նամակը, օգոստոսի 14-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտա-

³⁹⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 28, 32-33 գ. 536, թ. 16:

³⁹⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 594, թ. 4:

³⁹⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 1:

³⁹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 5:

³⁹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 8:

կան ներկայացուցչին հրահանգեց Վրաստանում Խորհրդային Ռուսաստանի կառավարության ներկայացուցչին Հայաստանի կառավարության անունից Հ. Քալանթարին ետ կանչելու վերաբերյալ դիմում ուղարկել⁴⁰⁰: Խորհրդային Ռուսաստանում ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ Ե. Եղիազարյանը Մոսկվայից սեպտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղարկած զեկույցում նշում է, որ Ստավրոպոլի հյուպատոս Ա. Քալանթարը և Գրոզնիի հյուպատոս Սարուխանյանը իրենց պահանջով ազատվել են⁴⁰¹:

Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հայ բոլշևիկները և նրանց կողմից ստեղծված կառույցները երկրամասի հնաբնակ և գաղթական հայության շրջանում խորհրդային գաղափարներ տարածելու և Դաշնակցությանը վարկաբեկելու նպատակով ակտիվ քարոզչություն սկսեցին: Այդ նպատակին ծառայեցվեցին երկրամասում վերաբացված հայկական թերթերը⁴⁰² («Բանվորի ձայն», «Բանվորի կարիք»՝ Արմավիրում, «Կարմիր աստղ»՝ Եկատերինոդարում (Կրասնոդարում)՝ և այլն⁴⁰³): Օրինակ, «Կարմիր աստղ» թերթը հրատարակվել է 1920-1921թթ. Կրասնոդարում, շաբաթը երեք անգամ, երեք հազար օրինակով: Այնտեղ աշխատում էին Վ. Մալունցյանը, Ա. Բարսայանը,

⁴⁰⁰ Տե՛ս նույն տեղում թ. 13:

⁴⁰¹ Տե՛ս նույն տեղում, գ. 562, թ. 8:

⁴⁰² Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ.28, Армяне Ставрополя и Терека, под общей редакцией канд. ист. наук. В. Акопяна, Пятигорск, с. 16:

^{*} 1920թ. դեկտեմբերին 7-ին Եկատերինոդարը անվանափոխվեց Կրասնոդար (տե՛ս «Կարմիր աստղ», 1920, դեկտեմբեր, N 38):

⁴⁰³ Տե՛ս մանրամասն Армяне Ставрополя и Терека, под общей редакцией канд. ист. наук. В. Акопяна, Пятигорск, с. 226, Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., էջ 177:

Գ. Փոթոզյանը և այլոք: Նրանց նպատակն էր Կուբանի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների համախմբումը և նրանց մեջ խորհրդային գաղափարների տարածումը⁴⁰⁴:

Հյուսիսային Կովկասի հայ բոլշևիկները ջանքեր էին գործադրում հայ գաղթականներից զինվորական խմբեր կազմակերպելու և Հայաստան ուղարկելու ուղղությամբ. Բիարկե, ոչ թե հայկական բանակին օգնելու, այլ նրա դեմ պայքարելու նպատակով: Նրանց գործունեության մասին 1920թ. հուլիսի 8-ին Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին ուղղված զեկույցում Հ. Մառիկյանը գրում է. «Սրանց (հայ բոլշևիկների - Ս.Ս.) ջանքերը – հայ գաղթականներից զինված խմբեր կազմակերպել և ուղարկել Հայաստան, դեռ կատարեալ անյաջողութեան են հանդիպում. Միայն դարաբաղցիներից է յաջողվել մի քանի հարիուրեակներ կազմել. այն էլ մասնակցողներից մեծամասնութեան նպատակն է եղել այդ ձևով տուն – Ղարաբաղ հասնել, ուրիշ ոչինչ: Սակայն աշխատողների եռանդը չի պակասում, և եթե չէք ուզում մի օր մեր գաղթականութեանը ծառայած տեսնել մեր մանուկ հանրապետութեան դեմ, պիտի օր առաջ նրան երկիր բերել»⁴⁰⁵:

1920թ. ապրիլին սկսված լեհ-ռուսական պատերազմի, Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ծայր առած ապստամբությունների և 1920թ. օգոստոսին Կուբանում Վրանգելի զորքերի դեսանտի իջեցման հետևանքով խորհրդային իշխանության տարածքում սկսվեց գորակոչ, որը

⁴⁰¹ Ст' у Армяне Ставрополя и Терека, под общей редакцией канд. ист. наук. В. Акоюна, с. 226:

⁴⁰⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 28:

տարածվեց նաև Հյուսիսային Կովկասի հնարնակ և գաղթական հայության վրա⁴⁰⁶:

Երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920թ. հունիս-հուլիս ամիսներին տեղեկացավ Հյուսիսային Կովկասի հայության գորակոչի մասին, փորձեց կանխել այն: Օրինակ, Սոչիի շրջանի հայության իրավունքները պաշտպանելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը 1920թ. հուլիսին 17-ին կարգադրեց Տ. Բեկզադյանին վերականգնել Ա. Հակոբյանի լիազորությունները, որն էլ հուլիսի վերջին Ա. Հակոբյանին նշանակեց Սոչիի շրջանի փոխհյուպատոս⁴⁰⁷: Սակայն Ա. Հակոբյանին չհաջողվեց գորակոչից պաշտպանել Սոչիի շրջանի հայությանը: Ավելին, հալածվելով բոլշևիկների կողմից՝ նա և հյուպատոսարանի քարտուղար Հակոբ Թողլաքյանը ստիպված հեռացան շրջանից⁴⁰⁸: Բոլշևիկները ձերբակալեցին նաև Հայոց ազգային խորհրդի (որը վերանվանվել էր գյուղացիական միության) նախագահ Վաղարշակ Մինասյանցին և այլ գործիչների, գլխավորապես՝ դաշնակցականների⁴⁰⁹: Շարունակվեց նաև Սոչիի շրջանի հայերի գորակոչը⁴¹⁰:

⁴⁰⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 536, թ.15, Кратова Н., Формирование повстанческих отрядов на территории Кубано-Черноморской области в 1920–1922 гг., "Гуманитарная мысль Юга России", региональный научный журнал, Краснодар, 2006, N 1, с. 117:

⁴⁰⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 536, թ. 19, 21, 28:

⁴⁰⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 28:

⁴⁰⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց.3, գ. 4, թ. 87 ց.1, գ. 607, թ. 54:

⁴¹⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 607, թ. 54:

3.2 Հայ գաղթականների հայրենադարձության հետագա ընթացքը

1920թ. գարնանը Հյուսիսային Կովկասի խորհրդայնացումից հետո երկրամասի հայ գաղթականների դրության վատթարացումը և նրանց շրջանում իրականցվող հակադաշնակցական քարոզչությունը ստիպեցին Հայաստանի կառավարությանը միջոցներ ձեռնարկել նրանց Հայաստան տեղափոխելու համար⁴¹¹: Հայաստանի կառավարությունը հրահանգեց Մոսկվա մեկնող Լևոն Շանթի պատվիրակությանը Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունների ընթացքում քննարկել նաև այդ երկրում ապրող հայերի՝ Հայաստան տեղափոխվելու հարցը⁴¹²: Բանակցությունների ընթացքում Խորհրդային Ռուսաստանը համաձայնվեց թուլափորել երկրում ապաստանած հայ գաղթականներին և ընդհանրապես բոլոր հայերին իրենց ամբողջ շարժական ունեցվածքով փոխադրվել Հայաստան: Սակայն Մոսկվայի բանակցությունների ընդհատվելու հետևանքով վերոհիշյալ խնդրի վերաբերյալ գրավոր համաձայնություն չստորագրվեց:

Մոսկվայից Լևոն Շանթի գլխավորած պատվիրակության մեկնելուց հետո Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականությանը Հայաստան տեղափոխելու խնդրով Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունները շարունակեց սեպտեմբերի 2-ից իր պարտականությունների կատարմանը պաշտոնապես անցած Խորհրդային Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության

⁴¹¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց.4, գ. 4, թ.81:

⁴¹² Տե՛ս Գ. Լազյան, Հայաստանը և հայ դատը, Հայ և ռուս հարաբերություններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 231:

Ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ Ե. Եղիազարյանը: Նա դիմեց Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմին՝ խնդրելով աջակցել հայ գաղթականների հայրենադարձությանը: Քանի որ Խորհրդային Ռուսաստանում գաղթականների տարհանմամբ զբաղվում էր Ցենտրեվակը՝ գերիների և գաղթականների տարհանման կենտրոնական կոմիտեն, ապա արտաքին գործերի ժողկոմը Ե.Եղիազարյանին ուղարկեց այնտեղ: Ցենտրեվակում նրան հաղորդեցին, որ հայ գաղթականների՝ հայրենիք ուղարկելու խնդիրը արդեն ներառված է տարհանման ծրագրի մեջ: Սակայն Ե. Եղիազարյանը տեղեկացրեց Ցենտրեվակին, որ իր ձեռքի տակ եղած տեղեկությունների համաձայն Հյուսիսային Կովկասում այդ ուղղությամբ քիչ բան է արվում: Այնուհետև դիմելով Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմին՝ Ե. Եղիազարյանը խնդրեց անհապաղ միջոցներ ձեռնարկել բոլոր հայերի տարհանման համար, որի տակ պետք է հասկանալ՝ 1.Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի բոլոր գաղթականներին, 2. բոլոր թուրքահպատակ հայերին, այդ թվում և ռազմագերիներին, 3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, 4. մտավորականությանը: Մոսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցությունների ընթացքում քաղաք եկավ Միբիբի հայերի պատվիրակությունը և խնդրեց Ե. Եղիազարյանին խորհրդային իշխանությունից հայրենիք մեկնելու թույլտվություն ստանալ Օմսկի ու Իրկուտսկի 1.500 հայերի համար:

Ե. Եղիազարյանի հավաստմամբ հայ-ռուսական բանակցությունների արդյունքը եղավ այն, որ խորհրդային իշխանությունը թույլատրեց հայ գաղթականների տարհանումը, որը պետք է իրականանար հետևյալ հաջորդականությամբ. առաջին հերթին

պետք է ուղարկվեին Հյուսիսային Կովկասի գաղթականները, ապա՝ Սիբիրի, հետո՝ Կենտրոնական Ռուսաստանի և Ուկրաինայի: Ռուսաստանի տարածքով հայ գաղթականների տեղափոխությունը իրականացնելու էր Ցենտրեվակը:

Հյուսիսային Կովկասի գաղթականների տարհանումը իրականացվելու էր Ռազմավիրական ճանապարհով, Սիբիրի գաղթականներինը՝ Վոլգա-Բաքու ողողությամբ: Կենտրոնական Ռուսաստանի և Ուկրաինայի գաղթականները պետք է ուղարկվեին Նովոռոսիյսկ, որտեղից էլ Հայաստանի կառավարության վարձած նավերով՝ Բաթում:

Խորհրդային իշխանությունը թույլատրեց Ռուսաստանից Հայաստանի Հանրապետություն մեկնել միայն հայ գաղթականներին: Ինչ վերաբերում է Ռուսաստանում աշխատող հայ մասնագետներին Հայաստան տեղափոխելուն, ապա խորհրդային իշխանությունը համաձայն չէր դրան՝ պատճառաբանելով, որ նրանց տարհանումը կվնասի Ռուսաստանի տնտեսությանը: Ե. Եղիազարյանին հաջողվեց նաև խորհրդային իշխանությունից ստանալ և սեպտեմբերի 6-ին Պ. Հովհաննիսյանին ուղարկել նրա վկայականը, որի համաձայն վերջինս նշանակվում էր Հյուսիսային Կովկասում գաղթականների տարհանման լիազոր⁴¹³:

Հայ-ռուսական բանակցությունների ժամանակ Ե. Եղիազարյանը անդրադարձել էր նաև Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հպատակների իրավունքների ճանաչման և պաշտպանության հարցին: Վերջին խնդրի հայանպաստ լուծումը հնարավորություն կտար երկրամասում գորակոչի ենթակա և Կարմիր բանակում ծառայող հազարավոր

⁴¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 562, թ. 7-9:

հայերին ազատել ծառայությունից և ուղարկել հայրենիք: Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հպատակների իրավունքների ճանաչումը հնարավորություն կտար ազատել նաև Ռյազանի, Կոստրոմայի համակենտրոնացման ճամբարներում գտնվող հայերին, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների գորքեր գորակոչված հայերը, ինչպես նաև նրանք, ովքեր առհասարակ այդ գորքերում չէին ծառայել⁴¹⁴: Այս ուղղությամբ Ե. Եղիազարյանի գործադրած ջանքերը անարդյունք մնացին:

Մինչ Լևոն Շանթի պատվիրակությունը և Ե. Եղիազարյանը խորհրդային իշխանության հետ Մոսկվայում Ռուսաստանի հայերի ներգաղթը կազմակերպելու ուղղությամբ բանակցություններ էին վարում, Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներից շատերը մայիսի սկզբից, երբ կարգավորվեցին Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի հարաբերությունները ու բացվեց այդ պետությունների սահմանը, սկսեցին Ռազմավիրական ճանապարհով հեռանալ Հայաստան⁴¹⁵:

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված հունիսի 11-ի նամակում գրում է. «Հյուսիսային Կովկասում գտնվող հայ գաղթականների և նույնիսկ նախկին բնակիչների մեջ արդեն սկսվել է ներգաղթի հոսանքը դեպի հայրենիք: Ծանապարհների անկանոն լինելու պատճառով տեղական իշխանությունները

⁴¹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 7:

⁴¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 465, թ. 188 գ. 529, թ. 23, ֆ. 275, ց. 4, գ. 10, թ. 19:

դժվարությամբ են տալիս անցաթղթեր, ուստի և ներգաղթը դեռ լայն ծավալ չի կարող ստանալ. հենց որ ճանապարհները կանոնավորվեն, պ. Մառիկյանի կարծիքով, սկսվելու է հսկայական ներգաղթը, Սովետական իշխանությունը դրան ոչ միայն չի խանգարելու, այլ խոստանում է իր կատարյալ աջակցությունը իր սահմաններում:

Այսբանը հայտնելով խնդրում եմ կարգադրել խնամատարության նախարարությանը, որ միջոցներ ձեռնարկի գաղթականներին ընդունելու համար»⁴¹⁶:

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության ներգաղթը կազմակերպելու համար Թերեքի հյուպատոս Հ.Մառիկյանը 1920թ. հունիսին կազմեց մի ծրագիր, որի համաձայն Հյուսիսային Կովկասի հայ գաղթականները ուտքով, սայլերով և ֆուրգոններով պետք է Ռեզմավիրական ճանապարհով շարժվեին Վրաստան, ապա Մցխեթից՝ երկաթուղիով Հայաստան: Քանի որ ներգաղթը պահանջում էր զգալի ֆինանսական միջոցներ, իսկ Հայաստանի կառավարությունը ի վիճակի չէր այդ միջոցները տրամադրել, Հ. Մառիկյանը դիմեց տեղի խորհրդային իշխանությանը՝ խնդրելով աջակցել գաղթականների հայրենադարձությանը: Թերեքի խորհրդային իշխանությունը ընդառաջեց Հ.Մառիկյանի խնդրանքին և տեղական գերիների ու գաղթականների հանձնաժողովի միջոցով զգալի ֆինանսական օժանդակություն ցույց տվեց: Սակայն հունիսի կեսերին Ս. Օրջոնիկիձեն արգելեց Թերեքի երկրամասի գաղթականներին առհասարակ նպաստ տալ և ներքին գործոց կոմիսարի միջոցով պահանջեց տասն օրվա ընթացքում Թերեքի շրջանն ազատել գաղթականներից՝ ինչ ձևով

⁴¹⁶ Նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 469, թ. 159:

և միջոցով ուզում է լինի: Ամենայն հավանականությամբ Ս. Օրջոնիկիձեն վերոհիշյալ որոշմամբ ցանկանում էր օր առաջ ազատվել խորհրդային իշխանությունից զգալի միջոցներ խլող գաղթականությունից: Կազմակերպելով մեծ քանակությամբ հայերի հոսքը Վրաստան և Հայաստան՝ Ս. Օրջոնիկիձեն ցանկանում էր նաև նրանց հետ զգալի թվով բուլշևիկներ ուղարկել, ինչը կհեշտացներ այդ երկրներում խորհրդային գաղափարների տարածմանը:

Վրաստանի կառավարությունը հունիսի 24-ին հրամայեց փակել Ռազմավիրական ճանապարհով այլազգիների մուտքը երկիր: Վրաց կառավարության վերոհիշյալ հրամանի հետևանքով Թերեքից 10 օրվա ընթացքում հայ գաղթականներին հեռացնելու մասին Ս. Օրջոնիկիձեի հրամանը անհնար եղավ իրագործել⁴¹⁷: Վրաստանի իշխանությունները սահմանի փակումը պատճառաբանում էին բուլշևիկների մուտքը Վրաստան արգելելու և Թիֆլիսը պարենավորման ու բնակարանային դժվարություններից ազատելու ցանկությամբ⁴¹⁸: Կային նաև այլ պատճառներ: Վրաց կառավարությունը գիտակցում էր, որ տասնյակ հազարավոր հայերի ներգաղթը Հայաստան ժողովրդագրական, ռազմական և տնտեսական տեսանկյունից կհզորացնեին երկիրը, ինչը ձեռնտու չէր Հայաստանի Հանրապետությունից տարածքային հավանություններ ունեցող Վրաստանի իշխանություններին⁴¹⁹: Վրաց կառավարության՝ գաղթականների առջև սահմանը փակելու պատճառով իրենց հայրենի բնակավայրերը չէին կարողանում

⁴¹⁷ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 465, թ.34, գ. 607, թ.13:

⁴¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 607, թ. 30:

⁴¹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 30-31:

վերադառնալ Հյուսիսային Կովկասում ապաստանած Ախալքալաքի և Ախալցխայի գաղթականները:

1920թ. հունիսի վերջին Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների հայրենադարձության խնդիրները քննարկելու համար Հ.Սառիկյանը Տ.Բեկգաղյանի և Դ.Դավիթխանյանի հրավերով մեկնեց Թիֆլիս⁴²⁰: Թերեքի հյուպատոսը ներկայացրեց Հյուսիսային Կովկասում հայ գաղթականների ծանր կացությունը և նրանց հայրենադարձության կազմակերպման անհրաժեշտությունը⁴²¹: Հուլիսի 1-ին Վլադիկավկազի հյուպատոսի պաշտոնակատար Սարգիս Յարալովին Տ. Բեկգաղյանի գրած նամակից տեղեկանում ենք, որ Վրաստանի կառավարությունը թույլատրել է տրանզիտով Հայաստան տեղափոխել միայն 300 գաղթական⁴²²:

Փաստորեն 1920թ. հունիսի վերջին և հուլիսին Ռազմավիրական ճանապարհով հայության հոսքը Վրաստան դադարեց: Չնայած դրան՝ Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից Վլադիկավկազ եկող գաղթականները օր-օրի ավելանում էին⁴²³: Հուլիսի վերջին հայ գաղթականների թիվը Վլադիկավկազում հասել էր 4.000-ի (մայիս-հունիս ամիսներին քաղաքում ապաստանել էին 1.200 հոգի): Միջոցների բացակայության պատճառով Հ. Սառիկյանը չկարողացավ օգնել նրանց, և եղան սովամահության դեպքեր: Գաղթականներին օգնելու նպատակով 1920թ. հուլիսին Վլադիկավկազ ժամանեց Ցենտրեվակի լիազոր Սահակ Նանուշյանցը, որը կենտրոնից հրահանգներ ուներ Խորհրդային Ռուսաստանի միջոցներով գաղթականներին ուղարկել Բաքու-Նավթլուղ-Ալեք-

⁴²⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց.4, գ. 4, թ. 92, 93:

⁴²¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 465, թ. 31, 34:

⁴²² Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց.4, գ. 5, թ. 18:

⁴²³ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 26:

սանդրապոլ ուղղությամբ: Նման հրահանգներով Մոսկվայից Պյատիգորսկ ժամանեց Նարիման Տեր-Ղազարյանը (Ղազարովը)⁴²⁴: Նրանց գործունեության վերաբերյալ տեղեկություններ չկան:

1920թ. հուլիսի 28-ին Տ. Բեկզադյանը վրաց կառավարությունից թույլտվություն ստացավ Վրաստանի տարածքով 4000 հայ գաղթականներ տեղափոխելու⁴²⁵: Խոսքն, իհարկե, Վլադիկավկագում կուտակված 4.000 հայ գաղթականների մասին էր: Այդ թույլտվությունը ուղեկցվում էր հետևյալ կետերով. 1. Վրաստանի տարածքով գաղթականների տեղափոխության ծախսերը հոգալու էր Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը:

2. Գաղթականները Վլադիկավկազից պետք է ուղարկվեին շարասյուներով, շաբաթը երեք շարասյունից ոչ ավելի: Շարասյուններից յուրաքանչյուրում պետք է լինեին 500 հոգի: Գաղթականների ցուցակները պետք է հաստատեին Վլադիկավկազի հայ և վրաց հյուպատոսները ու Վրաստանի ներքին գործերի նախարարը: 3. Ծերերի, երեխաների և գաղթականների իրերի փոխադրումը կատարվելու էր ֆուրգոններով: Յուրաքանչյուր շարասյան համար նախատեսվում էր 15 ֆուրգոն, առողջ գաղթականները ճանապարհը պետք է ոտքով անցնեին: 4. Վլադիկավկազից հեռացող գաղթականները հայկական հյուպատոսից ստանալու էին 10 օրվա սննդի պաշար: 5. Ռազմավիրական ճանապարհով գաղթականների շարժվելու ընթացքում Լարսում, Մլետախում և Մցխեթում պետք է կազմակերպվեին բժշկասանիտարական և սննդի

⁴²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 22:

⁴²⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 24:

կետեր, որոնց ծախսերը պետք է հոգար Վրաստանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունը: 6. Վրաստանի սահմանին գաղթականների հետ կապված խնդիրները լուծելու համար պետք է այնտեղ գործուղվեր Վրաստանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության հատուկ լիազորը: 7. Մցխեթից գաղթականները պետք է հատուկ վագոններով մեկնե՛ին Սանահին՝ առանց Թիֆլիսում կամ Վրաստանի տարածքում կանգնելու: 8. Գաղթականներին Սանահին բերած վագոնները պետք է նույն օրը ուղարկվե՛ին Վրաստան⁴²⁶:

Հ. Սառիկյանը կարծում էր, որ 4.000 գաղթականների ներգաղթը մինչև օգոստոսի վերջը կավարտվի, որից հետո հուլիսի 19-ին ԱԳ նախարարին գրած իր դիմումի համաձայն կազատվի Թերեքի հյուպատոսի պաշտոնից և կտեղափոխվի Հայաստան կամ մեկ այլ տեղ: Սակայն իրադարձությունները այլ ընթացք ունեցան:

Օգոստոսի սկզբին խուզարկվեցին և ձերբակալվեցին Վլադիկավկազի հյուպատոսը և հյուպատոսարանի աշխատակիցները: Հ. Սառիկյանի կարծիքով այդ ձերբակալությունները կապված էին Ջանգեզուրի շրջանում տեղի ունեցող դեպքերի հետ⁴²⁷: Բանտարկվեցին նաև պարսկական հյուպատոսը և հյուպատոսարանի բոլոր պաշտոնյաները⁴²⁸: Վլադիկավկազի հայկական հյուպատոսի և հյուպատոսարանի աշխատակիցների ձերբակալության կապակցությամբ Տ. Բեկզադյանը բողոքեց Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանին,

⁴²⁶Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ.119:

⁴²⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ.34-35:

⁴²⁸ Տե՛ս ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 129:

որն էլ 1920թ. օգոստոսի 16-ին պատասխանեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին, որ Վլադիկավկազի հյուպատոսի ազատ արձակելու մասին կարգադրությունն արդեն արված է⁴²⁹: Եվ, իրոք, օգոստոսի 15-ին խորհրդային իշխանությունն ազատեց Հ. Մառիկյանին և Վլադիկավկազի հյուպատոսարանի մնացած աշխատակիցներին: Հյուպատոսարանը և ձերբակալվածների բնակարանները կնքված մնացին մինչև օգոստոսի 18-ը⁴³⁰: Օգոստոսի 19-ից Վլադիկավկազի հյուպատոսարանը վերսկսեց իր աշխատանքը: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ գաղթականներին հայրենիք ուղարկելու համար անհրաժեշտ թղթաբանության հետևանքով Վլադիկավկազի հյուպատոսարանին օգոստոս ամսվա ընթացքում հաջողվեց հայրենիք ուղարկել գաղթականների միայն մեկ շարասյուն՝ բաղկացած 564 հոգուց⁴³¹: Սեպտեմբերի 1-ին և 3-ին Հայաստան ուղարկվեցին ևս երկու շարասյուն՝ կազմված 270 և 500 գաղթականներից⁴³²: Փաստորեն 1920թ. օգոստոսին և սեպտեմբերի սկզբին Վլադիկավկազից Հայաստան մեկնեցին 1334 գաղթական:

Վլադիկավկազում հավաքված 4.000 գաղթականների տարհանմանը զուգահեռ Ռուսաստանի տարբեր շրջաններից քաղաք էին գալիս գաղթականների նորանոր խմբեր: Դրանց տեղափոխությունը Հյուսիսային Կովկասի զանազան շրջաններից Վլադիկավկազ իրականացնում էր Ցենտրեվակը և դրա տեղական

⁴²⁹ Տե՛ս ՆԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 465, ք.36:

⁴³⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց.4, գ. 10, ք.34-35:

⁴³¹ Տե՛ս նույն տեղում, գ. 9, ք.17:

⁴³² Տե՛ս նույն տեղում, գ. 13, ք. 30:

բաժանմունքները⁴³³: Այդ կառույցը գաղթականներին ապահովում էր գումարով և մթերքով⁴³⁴: Հ. Սառիկյանը իր հուշերում գրում է. «Նա (խորհրդային իշխանությունը - Ս.Մ.) մինչև այս յիշատակարանը կազմելու օրս էլ մնաց սրտացաւ բարեկամ մեր գաղթականութեան՝ նրան տրամադրելով բնակարաններ, շատ յաճախ մթերքներ, իսկ դեպի Տփլիս վերադառնալիս՝ նաև դրամական նպաստ ու ճանապարհային ավիուր՝ 10 օրվայ համար»⁴³⁵: Հայ գաղթականների ներգաղթին աջակցում էր նաև Էրատովի հատուկ հանձնաժողովը, որը սեպտեմբերին գտնվում էր Վլադիկավկազում և ջանքեր էր գործադրում Ռազմավիրական ճանապարհով գաղթականներին ուղարկելու և քաղաքում նրանց համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու համար⁴³⁶: Հայաստան ուղևորվող գաղթականներին օգնեցին երկրամասի հայկական գործերի կոմիսարիատի բաժանմունքները և տեղական խորհրդային իշխանությանը կից գործող հայկական կառույցները⁴³⁷: Արխիվային նյութերում տեղեկություններ են պահպանվել Թերեքի հայ գաղթականների տարհանման արտակարգ հանձնաժողովի գործունեության մասին⁴³⁸: Ստավրոպոլի հյուպատոսի տեղակալ Հ. Տիկիջիևի հավաստմամբ այդ կառույցը ստեղծել էին Կիսլովոդսկի հայ կոմունիստները, հետևաբար այն գտնվում էր Կիսլովոդսկում: Թերեքի հայ գաղթականների տար-

⁴³³ Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 45:

⁴³⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 469, թ. 225:

⁴³⁵ ԳԱԹ, Հ. Սառիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 109:

⁴³⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 469, թ. 225:

⁴³⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275. ց. 4 գ. 15, թ. 5, 58:

⁴³⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 62:

հանման արտակարգ հանձնաժողովի գործերին մասնակցում էր նաև Պ. Հովհաննիսյանը⁴³⁹:

Թվարկված կառույցների ջանքերով օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին միայն Արմավիրից Վլադիկավկազ ուղարկվեց գաղթականների 3 շարասյուն, ընդհանուր առմամբ 4.160 հոգի⁴⁴⁰: Սեպտեմբերին Վլադիկավկազ հասավ ևս մի շարասյուն՝ 1.500 գաղթականով, որը ուղարկվել էր Կավկասյանից: Այնտեղ մեկնման հրահանգին էին սպասում ևս 3.500 հոգի⁴⁴¹: Այսպիսով, Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի տարբեր շրջաններից Վլադիկավկազ շարժվող գաղթականության հսկայական հոսքի հետևանքով սեպտեմբերի 4-ին Վլադիկավկազում գաղթականների թիվը հասել էր 10.000-ի⁴⁴², իսկ սեպտեմբերի վերջին՝ 12.000-ի⁴⁴³: Փաստորեն Վրաստանով Հայաստան պետք է անցներ ոչ թե 4.000, այլ արդեն 12.000 գաղթական:

Սեպտեմբերի 4-ին վրաց կառավարությունը արգելեց Արմավիրից եկած գաղթականների շարասյուններին անցնել սահմանը⁴⁴⁴: Նոր եկած գաղթականների շարասյունների մուտքը Վրաստան թույլ տալու համար Հ. Սառիկյանը անմիջապես մեկնեց Թիֆլիս, ապա՝ Հայաստան⁴⁴⁵: Վլադիկավկազում նրա կողմից Թերեքի հյուպատոսի ժամանակավոր պաշտոնակատար նշանակված Հակոբ Տեր-Գևորգյանը գաղթականների նոր հոսքը քա-

⁴³⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ 200, ց.1, գ. 564 թ. 7:

⁴⁴⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ 275, ց.4, գ. 4, թ. 162, 171, ֆ 275, ց.4, գ. 9, թ. 18:

⁴⁴¹ Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 59:

⁴⁴² Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ.45, գ.13, թ. 31

⁴⁴³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 469, թ. 225, «Կարմիր աստղ», սեպտեմբերի 26, N12, 1920:

⁴⁴⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275 ց.4, գ. 13, թ. 31

⁴⁴⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 32, գ. 4, թ. 169 :

դաք կասեցնելու նպատակով սեպտեմբերի 4-ին և սեպտեմբերի 8-ին Գրոզնիի գաղթականական հանձնաժողովի նախագահ Չովսեփյանցին և Կավկազսկի խուտորի հայկական գաղթականական կոմիտեի նախագահին խնդրում է առժամանակ չուղարկել գաղթականներ⁴⁴⁶: Քանի որ վրաց կառավարության արգելքը վերաբերում էր միայն նոր եկած շարասյունների գաղթականներին, ապա հուլիսի վերջին, հայ-վրացական պայմանավորվածությամբ, Վլադիկավկազի 4.000 գաղթականների նախատեսված ներգաղթը շարունակվեց: Սեպտեմբերի 4-8-ը ընկած ժամանակահատվածում Հայաստան մեկնեց գաղթականների 583 հոգանոց շարասյունը և նախապատրաստվեց հաջորդը՝ 1920թ. սեպտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Խնամատարության և աշխատանքի նախարարության Վրաստանի և Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչ Դ.Դավիթխանյանը Հ. Սառիկյանին գրում է, որ վրաց կառավարության որոշմամբ Հայաստան մեկնող գաղթականների ցուցակները այլևս կարիք չկա ուղարկել Թիֆլիս՝ Վրաստանի ներքին գործերի նախարարի հաստատմանը: Վրաստանի սահմանը անցնելու համար գաղթականներին անհրաժեշտ էր միայն վրաց հյուպատոսի կնիքը⁴⁴⁷: Վրաց կառավարության այս որոշումը էապես պարզեցրեց սահմանը անցնելու բարդ գործընթացը, որի շնորհիվ գաղթականների խմբերը ավելի հեշտ ու արագ սկսեցին ուղարկվել: Արդեն սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի

⁴⁴⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 169, գ. 5, թ. 29, գ. 13, թ. 31, 33:

* N 772 հեռագրի վրա ամսաթիվ չկա, սակայն N 770 հեռագիրը ուղարկվել է սեպտեմբերի 4-ին, իսկ N 773-ը սեպտեմբերի 8-ին, որից էլ կարելի է եզրակացնել, որ N 772 հեռագիրը ուղարկվել է սեպտեմբերի 4-8 ընկած ժամանակահատվածում (տե՛ս ֆ. 275, ց. 4 գ. 13, թ. 31-33):

⁴⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 7, թ. 101:

սկզբին 4.000 գաղթականներից եթե ոչ բոլորը, ապա հիմնական մասը հետացել էր Վլադիկավկազից: Քանի որ ներգաղթը իրականանում էր խորհրդային կառույցների գործուն մասնակցությամբ, անհնար էր խուսափել գաղթականության շրջանում նրանց կողմից իրականացվող քարոզչությունից: Արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզվեց, որ հայրենիք մեկնող գաղթականների շարասյուններում զգալի թվով հայ կոմունիստներ կային: Նրանք Վրաստանի և Հայաստանի սահմանը անցնելուց հետո իշխանությունների և գաղթականների կողմից հալածվում էին և նույնիսկ սպանվում: Նմանատիպ միջադեպերի վերաբերյալ տեղեկությունները հասնում էին Հյուսիսային Կովկաս՝ առաջացնելով երկրամասի հայ կոմունիստների և խորհրդային իշխանության դժգոհությունը: Հոկտեմբերի 4-ին Թերեքի հայկական հյուպատոսի պաշտոնակատար Հ. Տեր-Փետրոսյանը Ս. Բեկզադյանին գրում է. «Այստեղի հայ կոմունիստների մեջ լուրեր են տարածել, որ իբր թե այստեղից անցնող գաղթականների խմբերը Ռազմավիրական ճանապարհով սովետական սահմանը անցնելուց հետո հայ կոմունիստներին ջարդի են ենթարկում: Ավելի հաստատ լուրեր կա, որ երկու հայ կոմունիստներ, որոնք այստեղից մեկնել են Հայաստան, ամբոխի ձեռքով սպանված են Սանահինի կայարանում: Որքան ճիշտ են այդ լուրերը ես հնարավորություն չունեմ ստուգելու, բայց այդ վերաբերմունքը դեպի մի քանիսը կոմունիստներից կարող են շատ վատ հետևանք ստեղծել մնացորդ տասնյակ հազար գաղթականության համար Հյուսիսային Կովկասում և առաջ բերել նույն գործողությունը խորհրդային իշխանության կողմից թե դեպի ինձ և թե դեպի բոլոր հայ աշխատակիցները, հյուպատոսարանում մասնավոր պաշտոնյաները և

անհատները: Խնդրում եմ անհապաղ ստուգել բոլոր հավանական պրովոկացիոն լուրերը և առանձին գրությունով հայտնել ինձ, որքան ճիշտ են նրանք, եղել են այդպիսի դեպքեր, թե ոչ, ինչ միջոցների եք դիմել»⁴⁴⁸:

Հոկտեմբերի սկզբին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Բեկզադայանի շնորհիվ հնարավոր եղավ Վրաստանի կառավարությունից ստանալ իր տարածքով 4.000 գաղթականից բացի ևս 10.000 գաղթական տեղափոխելու թույլտվությունը: Արդեն հոկտեմբերի 10-ին Վլադիկավկազից Վրաստան մեկնեցին Արմավիրի առաջին շարայան երկու խումբ՝ ընդհանուր առմամբ 833 հոգի, իսկ երրորդ՝ 500 հոգուց բաղկացած խումբը, նախապատրաստվեց ուղարկման⁴⁴⁹: Հոկտեմբերի 11-ի դրությամբ Վլադիկավկազի գաղթականների թիվը 6 հազար էր: Եթե այս թիվը հանենք սեպտեմբերի վերջին քաղաքում գտնվող 12 հազարից, կստացվի, որ հուլիսի վերջից մինչև հոկտեմբերի 10-ը Վլադիկավկազից Ռազմավորական ճանապարհով Հայաստան էր մեկնել 6 հազար հոգի:

1920թ. սեպտեմբերին սկսվեց թուրք-հայկական պատերազմը: Թուրքական զորքերի առաջխաղացումը ստիպեց Հայաստանի կառավարությանը ժամանակավորապես դադարեցնել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների ներգաղթը: Այդ նպատակով հոկտեմբերի 6-ին Ս. Բեկզադայանը Ցենսրելվակի ներկայացուցիչ Իսախանյանին հեռագրով խնդրում է դադարեցնել գաղթականների հետագա տարհանումը⁴⁵⁰: Հ. Տեր-Գևորգյանը տեղե-

⁴⁴⁸ Նույն տեղում, գ. 10, թ. 38:

⁴⁴⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 37:

⁴⁵⁰ Տե՛ս նույն տեղում:

կանալով Տ. Բեկզադյանի վերոհիշյալ հրահանգին՝ դադարեցրեց Ռազմավիրական ճանապարհով գաղթականների ուղարկումը⁴⁵¹:

Հոկտեմբերի 11-ին Վրաստանում և Հյուսիսային Կովկասում Հայաստանի Հանրապետության Խնամատարության և աշխատանքի նախարարության ներկայացուցիչ Դ. Դավիթխանյանը Շ. Սառիկյանին հրահանգում է առժամանակ դադարեցնել Վլադիկավկազից գաղթականների հոսքը⁴⁵²:

Փաստորեն հոկտեմբերի 11-ից հայերի հոսքը Ռազմավիրական ճանապարհով դադարեցվեց: Վլադիկավկազում մնացած մոտ 6.000 գաղթականների դրությունը ծանր էր: Նրանք, վաճառելով իրենց վերջին իրերը, Սցխեթ հասնելու համար սայլեր էին վարձել, սակայն հայրենադարձության դադարեցման հետևանքով հարկադրված էին մնալ իրենց տեղերում, ապրել բաց երկնքի տակ⁴⁵³: Տենտրեվակի տեղական բաժանմունքը նյութապես աջակցեց գաղթականներին, սակայն բոլորի կարիքները բավարարելու համար այդ օգնությունը բավարար չէր: Գաղթականների ծանր դրությունը ստիպեց Թերեքի հյուպատոսի պաշտոնակատար Շ. Տեր-Գևորգյանին հոկտեմբերի 11-ից ուղիղ գծով պարբերաբար կապվել Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների հետ՝ խնդրելով նրանց թույլատրել Վլադիկավկազում մնացած գաղթականների տեղափոխությունը Հայաստան⁴⁵⁴: Հոկտեմբերի 14-ին Վլադիկավկազում տեղի ունեցավ քաղաքի հայ գաղթականների ժողովը, որի մասնակիցները կրկին խնդրեցին Թերեքի հյուպա-

⁴⁵¹ Տե՛ս նույն տեղում, թ. 37-39:

⁴⁵² Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 65:

⁴⁵³ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 37, գ. 15, թ. 66:

⁴⁵⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 37:

տոսի պաշտոնակատարին դիմել Հայաստանի կառավարությանը իրենց՝ 7-8 հազար գաղթականի, ներգաղթը Հայաստան թույլատրելու խնդրանքով⁴⁵⁵: Հ. Տեր-Փետրոսյանը հոկտեմբերի 19-ին ուղիղ զծով կապվեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատակից Մելիք-Արամյանի հետ և ներկայացրեց Վլադիկավկազի գաղթականների խնդրանքը, որին Մելիք-Արամյանը պատասխանեց, որ Հայաստանի կառավարությունը Կարսում ընթացող ռազմական գործողությունների պատճառով կտրականապես արգելել է գաղթականների մուտքը հանրապետություն⁴⁵⁶:

Հոկտեմբերի 26-ին Հայաստանից վերադարձավ Հ. Սառիկյանը և ստանձնեց իր պաշտոնը⁴⁵⁷: Կարծում ենք, որ Հայաստանում եղած ժամանակ նրան հաջողվել էր Հայաստանի կառավարությունից ստանալ Վլադիկավկազում մնացած գաղթականների ներգաղթի թույլտվությունը:

Հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ, մի կողմից՝ Հ. Սառիկյանի ու Ցենտրեվակի լիազոր Նարիման Տեր-Ղազարյանի⁴⁵⁸ և, մյուս կողմից՝ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության փոխտնօրեն Մելիք-Քարամյանի ուղիղ զծով խոսակցությունը: Կողմերը քննարկեցին Վլադիկավկազի 4.000 գաղթականների, որոնց մի մասը Ախալցխայի և Ախալքալաքի բնակիչներ էին, հայրենիք վերադարձնելու պայմանները: Որոշվեց հոկտեմբերի 28-ից սկսել գաղթականների տարահանումը, որոնց մի մասը պետք է մնար

⁴⁵⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 66:

⁴⁵⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 39:

⁴⁵⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 192:

⁴⁵⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 37:

Վրաստանում⁴⁵⁹: Հոկտեմբերի 27-ին Վլադիկավկազի հայկական հյուպատոսարանը խնդրեց Կովկասում Ցենտրեվակի լիազոր Իսախանյանին ձեռնարկել բոլոր միջոցները Ռազմավիրական ճանապարհով հայ գաղթականների տարհանումը վերսկսելու համար⁴⁶⁰: Կովկասում Ցենտրեվակի հատուկ լիազորը անմիջապես սկսեց գաղթականների տարհանման գործը: Արդեն նոյեմբերի 2-ին նա Թերեքի հայկական հյուպատոսին ուղարկեց տարհանման ենթակա Արմավիրի երրորդ և Կավկասկի առաջին շարասյունների 3.419 գաղթականների ցուցակները⁴⁶¹: Նոյեմբերի 5-ին Կովկասում Ցենտրեվակի հատուկ լիազորը Ս. Սառիկյանին ուղարկեց Արմավիրի երկրորդ շարասյան (1.319 գաղթական) ցուցակը⁴⁶²: Հ. Սառիկյանը այդ ցուցակները անմիջապես ուղարկեց Վլադիկավկազի վրաց հյուպատոսին՝ խնդրելով դրանք կնքել⁴⁶³: Ռազմավիրական ճանապարհով Հայաստան անցնելու վերաբերյալ տեղեկություններ ստանալու ակնկալիքով նոյեմբերի 4-ին Թերեքի հայկական հյուպատոսին դիմեց Բաքվում գտնվող 100 հոգիանոց գաղթականների խմբի լիազոր Ջարգարյանցը⁴⁶⁴: Նոյեմբերի 8-ին Հ.Սառիկյանին դիմեց Հայաստանի իշխանության կողմից Դոնի ներգաղթի լիազոր նշանակված Բագրատ Տոնյանը: Նա Ցենտրեվակի և հայկական գործերի կոմիսարիատի աջակցությամբ փորձում էր կազմակերպել Դոնի շրջանի հայության ներգաղթը Հայաստան և վերոհիշյալ նամակով Հ.Սառիկյանից

⁴⁵⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 43:

⁴⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 191:

⁴⁶¹ Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 70:

⁴⁶² Տե՛ս նույն տեղում, թ.12:

⁴⁶³ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ.204:

⁴⁶⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ.45:

փորձում էր տեղեկություններ ստանալ այդ գաղթականներին Վլադիկավկազ տեղափոխելու հնարավորության մասին⁴⁶⁵:

Արխիվային նյութերում 1920թ. նոյեմբերին Վլադիկավկազից Վրաստան անցած գաղթականների թվաքանակի վերաբերյալ պահպանվել է միայն մի հիշատակում, որի համաձայն նոյեմբերի 3-ի դրությամբ Կազբեկից Մցխեթ էր հասել գաղթականների 1.200 հոգանոց շարասյունը⁴⁶⁶: Նոյեմբերի 6 ին վրաց հյուպատոսը Հ. Սառիկյանին տեղեկացրել էր տեղացած առաջին ձյան հետևանքով Ռազմավիրական ճանապարհի փակվելու մասին: Նույն օրը Թերեքում Հայաստանի Հանրապետության հյուպատոսը հեռագրում է Թերչոեզելվալի (Թերեքի տարհանման արտակարգ հանձնաժողովի) նախագահին՝ խնդրելով դադարեցնել գաղթականների տարհանումը⁴⁶⁷: Նոյեմբերի 9-ին Տ.Բեկզառյանը Հ.Սառիկյանին և Իսախանյանին գրում է, որ թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը գրավելու հետևանքով Հայաստանի և Վրաստանի սահմանը փակվել է և կարգադրում է դադարեցնել գաղթականների հետագա ուղարկումը⁴⁶⁸: Նոյեմբերի 15-ին ՀՀ ԱԳ նախարարին ուղարկած զեկույցում Հ. Սառիկյանը գրում է. «Սակայն որքան եղավ նրա (գաղթականության - Ս.Ս.) սարսափն ու հուսահատությունը, երբ ամսի 9 և 10 թվերին քաղաքիս վրաց հյուպատոսը մի կողմից, Խորհրդային Ռուսաստանի գաղթականության ներկայացուցիչ Զալխսկին մյուս կողմից կտրական հայտարարություն արին Ռազմավիրական ճանապարհը հայ գաղթականության համար նորից փակված լինելու մասին: Իր ունեցած-

⁴⁶⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 76:

⁴⁶⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 38:

⁴⁶⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 205:

⁴⁶⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 46:

չունեցածը ծախսած, սայլեր վարձած, սոված, ծարավ բազմության համար ավելի ծանր, շշմեցնող հարված լինել չէր կարող»⁴⁶⁹:

Եթե ոչ նոյեմբերի 6-ին, ապա արդեն նոյեմբերի 9-ին Վլադիկավկազում մնացած գաղթականների հոսքը Ռազմավիրական ճանապարհով դադարեց: 1920թ. նոյեմբերի 17-ին Մոսկվայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին ուղղված զեկույցում Հ.Մառիկյանը գրում է. «Կարևոր են համարում զեկույցել Ձեզ, որ Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի զանազան վայրերից մոտ 12 հազար գաղթական հայեր օգոստոս ամսից եկել, խռնվել են Վլադիկավկազում: Այդ բազմության մոտ կեսը կարողացավ անցնել հայրենիք, իսկ մոտ 6000 հոգի այժմ կուտակված Վլադիկավկազում (ընդգծումը մերն է - Ս.Մ.) Կրաստանի սահմանը հայ գաղթականության առաջ փակված լինելու պատճառով սոսկալի օրեր է անցնում: Նրանց մեծ մասը բառի բուն մտքով բացօթյա է, անհաց, անվառելիք: Իմ անձնական դիմումին Տեռդագեվակ-ի կառավարիչ ընկեր Պոպովը հայտնեց, որ հաց չունենալու պատճառով ինքը գաղթականությանը հաց տալու հնարավորություն չունի, կտա, երբ ինքը կստանա Գորպրոդկովից: 600-ից ավել որբեր 10 օր է կերակրվում են սրա-նրա փշրանքներով: Պարոն ներկայացուցիչ, մեր երկրի այս մնացորդները կկորչեն, թե շուտափույթ միջոցներ չառնեն բարելավելու ոչ միայն Վլադիկավկազի, այլ ամբողջ Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների դրությունը, որոնց թիվը 45-50 հազարից անցնում է (ընդգծումը մերն է - Ս.Մ.)»⁴⁷⁰:

Փաստորեն Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ռազմավիրական ճանապարհով Հա-

⁴⁶⁹ նույն տեղում, գ. 10, թ. 40:

⁴⁷⁰ նույն տեղում, թ.45:

յաստանի՝ Հանրապետություն մեկնեց մոտ 6.000 գաղթական: 1920թ. կեսերին հայրենիք կարողացան վերադառնալ նաև 1920թ. հունվարից Նովոռոսիյսկում մնացած հայ գաղթականները:

1920թ. հուլիսի 16-ին Նովոռոսիյսկի հայկական գաղթականական կոմիտեի լիազոր Ղարաղոգյանը (Կարակոզով), ապա հուլիսի 19-ին Ա. Տոնյանը Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահին ուղղած նամակներում խնդրում էին միջոցներ ձեռնարկել Նովոռոսիյսկի գաղթականների ներգաղթը Հայաստան շարունակելու համար: Իրենց նամակներում Ղարաղոգյանը և Տոնյանը խնդրում էին Հյուսիսային Կովկաս ուղարկել լայն լիազորություններով օժտված պատվիրակություն, որը պետք է կազմակերպեր գաղթականների խնամքի գործը, բանակցեր Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի հետ և նավ վարձեր Նովոռոսիյսկից հայ գաղթականներին Բաթում տեղափոխելու համար⁴⁷¹:

1920թ. հուլիսի 30-ին Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկգադյանին գրում է. «Ուղարկելով ընդ ամին Նովոռոսիյսկի հայկական գաղթական կոմիտեի լիազորի և մեր հիւպատոսի գեկուցումների պատճենները, խնդրում ենք հարկ եղած դիմումներն անել վրաց կառավարութեան և՛ Սովետական իշխանութեան Թիֆլիսի ներկայացուցչութեանը, որպեսզի Նովոռոսիյսկի շրջանի հայ գաղթականութիւնը անմիջապես իրաւունք ստանայ տեղափոխել Վրաստանի վրայով հայրենիք:

⁴⁷¹ Տե՛ս նույն տեղում, ֆ 200, ց.1, գ. 536, թ. 14-15:

Անհրաժեշտ դեպքում բարի եղեք դիմել մեր հիւպատոսներին Բաթում կամ Փոթի, աջակցել մեր լիազորին յատուկ մի նաւ վարձելու հայ գաղթականներին փոխադրելու համար»⁴⁷²:

Ա. Տոնյանը իր հուշերում, անդրադառնալով Նովոռոսիյսկի հայերի ներգաղթին, գրում է. «Շուտով Նովոռոսիյսկից Երևան եկան տեղի գաղթականների ներկայացուցիչները և կառավարութիւնից օժանդակութիւն խնդրեցին՝ հայրենիք վերադառնալու համար: Կառավարութիւնը դիմում կատարեց Ռուսաստանի ներկայացուցիչ Լեզրանին, որը պահանջեց Թիֆլիզ ուղարկել Հայաստանի ներկայացուցիչը՝ գաղթականների հարցը որոշելու համար: Կառավարութիւնը ինձ լիազօրեց գնալ Թիֆլիզ, իբրև Հայաստանի ներկայացուցիչ:

Թիֆլիսի սովետական միսիայում կայացավ երկուսի ժողովը՝ գաղթականներին Հայաստան փոխադրելու հարցը քննելու համար: Սովետների կողմից նշանակուած էր Տէր Գաբրիէլեանը, իսկ Հայաստանի կողմից՝ ես: Տէր Գաբրիէլեանը խնդրեց ինձ Ռուսաստանում գտնուող գաղթականներին Հայաստան փոխադրելու համար մի արձանագրութիւն պատրաստել, որն ինքը կը ստորագրի: Սիրով կատարեցի նրա խնդիրքը: Սովետները թույլատրեցին հայ գաղթականներին Նովոռոսիյսկից ազատ փոխադրել Բաթում: Ես ստիպուած էի Բաթումում երկու ամիս մնալ, ընդունել գաղթականներին և ճանապարհել հայրենիք: Գործս վերջացնելուց յետոյ կրկին ճանապարհուեցի Երևան»⁴⁷³: Նովոռոսիյսկ-Բաթում ուղղությամբ գաղթականների ներգաղթը

⁴⁷² Նույն տեղում, թ. 18:

⁴⁷³ Տօնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը «Հայրենիք», Բոստոն, 1964, հոկտեմբեր, N 10, էջ 68:

իրականացվեց 1920թ. հուլիս-օգոստոս ամիսներին⁴⁷⁴: Վերադարձող գաղթականների գույքը վրաց պաշտոնյաների չարաշահումներից պաշտպանելու նպատակով ցուցակագրվեց Նովոռոսիյակում և Բաթումում տրվեց վրաց իշխանությունների հաստատմանը⁴⁷⁵: 1920թ. մայիս-հունիս ամիսներին Նովոռոսիյակում մնացած 5.000 հայ գաղթականները հուլիս-օգոստոս ամիսներին մեկնեցին Հայաստան:

Փաստորեն, 1920թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Հյուսիսային Կովկասից Ռազմավիրական ճանապարհով և Նովոռոսիյսկից նավերով Հայաստան գնաց 11.000 գաղթական:

1920թ. վերջին Հյուսիսային Կովկասում մնացած գաղթականների թվաքանակը ստանալու համար կատարվել է հետևյալ հաշվարկը: 1920թ. մայիս-հունիս ամիսներին երկրամասում եղած գաղթականների նվազագույն թվից (49.400) հանենք 1920թ. հունիս-նոյեմբեր ամիսներին երկրամասից հեռացած գաղթականների մոտավոր թիվը (11.000): Արդյունքում կստացվի 38.400, որն էլ 1920թ. վերջին Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների մոտավոր թվաքանակն է:

Այսպիսով Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի կառավարության ջանքերով, երկրամասի գաղթականները սկսեցին վերադառնալ Հայաստան:

Հայ-վրացական բանակցությունների միջոցով հնարավոր եղավ կարգավորել Վլադիկավկազում կուտակվող հայ գաղթականներին վրացական տարածքով տեղափոխելու խնդիրը:

⁴⁷⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 536, թ. 23, Տոնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», Բոստոն, 1964, հոկտեմբեր, N10 էջ 68:

⁴⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 536, թ. 22:

1920թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Հյուսիսային Կովկասից Ռազմավիրական ճանապարհով և Նովոռուսիյսկից նավերով Հայաստան հեռացավ մոտ 11.000 գաղթական:

Հյուսիսային Կովկասում մնացած հայ գաղթականության մի հատվածը հնաբնակ հայերի և խորհրդային կառույցների օգնությամբ կարողացավ աշխատանք գտնել և սկսել իր նոր կյանքը նոր հայրենիք դարձած Հյուսիսային Կովկասում: Գաղթականների մյուս հատվածը շարունակեց իր չարքաշ կյանքը՝ ապրելով լքված գորանոցներում, ամբարներում, նկուղներում⁴⁷⁶:

⁴⁷⁶ Տե՛ս Արмяне Ставрополя и Терекa, под общей редакцией канд. ист. наук. В. Акоюна, Пятигорск с. 134-135:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1918թ. թուրքական զորքերի՝ Անդրկովկաս ներխուժելու նախօրեին Հյուսիսային Կովկասի հայության թիվը 100 հազար էր: Այս զանգվածը պայմանական խմբերի բաժանելով՝ հնարավոր եղավ տարանջատել երկրամասի 70 հազար հնաբնակ հայերին 1915-1917թթ. Հյուսիսային Կովկաս եկած 30 հազար գաղթականներից:
- Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի առաջին ամիսներից Հյուսիսային Կովկասի հայերը ակտիվորեն մասնակցեցին երկրամասի քաղաքական գործընթացներին: Հյուսիսային Կովկասի հայ բուրժուազիայի, առևտրականների և արդյունաբերողների մեծ մասն աջակցեց ոչ խորհրդային ուժերին, իսկ հայ բանվորների և հողագուրկ գյուղացիների մեծ մասը՝ խորհրդային իշխանությանը: Հազարավոր հայեր մտան երկրամասի խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների բանակները:
- 1918թ. առաջին ամիսներին Հյուսիսային Կովկասի խորհրդային իշխանության պահանջով երկրամասի հայոց ազգային խորհուրդները վերանվանվեցին հայ ժողովրդական հեղափոխական կոմիտեներ, և նոր ընտրությունների միջոցով նրանց կազմը համալրվեց բոլշևիկյան տարրերով: Չնայած վերոհիշյալ փոփոխությանը՝ դաշնակցական գործիչները չհավածվեցին և շարունակեցին իրենց գործունեությունը նորակազմ հայկական կոմիտեներում:

- 1918թ. թուրքական արշավանքի հետևանքով Անդրկովկասում բնակվող և ապաստանած հայերի մի մասը, խույս տալով կոտորածներից, հեռացավ Հյուսիսային Կովկաս: Նրանց գաղթը սկսվեց 1918թ. մայիսից, երբ թուրքական զորքերը ներխուժեցին Թիֆլիսի և Երևանի նահանգներ և շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Այդ ժամանակաշրջանում Ռազմավիրական ճանապարհով, Փոթիից և Բաքվից՝ նավերով Հյուսիսային Կովկաս գնացին 124-127 հազար հայ գաղթականներ: Նրանցից մոտ 30 հազարը արևմտահայ էին, 40 հազարը՝ Բաքվի նահանգի հայեր, 54-57 հազարը՝ Կարսի մարզի, Երևանի, Թիֆլիսի նահանգների, Բաթումի և Սուխումի շրջանների հայ բնակչությունն էր:

1918թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին թուրքական զորքերը ներխուժեցին Դաղստան, որի հետևանքով առնվազն 13 հազար հայ գաղթական հեռացավ Հյուսիսային Կովկասից և նրանց թիվը 124-127 հազարից իջավ 111-114 հազարի:

- Եթե չլիներ Հյուսիսային Կովկասի հայկական ազգային կազմակերպությունների օգնությունը, ապա 1918թ. ընթացքում երկրամաս եկած հայ գաղթականների զգալի մասը գոհ կգնար քաղաքացիական կոռիվներին, սովին և տարատեսակ հիվանդություններին: Հյուսիսային Կովկասի հայկական կազմակերպություններից առավել ակտիվ էր գործում Վլադիկավկազի հայկական կոմիտեն, որը տեղի խորհրդային իշխանության աջակցությամբ 1918թ. հունիսին Վլադիկավկազում և հարակից շրջաններում կուտակված տասնյակ հազարավոր գաղթականների տեղափոխեց Հյուսիսային Կովկասի ավելի ապահով շրջաններ:

- 1918թ. կեսերին Անդրկովկասից և Մոսկվայից Հյուսիսային Կովկաս եկած հայ բոլշևիկները լուծարեցին խորհրդային իշխանության տարածքում գործող հայկական ազգային կազմակերպությունները, իսկ դրանց գումարները և գույքը բռնագրավեցին: Լուծարված կազմակերպությունների փոխարեն Հյուսիսային Կովկասի հայաշատ շրջաններում բացվեցին հայկական գործերի կոմիսարիատի բաժանմունքներ, որոնք խորհրդային իշխանության աջակցությամբ զգալիորեն օգնեցին երկրամասում ապաստանած հայ գաղթականներին:

- Հայաստանի Հանրապետության գոյության առաջին ամիսներին երկրում ստեղծված ներքին և արտաքին ծանր կացության հետևանքով Հայաստանի Հանրապետության իշխանությունները չկարողացան աջակցել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին:

1918թ. կեսերից Հյուսիսային Կովկասում ռազմական առավելության հասան ոչ խորհրդային պետական կազմավորումները, որոնք 1918թ. վերջին գրավեցին երկրամասի մեծ մասը: Հյուսիսային Կովկասում քաղաքական իրադրության փոփոխման հետևանքով փոխվեց նաև երկրամասի հայերի դրությունը:

- Ռուսաստանի հարավի կազակների կառավարությունները, ցանկանալով ազատվել քաղաքներում և գյուղերում ապաստանած և զանազան հիվանդությունների տարածման աղբյուր հանդիսացող հազարավոր գաղթականներից, զրկեցին նրանց խորհրդային իշխանության օրոք տրամադրվող նպաստից: Դրա հետևանքով գաղթականները հայտնվեցին է՛լ ավելի ծանր կացության մեջ: Նրանց մի մասը օրվա հաց վաստակելու համար զբաղվեց առևտրով:

- Եթե Հյուսիսային Կովկասի կազակների կառավարությունները գաղթականներին վտարում էին իրենց տարածքից, ապա Կամավորական բանակի հրամանատարությունը գաղթականներին, հնաբնակ հայերին և մասնավորապես արևմտյան ռազմաճակատից և գերությունից հայրենիք վերադարձող հազարավոր հայ ռազմիկներին զորակոչում էր Կամավորական բանակ: Մինչև 1919թ. սկիզբը երկրամասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների բացակայության հետևանքով Ռուսաստանի հարավի զինված ուժերը համալրվեցին հազարավոր հայ ռազմիկներով: Կամավորական բանակը հայ ռազմիկներից կազմված առանձին ջոկատները օգտագործեց Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի դեմ, ինչը բացասական հետևանքներ ունեցավ ինչպես երկրամասի հայության, այնպես էլ Հայաստանի կառավարության համար:

Մանրամասն ուսումնասիրվել է Հյուսիսային Կովկասում ոչ խորհրդային պետական կազմավորումների շրջանում հայ գաղթականների հայրենադարձության պատմությունը:

- Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում երկրի ներքին և արտաքին ծանր կացության, Վրաստանի և Ադրբեջանի հակահայկական քաղաքականության հետևանքով Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականներից և ռազմագերիներից Անդրկովկաս վերադարձան միայն մի քանի հազարը: Երկրամասում ապաստանած հայ գաղթականների հայրենադարձությունը հնարավոր եղավ կազմակերպել 1919թ մայիսից, երբ փոքր-ինչ բարելավվեց Հայաստանի Հանրապետության քաղաքական և տնտեսական դրությունը: Միայն այդ ժամանակ Հա-

յաստանի կառավարությունը հրահանգեց Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի հարավի զինված ուժերի զլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչությանը և երկրամասի հայկական կազմակերպություններին, որ կազմակերպեն հայերի տեղափոխությունը Հայաստան:

1919թ. մայիս-հուլիս ամիսներին Հյուսիսային Կովկասի հայկական ազգային կազմակերպությունների, Ռուսաստանի հարսովի զինված ուժերի զլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչության, Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների և Անդրկովկասում բրիտանական ուժերի հրամանատարության աջակցությամբ կազմակերպվեց երկրամասի մոտ 50 հազար հայերի հայրենադարձությունը (Հայաստան, մասամբ՝ Վրաստան և Ադրբեջան):

1919թ. հուլիսի վերջից Հայաստանի կառավարությունը, երկրում սկսված մահմեդականների ապստամբությունների հետևանքով, այլևս չկարողացավ զբաղվել Նովոռոսիյսկից Բաթում ժամանող հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու խնդիրներով: Հետևանքն այն եղավ, որ հայ գաղթականները սկսեցին կուտակվել Բաթումում՝ առաջացնելով անզլիացիների դժգոհությունը: Գաղթականների հետագա հոսքը Բաթում կասեցնելու նպատակով 1919թ. հուլիսի վերջին Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարությունը արգելեց նրանց մուտքը քաղաք, ինչի հետևանքով Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների տեղաշարժը Նովոռոսիյսկ-Բաթում ուղղությամբ դադարեց:

Հյուսիսային Կովկասում մնացած հայ գաղթականներին Կամավորական բանակ և կազակների զորքեր զորակոչվելու խնդիրը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչության շնորհիվ առժամանակ վերացավ:

- 1919թ. վերջին և 1920թ. սկզբին խորհրդային զորքերի ռազմական հաջողությունները, Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններում բռնկված ապստամբությունները և կազակների կառավարությունների դժգոհությունը հարկադրեցին Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարությանը համատարած զորակոչ սկսել, որը տարածվեց նաև Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների վրա: Հ. Սաղաթելյանի ջանքերով Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարությունը Անդրկովկասում ձևված և չզորակոչված հայերին Հայաստան գնալու և հայկական բանակում ծառայելու համար մինչև 1920թ. մարտի 10-ը ազատեց զորակոչից, իսկ Անդրկովկասում ձևված և արդեն ոչ խորհրդային պետական կազմավորումների զորքեր զորակոչված հայերին թույլատրեց ծառայությունը շարունակել Հայաստանի Հանրապետության բանակում:

Չնայած Հ. Սաղաթելյանին հաջողվեց հետաձգել հայ գաղթականների զորակոչը, սակայն երկրամասի որոշ շրջաններում տեղական հրամանատարների անբարյացակամ վերաբերմունքի հետևանքով գաղթականները զորակոչվեցին ոչ խորհրդային պետական կազմավորումների զորքեր:

1920թ. հունվար-մարտ ամիսներին Հ. Սաղաթելյանը, երկրամասի հյուսիսայինները և գաղթականների հարցերով զբաղ-

վող հայկական կազմակերպությունները Հյուսիսային Կովկասից Հայաստանի Հանրապետություն տեղափոխեցին 3-4 հազար հայ գաղթական և զինվոր:

- 1920թ. գարնանը Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո երկրամասի հայերի դրությունը փոխվեց. Մոսկվայի կարգադրությամբ փակվեցին երկրամասում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինները: Լուծարվեցին նաև հայկական ազգային կազմակերպությունները:

- Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Հայաստանի կառավարության և խորհրդային Ռուսաստանի ջանքերով կազմակերպվեց երկրամասի և մասամբ Ռուսաստանի այլ շրջանների հայ գաղթականների ներգաղթը Հայաստան:

- Հայ-վրացական բանակցությունների արդյունքում հնարավոր եղավ հայ գաղթականներին Հայաստան տեղափոխել Վրաստանի տարածքով:

- 1920թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Հյուսիսային Կովկասից Ռազմավիրական ճանապարհով և Նովոռոսիյսկից՝ նավերով, Հայաստան մեկնեցին մոտ 11.000 հայ գաղթական:

Այսպիսով, 1918թ. թուրքական արշավանքի հետևանքով Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս եկան 124-127 հազար հայ գաղթականներ: Այս զանգվածից մոտ 13 հազարը 1918թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հյուսիսային Կովկասից հեռացավ Կասպից ծովի այլ ափամերձ շրջաններ: Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականներից 67-69 հազարը Հյուսիսային Կովկասում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և

հյուպատոսական մարմինների, ՌԿԽԸՀԿ-ի և հայկական կազմակերպությունների ջանքերով, խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների և Անդրկովկասում բրիտանական հրամանատարության աջակցությամբ 1918-1920 թթ. ընթացքում (3-4 հազարը 1918թ. օգոստոս-դեկտեմբերին, 50 հազարը 1919թ. մայիս-հուլիսին, 3-4 հազարը 1920թ. փետրվար-մարտին, 11 հազարը 1920թ. մայիս-նոյեմբերին) անցավ Անդրկովկաս՝ հիմնականում Հայաստանի Հանրապետություն: Ընդհանուր առմամբ 1918-1920 թթ. Հյուսիսային Կովկասից հեռացավ 80-82 հազար հայ գաղթական: Հազարավոր գաղթականներ մահացան սովից, տարատեսակ հիվանդություններից և քաղաքացիական կռիվների ժամանակ, որի հետևանքով 1920թ. վերջին Հյուսիսային Կովկասում մնացել էր մոտ 38.400 հայ գաղթական: Եթե այս թվին գումարենք 1915-1917 թթ. երկրամաս եկած 30 հազար հայ գաղթականներին և 70 հազար հնաբնակ հայերին, կստացվի, որ 1920թ. վերջին Հյուսիսային Կովկասում հայերի թիվը շուրջ 138 հազար էր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային սկզբնաղբյուրներ

ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1 Ֆ. 199 (Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդ), ց. 1, գ. 53:

1.2 Ֆ. 200 (Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն), ց. 1, զգ. 6, 7, 73¹, 82, 100, 143, 150¹, 151, 155, 158, 164, 169, 237, 291¹, 295, 333, 342, 372, 385, 409, 465, 469, 487, 536, 551, 562, 564, 594, 607, 613, 628, ց. 2, զգ. 44, 75:

1.3 Ֆ. 201 (Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործերի նախարարություն), ց. 1, գ. 36:

1.4 Ֆ. 205 (Հայաստանի առաջին հանրապետության խնամատարության և աշխատանքի նախարարություն և Երևանի նահանգի աշխատանքի կոմիտե), ց. 1, զգ. 528, 544:

1.5 Ֆ. 275 (Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ), ց. 1, զգ. 2, 5, 9, 10, 11, ց. 3, գ. 4, ց. 4, զգ. 4, 5, 7, 9, 10, 13, 15, 16, ց. 5, զգ. 12, 14, 30, 46, 61, 67, 125, 139, 140, 236:

բ) Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)

1.6 Հակոբ Մառիկյանի ֆոնդ, գ. 4:

զ) Государственный архив Российской Федерации (ГАРФ)

1.7 Ф. 446, оп. 2, д. 23.

1.8 Ф. 1318, оп. 1, дд. 413, 418.

1.9 Ф. 5351, оп. 1, д. 26.

դ) Государственный архив Краснодарского края (ГАКК)

1.10 Ф. Р-7, оп. 1, д. 572.

1.11 Ф. Р-11, оп. 2, д. 100, оп. 3, д. 284.

2. Տպագիր սկզբնաղբյուրներ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

/Հայերեն/

2.1 Հայերի կոտորածները Բարձի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան, Երևան, տպ. Լուսաս. 2003, 523 էջ:

/Ռուսերեն/

2.2 Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. Сборник документов. - Ереван: "Айпетрат", 1957. - 682 с.

2.3 Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. - Тифлис: Тип. Прав-ва Груз. Респ., 1919. - 512 с.

3. Ուսումնասիրություններ

/Հայերեն/

3.1 Աբեյլան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում (1 հունվարի

1914- 1930 հունվարի 1), Երևան, Պետական հրատարակչություն, 1930, 156 էջ:

3.2 Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., ատենախոսություն, Է.00.01 – “Հայոց պատմություն” մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 2009, 208 էջ:

3.3 Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, Պատմ. ինստ., 2011, 221 էջ:

3.4 Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 1958, 155 էջ:

3.5 Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921 թթ., Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1966, 413 էջ:

3.6 Ամիրյան Գ., Ռոստոմի հետ, «Հայրենիք», Բոստոն, 1960, ապրիլ, N 4 (410), էջ 4-21:

3.7 Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Երևան, «ՀՄՄՀ ԳԱ» հրատ., 1985, 495 էջ:

3.8 Բերբերեան Ռ., Նոր-Նախիջևանի անցեալն ու ներկան, «ՎԷՄ», Փարիզ, 1934, հունվար-փետրվար, N 1, էջ 1-16:

3.9 Բերբերեան Ռ., Երկու դարերի շեմքին, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, օգոստոս, N 10 (214), էջ 64-82, հոկտեմբեր, N 12 (216), էջ 81-93:

3.10 Գսլոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999, 539 էջ:

3.11 Դադայան Խ., Բաքուն և հայերը, Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2006, 241 էջ:

3.12 Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ., (շարժը, կացությունը, թվակազմը), մասնագիտությունը Հայոց պատմություն-Է.00.01, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996, 162 էջ:

3.13 Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Հյուսիսային Կովկասում: Պատմա-ազգագրական աշխատություն, գիրք երկրորդ, Երևան, «Նահապետ», 2001, 401 էջ:

3.14 Դարբինեան Ռ., Կեանքիս գրքեն (փշրանքներ իմ յուշերեն), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1959, հոկտեմբեր, N 10 (404), էջ 16-25, 1960, օգոստոս, N8 (414), էջ 25-34:

3.15 Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտեմբեր-1920թ. ապրիլ), Երևան, «Տիգրան Մեծ», 2002, 266 էջ:

3.16 Իշխանյան Բ., Բագուի Մեծ սարսափները: Անկետային ուսումն. սեպտեմբերյան անցքերի 1918թ., Թիֆլիս, տպարան «Մամուլ», 1920, 188 էջ:

3.17 Լազեան Գ., Հայաստանը և Հայ դատը Հայ և ռուս հարաբերություններու լոյսին տակ, Երևան, «Ադանա» հրատարակչություն, 1991, 435 էջ:

3.18 Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, «Նոր օր», 1930, 367 էջ:

3.19 Խոյլեան Ռ., 1918 եւ Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1966, մարտ, N 3, էջ 62-72:

3.20 Խոջաբէկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժները, XIX-XX դարերում, XXI դարի: շեմին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2002, 527 էջ:

3.21 Խուրշուդյան Լ., Ստեփան Շահումյան. պետական և պարտիական գործունեությունը 1917-1918 թվականներին, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1959, 343 էջ:

3.22 Կարապետյան Մ., Հայազգի զինվորականները ռուսական բանակում, XIX դարի վերջ – XX դարի սկիզբ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2008, 159 էջ:

3.23 Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արեւմտահայությունը (1914-1916), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1967, 599 էջ:

3.24 Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2005, 364 էջ:

3.25 Հակոբյան Հ., Տարազիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական հիմքերը, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2002, 414 էջ:

3.26 Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան-Պէյրուս, Համազգայինի Վահէ Սէլթեան տպարան, 2007, 156 էջ:

3.27 Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920թ.), հատոր առաջին, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, իմբ.՝ Վ. Միքայելյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ, 2003, 531 էջ:

3.28 Հայ ժողովրդի պատմություն, հատոր VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981, 1050 էջ:

3.29 Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2003, 732 էջ:

3.30 Հայրապետյան Վ., Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918թ. հունիս – 1919թ. մայիս), Է.00.001 “Հայոց պատմություն” մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, 173 էջ:

3.31 Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975, 295 էջ:

3.32 Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985, 475 էջ:

3.33 Մելքոնյան Ա., Ջավախք, պատմության ուրվագծեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999, 103 էջ:

3.34 Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, «Ջանգակ-97», Երևան, 2003, 544 էջ:

3.35 Մինասյան Ս., Հայության գաղթը Հյուսիսային Կովկաս, «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2009, N 10, էջ 237-244:

3.36 Մինասյան Ա., Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության ներգաղթը Հայաստան (1918-1920 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2007, N 1-2 (109-110), էջ 185-194:

3.37 Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ, (1918-1920թթ), Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 416 էջ:

3.38 Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918թ. հունիս-նոյեմբեր), Երևան, Երևանի Համալսարանի հրատարակչություն, 2004, 184 էջ:

3.39 Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006, 416 էջ:

3.40 Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002, 160 էջ:

3.41 Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1964, 538 էջ:

3.42 Սիմոնյան Ռ., Հակոբ Սառիկյան: Ֆիդային, մանկավարժը, դեսպանորդը, գրողը և թարգմանիչը / Ռ.Սիմոնյան, Երևան, 2013 – 56 էջ:

3.43 Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), ատենախոսություն, է.00.01 – “Հայոց պատմություն” մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան, 2009, 488 էջ:

3.44 Ստեփանյան Գ., Բաքվի անկումը և հայերի գաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ), «Իրան-նամե», 2000, հատոր 35, էջ 58-62:

3.45 Վրացեան Ս., Անկախ եւ միացեալ Հայաստան, Բօստօն, տպարան «Հայրենիք», 1920, 64 էջ:

3.46 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, 704 էջ:

3.47 Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, տպարան «Մշակ», 1962, 381 էջ:

3.48 Տօնեան Ա., Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», Բոստոն, 1964, սեպտեմբեր, N 9, էջ 48-57, հոկտեմբեր, N 10 էջ 68-78:

3.49 Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեիկ Յարաբերութիւնների Ոլորտում (1917-1921), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչութիւն, 1997, 421 էջ:

/Ռուսերեն/

3.50 Ананян Ж., Хачатурян В., Армянские Общины России. – Ереван: “М. Варандян”, 1993. - 120 с.

3.51 Армяне Ставрополя и Терека / под общей редакцией канд. ист. наук. В. Акопяна, - Пятигорск: Государственное образовательное учреждение высшего профессионального образования "Пятигорский государственный лингвистический университет", Ставропольское региональное отделение "Союз армян России" 2007. - 264 с.

3.52 Арутюнян А., Первая мировая война и армянские беженцы (1914-1917 гг.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989. - 214 с.

3.53 Ачкасов В., Басов А., Сумин А. и др., Боевой путь Советского Военно-Морского Флота. – Москва: "Воениздат", 1988. - 607 с.

3.54 Багдасарян Р., История армянской общины Грозного (середина XIX – 1920г.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, специальность 1.00.01 – История армянского народа, Ереван, 1999. - 186 с.

3.55 Багдасарян Р., Торгово-экономическая деятельность армянского купечества на Тереке (XVIII – начало XX вв.), «Լրաբեր հիշարժակահան գիտությունների», 2001, 11-րդ-թիվ, № 2 (604), էջ 46-61:

3.56 Гражданская война и военная интервенция в СССР, энциклопедия / Глав. ред. С.С. Хромов. - Изд. 2-е. – Москва: "Советская энциклопедия" 1987. - 720 с.

3.57 Деникин А., Очерки Русской смуты, том второй, борьба генерала Корнилова, август 1917г. – апрель 1918г., том третий, Белое движение и борьба Добровольческой армии, май-октябрь 1918г. – Москва: "Айрис-пресс", 2005. - 733 с.

3.58 Деникин А., Очерки Русской смуты, том четвертый, том пятый, Вооруженные силы Юга России. – Москва: “Айрис-пресс”, 2005. - 831 с.

3.59 Карпов Н., Трагедия Белого Юга, 1920 год. – Москва: “Вече”, 2005. - 384 с.

3.60 Кратова Н., Формирование повстанческих отрядов на территории Кубано-Черноморской области в 1920–1922 гг., “Гуманитарная мысль Юга России”, региональный научный журнал. - Краснодар, 2006, N 1. – с. 117-129.

3.61 Мельгунов С., Красный террор в России 1918 – 1923. – Берлин: “Ватага”, 1924. - 312 с.

3.62 Минасян М., Армяне Причерноморья. – Ереван: “Айастан”, 1990. - 163 с.

3.63 Общероссийская и национальная идентичность. Материалы международной научно-практической конференции, 19-20 апреля 2012г. / Ответственный редактор В.З. Акопян. – Пятигорск: Пятигорский государственный лингвистический Университет, 2012. с. 524 с.

3.64 Ованесов Б., Отношение армянских общин Ставропольской губернии к Первой мировой войне (1914-1917 гг.), «Լրագրի հիշարժան զիտվթյունները», 2001, մայիս-օգոստոս, N 2 (604) , էջ 121-128:

3.65 Ованнисян Р., Международные отношения Республики Армения 1918-1920гг., Ереван: “Тигран Мец”, 2007. - 920 с.

3.66 Погосян Л., Армянские поселения Северного Кавказа (начало XVIIIв. – 1920г.), Специальность 07.00.08 –

История СССР, Диссертация на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 1990. - 396 с.

3.67 Рыбас С., Генерал Кутепов. - Москва: "Олма-пресс", 2000. - 350 с.

3.68 Симонян М., Армянская диаспора Северо-Западного Кавказа: формирование, конфессиональный облик, взаимоотношения с властью, общественными и религиозными объединениями (конец XVIII - конец XX века), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02, Краснодар, 2003. - 159 с.

3.69 Слободин В., Белое движение в годы гражданской войны в России (1917–1922 гг.). – Москва: "МЮИ МВД России", 1996. - 80 с.

3.70 Цуциев А., Атлас этнополитической истории Кавказа (1774-2004). – Москва: Издательство "Европа", 2006. - 128 с.

3.71 Шнайдер В., Советское нациестроительство на Северном Кавказе (1917 – конец 1950-х гг.): Закономерности и противоречия. – Армавир: "Редакционно-издательский центр АГПУ", 2007. - 416 с.

4. Մամուլ

/Հայերեն/

4.1 «Աշխատավոր», Թիֆլիս, 1918, օգոստոսի 6, N 100, սեպտեմբերի 15, N 133, հոկտեմբերի 16, N 157, հոկտեմբերի 30, N 169, նոյեմբերի 9:

4.2 «Ժողովուրդի ձայն», Թիֆլիս, 1918, նոյեմբերի 16, N 62, 1919, փետրվարի 26, N 43:

4.3 «Խորհրդային Հայաստան», Երևան, 1926, մարտի 26, N 72:

4.4 «Կարմիր աստղ», Եկատերինոդար, 1920, սեպտեմբերի 26, N 12, դեկտեմբերի 30, N 38:

4.5 «Սշակ», Թիֆլիս, 1919, փետրվարի 27, N 45, մարտի 1, N 46:

4.6 «Հորիզոն», Թիֆլիս, 1918, օգոստոսի 16, N 161, օգոստոսի 17, N 162, սեպտեմբերի 4, N 176, սեպտեմբերի 24, N 192, սեպտեմբերի 29, N 197, նոյեմբերի 1, N 224:

/Ռուսերեն/

4.7 «Борьба», Тифлис, 1918, օգոստոսի 4, N 135, օգոստոսի 8, N 138, օգոստոսի 13, N 142, 1919, մարտի 27, N 69, ապրիլի 13, N 83:

4.8 «Кавказское слово», Тифлис, 1918, նոյեմբերի 21, N 252:

1918թ. ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ
ՀՅՈՒՄԻՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Հավելված

199



- Գաղթական հայերի թիվը 1918-1920թթ. տասնամեկ է մի քանի հազարից մինչև մի քանի հազարի մըջ
- Գաղթական հայերի թիվը զերեքսունցը է 10 հազարը
- ▲ 1918թ. մայիս վերջին 40-50 հազար հայ գաղթականների շարժը Հյուսիսային Կովկաս
- ↑ Անդրկովկասից հայ գաղթականների Հյուսիսային Կովկաս անցնելու հիշատակալազրույթաները
- ! Հայերի զայրի և էրզրամասում երեսեց տեղադարձը

1919-1920թթ. Նովոռոսիյսկ-Բաթում ողորոթյամբ հայերի ներգաղթը Հայաստանի Հանրապետություն



1920թ. ամռան և աշնան ամիսներին Ռազմավիրական ճանապարհով հայերի ներգաղթը Հայաստան





Նովորոսիյսկի մոտակայքում ապաստանած հայ
գաղթականներ

Library of Congress, USA

LC-USZ62-98318 (b&w film copy neg.)

1



**Նովոռուսիյսկի մոտակայքում ապաստանած հայ
գաղթականներ**

Library of Congress, USA

LC-USZ62-130743



**Նովորոսիյսկի մոտակայքում ապաստանած հայ
գաղթականներ**

Library of Congress

LC-USZ62-130744

1



Ռուսաստանի Հարավի նավահանգիստներից մեկում
աշխատող հայեր

Library of Congress

LC-USZ62-96829 (b&w film copy neg.)



**Հյուսիսային Կովկասից ՀՀ վերադարձող հայ զինվորի
հավաստագիր**

ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 1, ք. 108:



Հակոբ քահանա Սարիկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. 1918Թ. ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ.....	7
1.1 Հյուսիսային Կովկասում հայերի թվաքանակը և դրությունը թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժելու նախօրեին	7
1.2 1918թ. թուրքական զորքերի արշավանքը Անդրկովկաս և հայ գաղթականների տեղաշարժը Հյուսիսային Կովկաս	20
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՂԱՇԱՐԺԸ.....	59
2.1 Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների դիրքորոշումը երկրամասի հայության նկատմամբ և հայկական կազմակերպությունների գործունեության աշխուժացումը	59
2.2 Հայրենադարձությունը (1918թ. նոյեմբեր – 1919թ. դեկտեմբեր).....	73
2.3 Երկրամասում բնակվող և ապաստանած հայության գորակոչի խնդիրը ու հայրենադարձությունը (1920թ. հունվար-մարտ)	114
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ	140

3.1 Իրադրությունը Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերում խորհրդային իշխանության առաջին ամիսներին	140
3.2 Հայ գաղթականների հայրենադարձության հետագա ընթացքը	155
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	179
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	187

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՄԲԱՏ ԱԼԲԵՐՏԻ

ՀԱՅԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ
1918-1920 ԹԹ.

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Բարթիկյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության՝ 21.04.2016 թ.
Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

1200

2000

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0612677

A π
105489